ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2020 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

Հաստատված է
Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի հոգաբարձուների
խորհրդի նիստում 29 հունվարի 2021թ.
արձանագրություն N 1/26

Խորհրդի նախագահ՝ Ա. Հարությունյան

_____

29 հունվարի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2020 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 6

ՀԱՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ 11

ՀԱՀՀ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ 12

ՀԱՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ 12

ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 12

«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 13

ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 14

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 15

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC) 15

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB) 16

Ի-ՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ 16

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 17

«ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ 17

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 18

«ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» (ՖՐՈՒՏԵՆԻԱ) 18

«ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ» (ԱԳՐԻՔԵՄՓ) 19

«ԳԻՆՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ԴՈՒԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ» 20

ABIONET. ՆՈՐԱՍՏԵՂԾ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ 21

ՀԱՀՀ-Ի ԵՎ ՄԱԿ-Ի ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՊՀԾ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 21

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖԹՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ 22

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՆԳՈՒՅՑ (ՀԱԲ) 23

ՀԱՀՀ-Ի, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ԵՊՀ) ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖՐԴՐԻԽ-ԷԲԵՐՏ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (FES) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 23

ՀԱՀՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 24

ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 26

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 28

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 29

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 57

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 58

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 76

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 79

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 85

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 85

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 88

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 90-ամյա հոբելյանի տարին էր: Այն սկսվեց լավատեսությամբ և համալսարանն ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի վերածելու վճռականությամբ: Բայց Հայաստանին և հայությանը պատուհասած աննախադեպ ծանր փորձությունները 2020-ին որոշակիորեն մթագնեցին տարվա ընթացքում եղած ձեռքբերումները: Սակայն հենց այդ ձեռքբերումներն են, որ, մասնավորապես, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պարագայում, լավատեսության հիմք են տալիս 2021-ը համարել վերականգնման ու առաջընթացի սկիզբ:

Անցյալ տարվա ընթացքում ՀԱԱՀ-ում շարունակվել են 2019-ին մեկնարկած զարգացումները թե՛ ուսումնական ծրագրերի հիմնափոխման, թե՛ համալսարանի գիտահետազոտական ստորաբաժանումների գործունեության նպատակայնության և թե՛ ուսանողների ու դասախոսների համար բազմաթիվ ենթակառույցների նորացման ու նորերի ստեղծման գործընթացի առումով:

2020 թ. ընթացքում Ագրարային համալսարանում շարք են մտել Ագրոթեք ինկուբատորը, ֆարմբոտ ռոբոտային համակարգով նորարարական ջերմատունը (որի առաջին բերքից բաժին է հանվել «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում բուժվող մարտիկներին), քիմիայի երկու լաբորատորիաները, Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիան, Հողային և ջրային ռեսուրսների կառավարման կենտրոնը, Սննդամթերքի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժնի լաբորատորիան, Սննդամթերքի որակի հսկման ուսումնական լաբորատորիան, բաց տարածքի ոճով համալսարանական երկու նորառոճ սրահները, Գնահատման և թեստավորման կենտրոնը: Տարեվերջին շշալցվեցին և հայրենական շուկա մուտք գործեցին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնում 2018-ին արտադրված, Ագրարային համալսարանի ուսանողների ձեռքի ու մտքի արգասիք «ՍԵՐՈՒՆԴ» կարմիր անապակ և «ՍԵՐՈՒՆԴ» հնացված կարմիր անապակ գինիները: Հարկ է նշել, որ վերջիններս իրենց տեսակով միակն են շուկայում որպես ուսանողական գինիներ և դրանց բարձր որակը հաստատվել է մի շարք մասնագիտական կույր համտեսների ժամանակ:

ՀԱԱՀ-ի համար հոբելյանական՝ 2020 թվականին նախատեսված էին համալսարանի 90-ամյակի տոնակատարության մի շարք միջոցառումներ, որոնց, ցավոք, վիճակված չէր իրականություն դառնալ համավարակի և այնուհետև Արցախյան Երկրորդ պատերազմի պատճառով: Այսուհանդերձ, օգոստոս ամսին համալսարանի պատկառելի պատվիրակության այցը Արցախի Հանրապետություն՝ «Տուր դը Արցախը», անմոռաց կմնա մասնակիցների կյանքում՝ որպես 90-ամյակի շրջանակում իրականացված փոքրաթիվ միջոցառումների թագն ու պսակը:

ՀԱԱՀ ռեկտորի ղեկավարած պատվիրակությունը խիստ հագեցած ու բովանդակալից մի քանի օրերի ընթացքում եղավ Շուշիի տեխնոլոգիական համալսարանում, ընդունելություն ունեցավ ԱՀ կրթության, գիտության և մշակույթի, գյուղատնտեսության նախարարություններում, քննարկվեցին համագործակցության խորացման մի շարք ուղղություններ՝ հաշվի առնելով նորարարական մոտեցումներն ու տեխնոլոգիական նորագույն ու հեռանկարային լուծումները:

«Տուր դը Արցախի» կարևոր մաս էին կազմում այցերն ագրոբիզնեսի ընկերություններ, մասնավորապես՝ Տող գյուղում գտնվող Դոմեն Ավետիսյան («Կատարո») գինե-

գործարան: Գինեգործարանի տակառներից մեկի վրա ագրարայինցիները թողեցին «Շնորհավոր ՀԱԱՀ-ի 90-ամյակ և կեցցե Կատարոն» մակագրությունը: Այդ տակառը, Հայաստանի ու Արցախի բրենդ դարձած Կատարո գինին, Ավետիսյանների գողտրիկ այգիները, Արցախի գինու փառատոնի անցկացման վայր և գինու միջազգային քարտեզի վրա հայտնված Տող գյուղն իր հարուստ պատմությամբ, ինչպես և Շուշիի տեխնոլոգիական համալսարանը, դժբախտաբար, մնացին թշնամու վերահսկողության գոտում...

2020 թ. Ագրարային համալսարանի, որպես գյուղատնտեսության ոլորտի զարգացման շարժիչ ուժի, դիրքերի ամրապնդման տարի էր, քանզի բարեփոխումները միտված են ոչ միայն արդիական մասնագիտական կրթության որակի արմատական փոփոխությանը, այլև առհասարակ գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտի զարգացմանը Հայաստանում: 2020 թ. ավարտում ենք բազմաբովանդակ նոր ծրագրերի ու նախագծերի պաշարով՝ կենսատեխնոլոգիական ինկուբատոր, ՀԱԱՀ-ի Ակունքի և Ոսկեհատի ուսումնափորձարարական տնտեսությունների հզորացում ու համալրում նորագույն տեխնոլոգիաներով, կաթնամթերքի վարպետաց դպրոցի հիմնում Բալահովիտում, ագրոճամբարի հիմնում ՀԱԱՀ-ի Աղավնաձորի հանգստյան տան տարածքում, միջազգային համագործակցության հետագա ընդլայնում և այլն: Երկրի համար կենսական կարևորություն ունեցող գյուղատնտեսության և կրթության բնագավառների զարգացման առաջնագծում իր առաքելությունը հաջողությամբ շարունակելու համար Ագրարային համալսարանն ունի բոլոր նախադրյալները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով ՀԱԱՀ-ում և մասնաճյուղերում ուսումնական գործընթացի արագ վերակազմակերպման խնդիր դրվեց: Բուհի՝ առցանց տիրույթում դասապրոցեսի անցկացման գործընթացի ինտեգրման ընթացքն իրականացվեց սահուն կերպով, քանի որ համապատասխան ստորաբաժանումների կողմից հեռավար ուսուցման գործիքակազմին տիրապետելու համար հմտորեն իրականացվեցին պրոֆեսորադասախոսական կազմի առցանց վերա-պատրաստումներ, մշակվեցին հեռավար ուսուցման մեթոդաբանական ուղեցույցներ, ընդլայնվեցին ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման e-Buh համակարգի և Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակի օգտագործման ծավալներն ու կիրառման հնարավորությունները:

Առցանց անցկացվել են 2500-ից ավելի ստուգարքներ և քննություններ, 4 ձևավորված խմբերի համար պետական քննություններ, 125 ձևավորված խմբերի համար դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններ:

2020-2021 ուսումնական տարում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ըստ ամբիոնների կողմից ներկայացված և գործող ուսումնական պլաններով ճշգրտված ծանրաբեռնվածությունների, սահմանված ժամկետների՝ առարկայական ծրագրերի բովանդակությանը և օրացուցային պլաններին համապատասխան՝ կիրառելով ուսուցման և հիբրիդային, և առկա, և հեռավար մոդելները:

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակից սկսած՝ բուհում քննությունների մի մասն իրականացվել է վերակառուցված գնահատման և թեստավորման կենտրոնում. բուհում գիտելիքների ստուգման թեստային եղանակի անցման և բարելավման գործընթացը դեռ շարունակվում է:

Համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկը և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը կատարվել է հաստատված չափորոշիչներին համապատասխան: Ըստ ֆակուլտետների՝ ձևավորվել են գծապատկերում ներկայացված դրույքաչափերը, որոնք իրացվել են բոլոր ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ լրիվ կամ մասնակի (երեք քառորդ, կես, քառորդ, համատեղության կամ ժամավճարային կարգով) ծանրաբեռնվածությամբ:



Գծ. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության դրույքաչափերն ըստ ֆակուլտետների:

Աշխատաշուկայի պահանջներին ի պատասխան՝ մագիստրատուրայում ներդրվել են Կայուն գյուղատնտեսություն և Օրգանական գյուղատնտեսություն նոր կրթական ծրագրերը: Վերջինիս ուսումնական պլանը մշակվել է Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի (BOKU) հետ իրականացվող «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» նախագծի շրջանակում:
Շուկայում կայուն պահանջարկ և ճկունություն ապահովելու նպատակով մագիստրատուրայում իրականացվել են կրթական ծրագրերի խոշորացում, ուսումնական պլանների արդիականացում: Արդյունքում ունենք նոր՝ Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա, Ագրոբիզնես և ֆինանսներ, Սննդամթերքի անվտանգություն, Պարենամթերքի տեխնոլոգիա կրթական ծրագրերը:
Ըստ կրթական ծրագրերի՝ առավել շատ ընդունելություն եղել է հետևյալ բաժիններում.

- Ագրոբիզնես և ֆինանսներ՝ 23 ուսանող (≈ 25,3 %):
- Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա՝ 14 ուսանող (≈ 15,4 %):
- Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն՝ 10 ուսանող (≈11 %):
- Անասնաբուժություն՝ 10 ուսանող (≈ 11 %):
- Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա՝ 7 ուսանող (≈ 7,7 %):
- Պարենամթերքի տեխնոլոգիա՝ 7 ուսանող (≈ 7,7 %):

Գծապատկերում ներկայացված է 2019-2020 և 2020-2021 ուստարիների առկա բակալավրի ընդունելությունն ըստ ֆակուլտետների:



Գծ. ՀԱԱՀ առկա բակալավրի ընդունելությունն ըստ ֆակուլտետների:

Բուհում առկա որոշակի կրթական ծրագրերի դեպքում ընդունվողների քանակը չի գերազանցել 5-ը: Դրանք են՝

1. Ջերմատնային ագրոտեխնոլոգիա՝ 4 ուսանող:

2. Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում՝ 4 ուսանող:
3. Հողաշինարարություն, հողային կադաստր՝ 4 ուսանող:
4. Ագրոէկոլոգիա՝ 2 ուսանող:
5. Սննդամթերքի անվտանգություն՝ 2 ուսանող:
6. Բույսերի պաշտպանություն՝ 1 ուսանող:
7. Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ՝ 1 ուսանող:
8. Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում՝ 1 ուսանող:
9. Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն՝ 1 ուսանող:

Բուհում թափուր մնացած մասնագիտություններն են՝

1. Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում:
2. Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխ-նիկական կառուցվածքներ:
3. Կենսագործունեության անվտանգություն:
4. Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա:

2019-2020 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրի, անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով ընդունելությունն իրականացվել է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված տեղերի, քննությունների և ուսման վարձավճարների չափի՝ նախատեսված ժամկետներում: Ընդունելության թվի նվազումը պայմանավորված է մի շարք գործոններով՝ 2020-2021 ուստարվա ընդունելության կարգի փոփոխմամբ, համաձայն որի՝ բոլոր կրթական ծրագրերով ընդունելությունն իրականացվեց բացառապես միասնական քննությունների արդյունքում, կրճատելով մյուս բուհեր ընդունվելու համար քննությունների թիվը, իսկ ագրարայինում, ընդհակառակը, ավելացնելով 1 քննություն, COVID-19 համավարակի պայմաններում մասնագիտական կողմնորոշման նպատակով շրջայցերի կազմակերպման անհնարինությամբ և այլն:

ՀԱԱՀ-ի և դրա մասնաճյուղերի տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում (բերված է նաև համեմատական տեղեկատվություն նախորդ տարվա նույն ժամանա-կահատվածի, ինչպես նաև տեղափոխությունների, հեռացումների, ազատումների և վերականգնումների վերաբերյալ):

ՀԱԱՀ տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թիվը 31.12.2019 թ.-31.12.2020 թ. ժամանակահատվածում

Աղյուսակ 1

Ուսուցման ձևը	Ուսանողների թիվը առ 31.12.2019 թ.		Ընդունելություն	Վերականգնում	Տեղափոխություն				Շրջանավարտ	Հեռացում (ազատում)	Ուսանողների թիվը առ 31.12.2020 թ.	
	Ընդամենը ուսանող	տարկետում			այլ բուհից	մասնագիտությունից	այլ բուհ	մասնագիտություն			Ընդամենը ուսանող	տարկետում
Առկա ուսուցում	2085	538	91	28	-	1	3	82	377	182	1561	381
Մագիստրատուրա	285	24	211	5	-	-	-	-	175	67	259	22
Ասպիրանտուրա	35	-	10	-	-	-	-	-	-	7	39	1
Քոչինյանի անվան գյուղ. քոլեջ	537	31	237	8	-	-	1	-	125	26	630	38
Շիրակի գյուղատնտեսական քոլեջ	120	9	59	-	-	-	-	-	35	5	139	9
Սիսիանի մասնաճյուղ	168	10	37	16	-	-	-	-	27	9	185	5
Սիսիանի մասնաճյուղ քոլեջ	20	-	38	-	-	-	-	-	-	1	57	-
Վանաձորի մասնաճյուղ	355	33	35	5	1	-	-	-	53	40	303	21
Վանաձորի մասնաճյուղ քոլեջ	-	-	17	-	-	-	-	-	-	-	17	-
Վարժարան	374	-	82	-	-	-	-	-	94	50	312	-
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	3937	351	297	203	-	154	-	15	427	839	3310	266
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱԱՀ	7916	996	1114	265	1	155	4	97	1313	1226	6812	743

Առկա բակալավրիատի ուսուցման համակարգի դեպքում գործող և տարկետման մեջ գտնվող ուսանողների առումով առկա է ստորև ներկայացված պատկերը. :



Գծ. ՀԱԱՀ առկա ուսանողների թիվն ըստ ֆակուլտետների (31.12.2020 թ. դրությամբ):



Գծ. ՀԱԱՀ տարկետման մեջ գտնվող ուսանողների թիվն ըստ ֆակուլտետների (31.12.2020 թ. դրությամբ):

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվել է սահմանված ժամկետներում, միջանկյալ քննությունները, ստուգարքները, ամփոփիչ քննությունները, կուրսային և անհատական աշխատանքների հանձնումը, դիպլոմային նախագծերի ու աշխատանքների պաշտպանությունները կազմակերպվել են նախատեսված ժամկետներում և պահանջվող ձևաչափերով: Գծապատկերում ներկայացված են միջին գնահատականներն ըստ կիսամյակների և ֆակուլտետների:



Գծ. 2019-2020 ուսուցարվա ուսանողների առաջադիմությունն ըստ ֆակուլտետների (միջին բալը):

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, բացի ՀՀ քաղաքացիներից, 2019-2020 ուստարում ուսանել են սփյուռքահայ և օտարերկրացի 21 ուսանողներ՝ 50 %-ը Վրաստանից, 30 %-ը Լիբանանից, 10 %-ը Սիրիայից, մեկական ուսանող Մոլդովայից և Ռուսաստանից:



Գծապատկեր 6. 2019-2020 ուստարում սփյուռքահայ և օտարերկրացի ուսանողների թիվը, մարդ:

ՀԱԱՀ Լեզվի ուսուցման կենտրոնում 2019-2020 ուստարում օտար լեզվից դասընթացներ են իրականացվել ուսանողների և բուհի անձնակազմի համար:
Դասընթացները կազմակերպվել են տեխնիկապես հագեցած լսարաններում, շաբաթական երեք անգամ՝ 90 րոպե տևողությամբ աշխատակիցների և 60 րոպե տևողությամբ ուսանողների համար:
Դասերը կազմակերպվել են փուլերով, վերջում կատարվել է գիտելիքների ստուգում և տրվել են համապատասխան սերտիֆիկատներ:
2019-2020 ուստարում դիպլոմներ են շնորհվել ՀԱԱՀ 1251 շրջանավարտի. բակալավրիատի (առկա և հեռակա) 930 շրջանավարտներից 28-ը, մագիստրատուրայի 170 շրջանավարտներից 59-ը, քոլեջների 151 շրջանավարտներից 14-ը ստացել են գերազանցության դիպլոմ:

ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2020-2021 ուստարում ՀԱԱՀ վարժարանի 10-րդ դասարան է ընդունվել 69 աշակերտ, վարժարանի աշակերտների ընդհանուր թիվն այժմ 320 է: Վարժարանը 2020 թ. իրականացրել է 10-12-րդ դասարաններում ուսումնական պլանով նախատեսված բոլոր հանրակրթական առարկաների ուսուցումն արտակարգ իրավիճակի պայմաններում: Ողջ տարվա ընթացքում կատարվել է աշակերտների հաճախումների ամենօրյա հաշվառում, գրանցվել է միջինում 90 % հաճախելիություն (առկա և հեռավար):

2020-2021 ուստարում վարժարանն ունեցել է 28 հիմնական և 6 համատեղությամբ աշխատող աշխատակից, ովքեր տարվա ընթացքում մասնակցել են տարբեր վերապատրաստումների և դասընթացների:
2020 թ. ՀՀ ԿԳՄՍՆ-ի և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկի աջակցությամբ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում վարժարանը ստացել է երեք՝ քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաների համար նախատեսված կահույք, լաբորատոր սարքավորումներ ու նյութեր, համապատասխան տարածքի վերանորոգման աշխատանքներն ընթացքում են:
2020-ին ՀԱԱՀ վարժարանի, ՏՏ կենտրոնի և Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի համատեղ ջանքերով վարժարանում բացվել է 10 համակարգչով հագեցած համակարգչային դասարան:
2020 թ. ընթացքում տեղի են ունեցել տարբեր բնույթի 14 միջոցառում և առարկայական բաց դասեր: Մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվել են այցեր ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետներ:
Վարժարանի 95 շրջանավարտից ավելի քան 40 %-ն ընդունվել է ՀԱԱՀ:

ՀԱԱՀ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՀԱԱՀ-ի Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում 13 մասնագիտությունների գծով գործում է ուսուցման առկա ձևը: 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ քոլեջում ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 506 ուսանող, որից 3-ը՝ վճարովի հիմունքներով: Այլ ուսումնական հաստատություններից քոլեջ է տեղափոխվել 2 ուսանող, 9 ուսանող ընտանեկան պայմանների պատճառով ազատվել է, իսկ 15-ը՝ հեռացվել անհարգելի բացակայությունների համար: Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նախորդ տարվա համեմատությամբ անհարգելի բացակայությունները նվազել են 10,6 %-ով: Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 126 ուսանողներից քննություններին մասնակցել է 126 ուսանող: 2-րդ պետական ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներով գյուղատնտեսական քոլեջն ունեցել է 125 շրջանավարտ, այդ թվում՝ 14-ը ստացել է գերազանցության դիպլոմ: ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգ է տեղափոխվել 41 ուսանող: 2020-2021 ուստարում ընդունվել է 237 ուսանող, որից 97-ը՝ վճարովի հիմունքներով:

ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

2020 թ. դեկտեմբերի 16-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 298 ուսանող (նախորդ տարում՝ 356), որից 22-ը գտնվում են զինվորական ծառայության մեջ: Տարվա ընթացքում այլ բուհից մասնաճյուղ է տեղափոխվել 1, մասնաճյուղից հեռացվել է 37 ուսանող (նախորդ տարում՝ 14): 2020-ին հեռակա ուսուցմամբ մասնաճյուղի առաջին կուրս է ընդունվել 27 ուսանող (նախորդ տարում՝ 58), շրջանավարտները 53 են (նախորդ տարում՝ 25):
Մասնաճյուղի հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն»,

«Հողաշինարարություն և հողային կադաստր», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գյուղատնտեսության մեքենայացում», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում», «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» մասնագիտությունների գծով 30 կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է մայր բուհի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

2020-2021 ուստարվա ընթացքում մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդել են 80 դասախոս, որոնցից 42-ը Վանաձոր են գործուղվել ՀԱԱՀ-ից, 4-ը մասնաճյուղի հաստիքային աշխատողներ են, իսկ 34-ը՝ Վանաձոր քաղաքում գործող պետական բուհերից, հանրակրթական դպրոցներից և այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ են: Դասավանդող 80 դասախոսներից 42-ը (52,5 %) ունեն գիտական կոչումներ և աստիճաններ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջ ընթացքում մասնաճյուղում ամենօրյա ուշադրության կենտրոնում են պահվել կրթության որակի ապահովման և վերահսկողության իրականացման, երիտասարդ դասախոսական կադրերի վերապատրաստման հարցերը: Անցած ուստարում 6 երիտասարդ ասիստենտներ ՀԱԱՀ-ում մասնակցել են որակավորման բարձրացման դասընթացներին և ստացել համապատասխան հավաստագրեր:

Բարձրագույն կրթական ծրագրերի իրականացմանը համընթաց մասնաճյուղում քայլեր են արվել նաև առանձին թեմաներով գիտական հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Հանրապետությունում COVID 19-ի թելադրած հանգամանքներով պայմանավորված՝ հետազոտական աշխատանքները, որոնք հիմնականում ուղղված են եղել Լոռու մարզի և հանրապետության հյուսիսային տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում առաջավոր փորձի տեղայնացմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին, լիարժեքորեն և ամբողջությամբ չեն կատարվել:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կանոնակարգի՝ 2020 թ. սեպտեմբեր ամսին մասնաճյուղում կատարվել է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների փաստաթղթերի ընդունելություն: Արդյունքում, 37 դիմորդից մասնաճյուղ է ընդունվել 27-ը:

2020 թ. իրականացվել է դիմորդների ընդունելություն միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա համակարգով և մասնաճյուղի քոլեջ է ընդունվել 17 դիմորդ:

«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում գործում են ուսուցման առկա և հեռակա ձևերը հետևյալ մասնագիտությունների գծով.

- 1041 – Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)
- 0721 – Մսի և մսամթերքների տեխնոլոգիա
- 0728 – Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն
- 0411 – Հաշվապահական հաշվառում
- 0413 – Մենեջմենթ (կառավարում)
- 0414 – Ապրանքագիտություն

- 0721 - Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա
- 0421 - Իրավագիտություն (հեռակա)

Քոլեջում 2020 թ. հունվարի մեկի դրությամբ ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 111 ուսանող (նախորդ տարում՝ 142), որից 9-ը՝ վճարովի, իսկ 6-ը՝ հեռակա ուսուցման համակարգում՝:

2020-2021 ուստարում քոլեջ ընդունվել է 59 դիմորդ (նախորդ ուստարում՝ 56), որից 4-ը՝ վճարովի ուսուցմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում զորակոչվել է բանակ 4, վերականգնվել 4 ուսանող, որից 3-ը վերադաձել է տարկետումից, հեռացվել՝ 5-ը (նախորդ տարում՝ 47): Ավարտել և որակավորում են ստացել ցերեկային ուսուցման համակարգի 29, հեռակա ուսուցման 6 ուսանող (նախորդ տարում՝ 45): Շրջանավարտներից 3-ը (նախորդ տարում՝ 1) չեն ներկայացել պետական ամփոփիչ ատեստավորմանը և հեռացվել են:

Արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման համար նախապես պայմանագրեր են կնքված մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպությունների հետ, մասնավորպես՝ Շիրակի մարզի Ազատանի գյուղապետարան, Ախուրյանի Կոոպշին ՍՊԸ, Գյումրիի Սելեկցիոն կայան ՓԲԸ, Անուշարան ՍՊԸ, «Իգիթ» կաթնամթերքի գործարան ՍՊԸ, Բելիսսիմո-Գրուպ ՍՊԸ, ԱՁ Ալբերտ Դերձակյան, ԱՁ Ա.Գաբրիելյան:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ, որը նախորդ տարվա համեմատությամբ պակասել է 10 տոկոսով:

Քոլեջը հիմնական դասախոսների համար կազմակերպել է կարճաժամկետ վերապատրաստում՝ ուսումնական մոդուլային ծրագրերի իրականացման պահանջներին համապատասխան դասավանդման կարողություններով ապահովելու նպատակով:

ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԱԱՀ-ի Սիսիանի մասնաճյուղում 2020 թ. շարունակվել են ուսանողական համակազմի համալրմանը, ուսումնառության և դասավանդման գործընթացի արդիականացմանը, մայր բուհի կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը, ինչպես նաև բացասական երևույթների դեմ պայքարին միտված աշխատանքները:

Մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագով հեռակա ուսուցմամբ գործող «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա», «Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա», «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա», «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա», «Հողաշինարարություն, հողային կադաստր», «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունների գծով սովորում է 185 ուսանող (նախորդ տարի՝ 168), այդ թվում՝ 5-ը գտնվում են ակադեմիական արձակուրդում: 2020-ին մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրի 1-ին կուրս է ընդունվել 37 ուսանող (նախորդ տարի՝ 24): Հաշվետու տարում մայր բուհից մասնաճյուղ է տեղափոխվել 4, մասնաճյուղից հեռացվել (ազատվել) է 9, վերականգնվել՝ 17 ուսանող, որից 1-ը այլ բուհից: 2020-ին մասնաճյուղն ունեցել է 27 շրջանավարտ:

Մասնաճյուղում 2019 թվականից գործող միջին մասնագիտական կրթական ծրագրով, հիմնական հանրակրթության հիմքով, առկա ուսուցմամբ «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ (կառավարում)», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա» մասնագիտությունների գծով 1-ին և 2-րդ կուրսերում սովորում է ընդհանուր 57 ուսանող: 2020-ին մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագրի 1-ին կուրս է ընդունվել 38 ուսանող (նախորդ տարի՝ 20), այդ թվում՝ 34-ը անվճար ուսուցմամբ, որից 1-ը ազատվել է դիմումի համաձայն: Միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող ընդհանուր 7 ուսանողի տրվում է պետական կրթաթոշակ:
Հաշվետու տարում իրականացվել են մասնաճյուղի դասախոսների վերապատրաստման աշխատանքներ, մասնավորապես անասնաբուժության և կաթի ու կաթնամթերքի տեխնոլոգիայի ոլորտների 5 դասախոսներ մասնակցել են մասնաճյուղի գործընկեր «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից կազմակերպված մասնագիտական դասընթացներին և ստացել հավաստագրեր:
Հաշվետու տարում շարունակվել են նաև մասնաճյուղի նյութատեխնիկական և լաբորատոր բազայի արդիականացմանն ուղղված աշխատանքները: Բուհի ֆինանսական միջոցներով մասնաճյուղում շահագործման է հանձնվել նոր համակարգիչներով վերազինված 2-րդ լսարանը, մարզադահլիճը համալրվել է նոր մարզագույքով, իրականացվել են շենքի վերանորոգման աշխատանքներ՝ մասնավորապես պատուհանների փոխարինում և սանհանգույցների վերանորոգում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC)

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակ փոխադրվել է երրորդ կուրսի 16 ուսանող: Նույն կուրսի 4 ուսանողներ Էրազմուս+KA107 ծրագրի շրջանակում 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում սովորել են Եվրոպական տարբեր համալսարաններում: 2019 թ. համեմատությամբ դեպարտամենտի միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցած ուսանողների թիվը նվազել է:
2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում սովորել է չորրորդ ավարտական կուրսի 16 ուսանող: 2020 թ. մայիսին ավարտական կուրսի 16 ուսանողներ հաջողությամբ հանձնել են երկու պետական ամփոփիչ քննությունները: Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետական քննական հանձնաժողովի 20.05.2020 թ. որոշման համաձայն՝ դեպարտամենտի «Ագրոբիզնես» մասնագիտության Ագրոբիզնես և սննդի արդյունաբերության կառավարում կրթական ծրագրի 16 շրջանավարտներին շնորհվել է տնտեսագիտության բակալավրի որակավորման աստիճան: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից 3 ուսանողի շնորհվել է գերազանցության դիպլոմ: Ուսանողներին տրվել են նաև Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:
2020-2021 ուստարվա առաջին կիսամյակում չորրորդ կուրս է փոխադրվել կուրսի 16 ուսանող: 1 ուսանող Էրազմուս+KA107 ծրագրի շրջանակում շարունակում է ուսումը Իսպանիայի Ալմերիայի համալսարանում:
2020-2021 ուստարվա համար Ագրոբիզնեսի դեպարտամենտի կրթության ընդունելություն չի կազմակերպվել: Դեպարտամենտը ՀՀ «Բարձրագույն կրթության և

գիտության մասին» օրենքի նախագծի շրջանակում նախատեսում է «Ագրոբիզնես» մասնագիտությունն ամբողջությամբ իրականացնել դեպարտամենտում 3 տարի 6 ամիս ժամկետով:

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրում սովորել են ավարտական կուրսի 10 և առաջին կուրսի 8 մագիստրանտներ: 2020 թ. մայիսին ավարտական կուրսի 10 մագիստրանտները հաջողությամբ պաշտպանել են մագիստրոսական ավարտական աշխատանքները՝ ստանալով վեց գերազանց և չորս լավ գնահատականներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի 2020 թ. մայիսի 22-ի որոշմամբ տասը շրջանավարտներին շնորհվել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորման աստիճան: Հանձնաժողովի որոշմամբ 1 ուսանողի շնորհվել է գերազանցության դիպլոմ: Շրջանավարտները ստացել են ՀԱԱՀ մագիստրոսի դիպլոմներ «Ագրոբիզնես» մասնագիտությամբ և Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

2020-2021 ուստարում դեպարտամենտի 1-ին կուրս ընդունված դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ չի փոխվել: 2020-2021 ուստարվա առաջին կուրս է ընդունվել 7 ուսանող, որից 4-ը՝ դեպարտամենտի բակալավրիատի 2020 թ. շրջանավարտ: Մագիստրանտներից 2-ն ընդգրկվել են անվճար համակարգում:

2020-2021 ուստարվա առաջին կիսամյակում երկրորդ կուրս է փոխադրվել կուրսի 7 մագիստրանտ: Մեկ մագիստրանտ հեռացվել է մագիստրատուրայից չներկայանալու, քննական և վարձավճարի պարտքերը չմարելու համար:

Երկրում տիրող իրավճակով պայմանավորված՝ հաշվետու ժամանակաշրջանում դեպարտամենտում ուսուցումը հիմնականում կազմակերպվել է առցանց եղանակով՝ ներառյալ պետական համալիր քննությունները և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները:

Ուսանողների համար տարբեր դասախոսություններ և սեմինարներ են անցկացրել հրավիրյալ տեղական ու միջազգային փորձագետներ, այդ թվում՝ Տեխասի A&M համալսարանի Մարդու վարքագծի ուսումնասիրության լաբորատորիայի ծրագրերի ղեկավար, հաղորդակցման ռազմավարության մասնագետ և շուկայաբան Ջեֆ Փուլը՝ «Վարքագծային ռազմավարության դերը վաճառքի մեծացման գործում» թեմայով, Քորնելի համալսարանի հետազոտող, ինչպես նաև դեպարտամենտի մագիստրոսական ծրագրի դասախոս Գնել Գաբրիելյանը՝ «Վարքագծային տնտեսագիտության հիմունքներ. ճանաչողական կողմնակալություն» թեմայով, Milenium 5 ՍՊԸ-ի գործադիր տնօրեն, GlobalR ՍՊԸ-ի գործադիր տնօրեն, Ուայթ Փիջն ՀԿ-ի փոխնախագահ Էրիկ Խաչատրյանը՝ «Մասշտաբավորումը միջազգային շուկաներում» թեմայով, նախագծերի ղեկավար (PMP), դասընթացավար, մագիստրոսական ծրագրի դասախոս Արման Գրիգորյանը՝ «Ծրագրային կառավարում» թեմայով, menu.am-ի մարկետինգի տնօրեն Հովհաննես Մինասյանը՝ «Շուկայավարումը խոշոր կազմակերպություններում» թեմայով:

Ի-ՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ

2020 թվականը ինչպես այլ բոլոր կրթական ծրագրերի, այնպես էլ Ի-Վի-Էն գինու ակադեմիայի համար բավական լի էր խոչընդոտներով: 2020 թվականին Ի-ՎԻ-ԷՆ գինու ակադեմիան ունեցավ 12 շրջանավարտ, սակայն COVID-19-ի համաճարակի

հետևանքով նրանք իրենց դասերն ավարտեցին ոչ թե մայիս, այլ օգոստոս ամսին, իսկ ավարտական միջոցառում չկազմակերպվեց: 12 շրջանավարտներից հավաստագրեր ստացան 7-ը:
Ի-Վի-Էն-ի «Գինեգործություն և գինու բիզնես» 18-ամսյա մասնագիտական հավաստագրային ծրագրի նոր խմբի ընդունելությունը սկսվեց սեպտեմբեր ամսին: Անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր առմամբ, ինչպես 2019 թվականին, այնպես էլ 2020-ին ծրագրով հետաքրքրվողների թիվը բավական շատ էր, և այս տարի ընդունված ուսանողների թիվը 19 էր: Ցավոք, երկրում պատերազմական իրավիճակով և COVID-19-ով պայմանավորված՝ ընդունված մասնակիցներից 5-ը չշարունակեցին իրենց ուսումը Ի-Վի-Էն գինու ակադեմիայում: Այժմ մասնակիցները 14-ն են:
Դասընթացները սկսվել են նոյեմբերի 2-ից՝ հեռավար տարբերակով: Հարկ է նշել նաև, որ ձեռք բերված տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով իրականացվում են այցեր տարբեր գինու գործարաններ և խաղողի այգիներ՝ պահպանելով հակահամաճարակային բոլոր կանոնները:

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2020 թ. հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում (ԱՄՋ) սովորել է 19 մագիստրանտ, որից 17-ը՝ գերմանալեզու, 2-ը՝ հայալեզու կուրսերում, 4-ը՝ երկրորդ ավարտական կիսամյակում, 7 մագիստրանտի տրամադրվել է գործուղում: 2020 թ. Գերմանիայում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ ծրագրի 16 մագիստրանտի ուսման գործընթացը դադարեցվել է: Միջազգային և միջբուհական գործակցային ծրագրերի շրջանակներում 01.10.2020-ից ԱՄՋ-ի լավագույն մագիստրանտներից 12-ը ուսումը շարունակում է Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում (ՎԿԳՀ): 2020 թ. գերմաներեն լեզվի նախնական դասընթացներին մասնակցելու հայտ է ներկայացրել 15 ուսանող, սակայն մասնակցել է միայն 12-ը: 2020 թ. ԱՄՋ ծրագրի առաջին կուրս է ընդունվել 4 մագիստրանտ՝ 4-ն էլ գերմանալեզու խմբում, որից 2-ը՝ անվճար համակարգ: 2020 թ. «Ագրարային մենեջմենթ» ծրագիր է այցելել ՎԿԳՀ-ի 1 դասախոս՝ գործնական կիսամյակի համար ուսանողների ընտրության քննության անցկացման համար: 2020 թ. ծրագրի մասնագետների համար անցկացվել են նաև հեռավար մասնագիտական վերապատրաստումներ Գերմանիայի ՎԿԳՀ-ի միջոցով:
2020 թ. սահմանված ժամանակացույցի համաձայն 5 մագիստրանտ հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները, 1 մագիստրոսի շնորհվել է կրկնակի դիպլոմ: ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 2019/2020 ուսումնական տարվա գրեթե բոլոր շրջանավարտներն աշխատանքի են անցել ՀՀ և ԳԴ տնտեսության տարբեր բնագավառներում:

«ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑ

«Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» դասընթացի 3-րդ փուլը մեկնարկեց 2020 թ. ապրիլին: Վերլուծելով նախորդ փուլերի մասնակիցների գնահատման արդյունքները՝ որոշում կայացվեց երկարացնել դասընթացը ևս 2 ամսով: Դասընթացի մի քանի մոդուլների հատկացվեց հավելյալ ժամաքանակ՝ մասնակիցներին տրամադրելով ավելի խորը գիտելիքներ նշված մոդուլների վերաբերյալ:

«Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» դասընթացի նպատակն է՝ պատրաստել փակ գրունտում մշակաբույսերի մշակության ժամանակակից պահանջներին բավարարող, ինչպես նաև շուկայի և կառավարման հիմունքներին ծանոթ մասնագետ-գյուղատնտեսներ:

- Դասընթացի 3-րդ փուլում ընդգրկվեց 13 մասնակից: Երկրում տիրող COVID-19 համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ դասընթացը շարունակեց 8 մասնակից: Դասընթացում ներգրավված ուսանողները համատեղում են աշխատանքը դասընթացի հետ: Դասերը կազմակերպվում են հեռավար:
- Դասընթացի մասնակիցները, դասընթացի համակարգողը, դասավանդող մասնագետները և ICARE հիմնադրամի տնօրենը, համագործակցելով ՀԱԱՀ գործընկերների հետ, նախապատրաստեցին և գործարկեցին ՀԱԱՀ ջերմատունը, որտեղ իրենց պրակտիկան են անցնում դասընթացի մասնակիցները: Բացի այդ, մոդուլի դասերը ևս հաջողությամբ կազմակերպվում են ջերմատանը:
- «Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» 10-ամսյա դասընթացի հաջող փորձը օգտագործվեց նախապատրաստելու «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր» 12-օրյա դասընթացը ֆերմերների համար: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ անցկացվել է կարճատև դասընթացի 5 փուլ, որոնք ընդհանուր առմամբ ունեցել են 84 մասնակից:
- Համավարակով պայմանավորված՝ դժվար էր կազմակերպել մասնակիցների այցելությունները ջերմատներ: 2020 թ. ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել է 3 այցելություն ելակի, վարդի և լոլիկի ջերմատներ:
- Աշխատանքներ են տարվում «Սպայկա» ընկերության հետ դասընթացի մասնակիցների երկարաժամկետ պրակտիկայի կազմակերպման համար, որի արդյունքում պրակտիկան հաջող անցած ուսանողները կանցնեն աշխատանքի ջերմատանը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» (ՖՐՈՒՏԵՆԻԱ)

Ակտիվ իրականացման փուլում է գտնվում ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագիծը, որը կխթանի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացումը՝ շնորհիվ ագրոնոմիական ուղղվածությամբ արդիական առարկայացանկի, դասավանդման նոր մեթոդների և բարձրորակ մասնագետների, ովքեր նաև հնարավորություն կունենան գործնականում վերապատրաստվել նախագծի շրջանակում հիմնվող ինտենսիվ պտղատու այգում:

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի Ագրոտեխնիկական բաղադրիչի մեկնարկից հետո ՀԱԱՀ Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությանը պատկանող տարածքում նախագծին է տրամադրվել 1,5 հա հողակտոր՝ ինտենսիվ պտղատու ցուցադրական այգի հիմնելու նպատակով: Տարվա ընթացքում հողը հարստացվել է օրգանական և անօրգանական պարարտանյութերով, կարմիր ավազով, ինչպես նաև կատարվել են մի շարք ագրոտեխնիկական միջոցառումներ:

Ինտենսիվ այգում կտնկվեն չորս պտղատեսակներ՝ դեղձենի, սալորենի, կեռասենի և ծիրանենի: Բացի ծիրանենուց, մնացած երեք պտղատեսակները ներկայացված կլինեն ավելի քան 7 սորտերով: Տնկիների ձեռքբերման նպատակով ամռանը հայտարարվել է մրցույթ, որից հետո տեղացի և միջազգային փորձագետների ներգրավմամբ կատարվել է համապատասխան սորտերի ընտրություն, կազմվել է այգու նախագիծ: Այգին համալրված կլինի կաթիլային ոռոգման համակարգով և հակակարկտային ցանցով:
Նախագծի շրջանակում պատրաստվել է պտղաբուծության վերաբերյալ վեբ-կայք (www.aygi.am), որտեղ ոլորտի շահառուները կարող են գտնել պտղաբուծության վերաբերյալ տեսանյութեր, հրապարակումներ, խորհուրդներ, մասնագետների կոնտակտային տվյալներ և այլ օգտակար նյութեր:
Ագրոտեխնիկական բաղադրիչի մեկնարկից ի վեր նկարահանվել է ավելի քան 10 տեսանյութ պտղաբուծության տարբեր թեմաների վերաբերյալ: Բոլոր այս տեսանյութերը, ինչպես նաև կրթական բաղադրիչի շրջանակներում պատրաստված ուսուցողական նյութերը տեղադրվել են aygi.am կայքէջում:
ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի կրթական բաղադրիչի շրջանակում նախատեսվում է՝

- ✓ արդիականացնել ՀԱԱՀ ագրոնոմիական մասնագիտությունների ուսումնական պլանները՝ մշակելով նոր, առավել պահանջված առարկաներ,
- ✓ վերապատրաստել ոլորտի դասախոսներին, բարելավել նրանց կարողություններն ու հմտությունները այդ առարկաների դասավանդման առումով,
- ✓ մշակել կարճաժամկետ վերապատրաստման ծրագիր ֆերմերների համար,
- ✓ մշակել պտղաբուծությանն առնչվող ձեռնարկ գյուղատնտեսական քոլեջների համար: Վերապատրաստել գյուղատնտեսական քոլեջների դասախոսներին, բարելավել նրանց տեսական և գործնական կարողություններն ու հմտությունները,
- ✓ կազմակերպել ուսանողական-երիտասարդական ճամբար, որի հիմնական նպատակը կլինի երիտասարդության շրջանում պտղաբուծության ոլորտի վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածության մակարդակի բարձրացումը:

Ներկայումս տեղական և միջազգային փորձագետների հետ համատեղ մշակվում կամ արդիականացվում են Հարակայուն գյուղատնտեսության հիմունքներ, Պտղաբուծություն և Էնտոմոլոգիա առարկաները: Մշակվում են նաև Հարակայուն և էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսությանն առնչվող մոդուլներ՝ վերը նշված առարկաներում ներառելու նպատակով:

Աշխատանքներ են տարվում նաև «Ինտենսիվ այգիների հիմնում և կառավարում», «Տնկարանների հիմնում և կառավարում», «Ընկուզավոր պտղատեսակների այգիների հիմնում և կառավարում» և «Ֆիտոպաթոլոգիա» առարկաների մշակման/արդիականացման ուղղությամբ: Բոլոր առարկաների մշակված ամբողջական փաթեթը կտրամադրվի ՀԱԱՀ-ին 2021 թ. նոյեմբերին: Այդ ժամանակահատվածում կիրականացվի նաև ՀԱԱՀ համապատասխան դասախոսների վերապատրաստում, ովքեր և կդասավանդեն նշված առարկաները:

«ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ» (ԱԳՐԻՔԵՄՓ)

2020 թ. մայիսի 1-ը Ագրարային համալսարանի համար նշանավորվեց ևս մեկ նորարարական նախագծի մեկնարկով: «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱգրիՔեմփ)» նախագիծն իրականացվելու է Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE)

հիմնադրամի հետ համատեղ: Նախագիծը հիմնականում ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից (77,2 %), մնացած մասն էլ ֆինանսավորում են համալսարանը և ICARE հիմնադրամը: Եռամյա նախագծի ընդհանուր բյուջեն կազմում է ավելի քան 593 հազ. ԱՄՆ դոլար:

Նախագծի նպատակն է ստեղծել գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման նորարարական ճամբար՝ մասնավոր հատվածի, ուսանողների և երիտասարդ մասնագետների միջև համագործակցության զարգացման միջոցով թիրախային խմբերի գյուղատնտեսական մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները հզորացնելու և տարածելու համար:

Ագրոճամբարը հիմնվելու է ՀԱԱՀ-ի Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տան տարածքում: Նախագծի շրջանակում իրականացվող հիմնական գործողությունները ներառում են հանգստյան տան հարկաբաժինների, ժողովների սենյակի, խոհանոցի ու ճաշարանի վերանորոգումը և կահավորումը, հարակից տարածքի վերանորոգումը: Կհիմնվեն նաև ագրոճամբարի համար գործնական ուսուցման լրացուցիչ կենտրոններ, այդ թվում՝ փոքր պտղատու այգի և հատապտուղների այգի, գյուղատնտեսական սարքավորումների փոքր կենտրոն, «խելացի» թռչնաբուծարան, որը շրջանաձև տնտեսության բաղկացուցիչ մաս է կազմելու, և որի միջոցով նվազեցվելու է ճամբարի գործունեությունից առաջացած սննդային թափոնների արտանետումը շրջակա միջավայր:

Հիշատակված շրջանաձև տնտեսությունը նախագծի ոչ մեծ բաղադրիչն է. այդ ցուցադրական տնտեսության միջոցով շահառու թիրախային խմբերը կծանոթանան փակ շրջափուլերի սկզբունքով գործող ռեսուրսախնա շրջանաձև տնտեսավարման համակարգի առանձնահատկություններին:

Նախագծի բաղադրիչներից մեկն էլ ՀԱԱՀ կարողությունների զարգացումն է, որի շրջանակում կազմակերպվելիք վերապատրաստման դասընթացների և ամառային դպրոցների նյութերը կտրամադրվեն ՀԱԱՀ համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց շարունակականությունն ապահովելու համար: Վերապատրաստումների հիմնական շահառուներն են ՀԱԱՀ դասախոսական անձնակազմը, ուսանողները, երիտասարդ մասնագետները:

«ԳԻՆՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ԴՈՒԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ»

Համաձայն Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի միջև կնքված պայմանագրի՝ «Գինու ոլորտում դուալ մասնագիտական կրթական ուսուցման (ՄԿՈՒ) ծրագրի մշակում» նախագծի շրջանակում համալսարանի մասնագետները խորհրդատվական ծառայություն կմատուցեն նշված ոլորտում: Նախագիծն իրականացվելու է մինչև 2021 թ. հուլիսի վերջ՝ GIZ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Նախագծի նպատակն է մշակել դուալ ՄԿՈՒ երկարաժամկետ կրթական ծրագիր, որը ուսումնական պլանի, մոդուլների կառուցվածքի և քննության գործընթացի առումով հիմնված լինի պետական չափորոշիչների, մեր համալսարանում արդեն լավագույն արդյունքներ ապահոված գերմանական փորձի, ինչպես նաև գինու ոլորտի մասնավոր ընկերությունների առկա կարիքների վրա:

Նախագծված դուալ ՄԿՈՒ ծրագիրը կնպաստի ՀԱԱՀ քոլեջի, 6 մասնավոր գինեգործական ընկերությունների և ՀԱԱՀ Ոսկեհատի գինեգործարանի միջև համագործակցության հաստատմանը, գինու ոլորտում ՄԿՈՒ ուսանողների հմտությունների ճանաչմանը, իսկ երկարաժամկետ հեռանկարում կնպաստի նրանց աշխատանքի տեղավորման հնարավորություններին, ինչպես նաև գինու ոլորտի ՄԿՈՒ դասախոսների և գործնական դասընթացները վարողների կարողությունների զարգացմանը:
ՀԱԱՀ Ոսկեհատի ուսումնափորձարարական կենտրոնն իր խաղողի այգիով, գինեգործարանով և Գինու ուսումնագիտական կենտրոնով ծառայելու է Քոլեջի գինեգործական մասնագիտության սովորողներին դուալ մասնագիտական կրթության գործնական կարիքների բավարարմանը: Ի-Վի-Էն գինու ակադեմիայի՝ համալսարանում գործող գինու ուսումնական լաբորատորիան և համտեսի սրահը նույնպես ի սպաս են դրվում ապագա գինեգործ քոլեջցիների կրթագործնական նպատակների սպասարկմանը:

ABIONET. ՆՈՐԱՍՏԵՂԾ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Չորրորդ տարին է, ինչ ընթանում է ԵՄ կողմից ֆինանսավորվող ABioNet Էրազմուս+ՀԳ2 ծրագիրը: Ծրագրի առանցքային վերջնարդյունքներից է նորարարական սարքավորումներով և տեխնիկական միջոցներով համալսարանի համալրումը՝ մեկնարկած մագիստրոսական ծրագրին համապատասխան: Այս համատեքստում ՀԱԱՀ-ում արձանագրված շոշափելի ձեռքբերումներից են հատկացված սարքավորումների ներկրումն ու փորձարկումը, ինչպես նաև դրա հիման վրա ձևավորված Սննդամթերքի որակի հսկման ուսումնական լաբորատորիան: Դեկտեմբերի 18-28-ը լաբորատորիայում իրականացվեց վերապատրաստման դասընթաց, որի նպատակն էր ծրագրի շրջանակում ձեռք բերված նորարարական տեխնոլոգիաների հետ աշխատելու, մասնավորապես իմունաֆերմենտային հետազոտություն (ԻՖՀ-ELISA) կատարելու կարողությունների և հմտությունների ձևավորումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային առողջության պահպանման տեսակետից գերակա խնդիրներ են սննդամթերքի որակի վերահսկումը և անվտանգության ապահովումը, ԻՖ հետազոտությունը, որպես սննդամթերքի և հումքի մեջ քիմիական, մանրէաբանական ռիսկերը բացահայտելու գերճշգրիտ եղանակ, հնարավորություն է տալիս հումքի և սննդամթերքի մեջ հայտնաբերել հորմոններ, հակաբիոտիկներ, թթուներ, ալերգեններ, միկոտոքսիններ, վիրուսներ և բակտերիաներ: ԻՖ հետազոտության շրջանակը ներառում է պարենային ապրանքների փորձաքննությունն ու անվտանգությունը, անասնաբուժությունը, առողջապահությունը:
ՀՀ ՍԱՏՄ լաբորատորիայի մասնագետի վարած վերապատրաստմանը մասնակցում էին Սննդամթերքի անվտանգության մագիստրոսական կրթական ծրագրում դասավանդող և ոլորտին առնչվող ամբիոնների դասախոսական անձնակազմը և Սննդամթերքի անվտանգության կրթական ծրագրով ուսումնառող մագիստրանտներ:

ՀԱԱՀ-Ի ԵՎ ՄԱԿ-Ի ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՊՀԾ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2020 թ. ապրիլին մեկնարկել է ՀԱԱՀ-ի և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) համագործակցության նախաձեռնությունը, որի շրջանակում սահմանվել են ծրագրի երկու հիմնական բաղադրիչներ.
ա) նախանշված ոլորտներում հետազոտությունների իրականացում,

բ) խորհրդատվական և կրթական միջոցառումների իրագործում:
Համագործակցության մի քանի ամիսների ընթացքում արդեն իսկ իրականացվել և ՊՀԾ-ին է ներկայացվել ՀՀ-ում պարենի հեռանկարային արժեշղթաների վերաբերյալ ծավալուն հետազոտություն, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզում ամբողջահատիկ ցորենի արժեշղթայի և ՀՀ-ում ջերմատնային բանջարեղենի ու համեմունքների մշակության վերաբերյալ իրագործելիության ուսումնասիրություններ: Համագործակցության ծրագրի առաջին բաղադրիչի շրջանակում ներկայումս կազմման փուլում են նաև ՀՀ-ում հատապտղային մշակաբույսերի արժեշղթաների վերաբերյալ հետազոտությունը և ՀՀ Տավուշի մարզում հատիկաընդեղենների մշակության, վերամշակման և իրացման վերաբերյալ թրեյնինգ-ձեռնարկը:
Համագործակցության ծրագրի երկրորդ բաղադրիչի շրջանակում իրականացվում եմ բազմաթիվ խորհրդատվական այցեր և միջոցառումներ՝ դպրոցներին կից ջերմատներ և այգիներ հիմնելու նպաստավոր պայմանները բացահայտելու (հատկապես աշխարհագրական թիրախավորման հարցերում) և ՊՀԾ ծրագրերի շահառուների համար սերմերի, տնկիների և սածիլների գնման ընթացակարգերն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Միաժամանակ, ՊՀԾ-ի ծրագրերի շահառուների ու գործընկեր կառույցների ներկայացուցիչների համար կազմակերպվում են տարատեսակ թրեյնինգներ, իրականացվում են թրեյնինգների ու մասնագիտական վերապատրաստման դասընթացների համար կրթական նյութերի կազմման և ջերմատների կառուցման ու դպրոցներին կից այգիների հիմնման համար ամբողջական տեխնիկական բնութագրերի ստեղծման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր բյուջեն 79 555 ԱՄՆ դոլար է, տևողությունը՝ մեկ տարի:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖԹՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

2020 թ. սեպտեմբերին մեկնարկել է ՀԱԱՀ-ի և Համաշխարհային Բանկի (ՀԲ) միջև համագործակցությունը՝ Հայաստանում անտառային լանդշաֆտների վերականգնման հնարավորությունների գնահատման նախագծի շրջանակում: Նախագծի նպատակն է ՀԲ-ին տրամադրել գիտականորեն հիմնավորված տեղեկատվություն՝ Հայաստանում անտառվերականգնման համար մատչելի և առավել նպատակահարմար տեսակների ու գենետիկական ռեսուրսների վերաբերյալ: Միաժամանակ, նախագիծը նպատակ ունի բացահայտել և գնահատել անտառվերականգնման աշխատանքներում մասնավոր ներդրումների ներգրավման ներուժը: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվում է դեգրադացված անտառային լանդշաֆտներում նախկինում հանդիպող տեսակների կազմը, գնահատվում է անտառների վերարտադրողական նյութի և տնկիների արտադրության ներկա վիճակը և մատուցվող բնապահպանական, սոցիալական և տնտեսական ծառայությունների որակը: Միաժամանակ, ուսումնասիրվում են անտառվերականգնման աշխատանքներում մասնավոր ներդրումներ ներգրավելու խոչընդոտները և դրանց հաղթահարման ուղիները, մշակվում են մասնավոր հատվածի ներգրավմամբ անտառվերականգնման տարբեր սխեմաներ ու ռիսկերի մեղմացման մեխանիզմներ: Նախագծի արդյունքները կամփոփվեն երկու համապատասխան զեկույցներում, որոնցից առաջինը կվերաբերի անտառվերականգնման համար ագրոկենսաբազմազանության գնահատմանը իսկ մյուսը՝ անտառվերականգնման գործում մասնավոր հատվածի ներգրավման հնարավորությունների

բացահայտմանը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 15 372 000 դրամ: Ծրագիրը կտևի մինչև 2021 թ. հունիս:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՆԳՈՒՅՑ (ՀԱԲ)

2020 թ. նոյեմբերին մեկնարկել է ՀԱԱՀ-ի և Կանաչ արահետ ՀԿ-ի միջև համագործակցությունը՝ ԵՄ-ի «EU4Youth–Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում՝ սահմանային գյուղերում կանաչ առաջընթացի համար» ծրագրի շրջանակում: Համագործակցության արդյունքում՝ ՀՀ Լոռու մարզում կստեղծվի Գյուղական նորարարական գիտելիքի հանգույց (ՀԱԲ), որը նպատակ ունի կարողությունների զարգացման միջոցով աջակցել երիտասարդների զբաղվածությանը և ստեղծել նպաստավոր էկոհամակարգեր սոցիալական ձեռներեցության և կանաչ նորարարության համար: Գիտելիքի հանգույցը կտեղակայվի ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղում և ծրագրի շահառուներին կտրամադրի համապատասխան գիտելիք, որի շնորհիվ վերջիններս կկարողանան ինքնուրույն իրականացնել գյուղատնտեսական աշխատանքներ և սկսել ագրոտեխնոլոգիական ձեռնարկատիրություն: Հիմնական շեշտը դրվելու է հետևյալ խմբերի ներգրավվածությունն ապահովելու համար՝ երիտասարդներ (տարիքը՝ 15-29 տարեկան), կանայք, աղջիկներ, ներքին կարգով տեղահանված բնակիչներ, էկո-միգրանտներ, սոցիալական խոցելի խմբեր, հաշմանդամություն ունեցող անձիք, ազգային և կրոնական փոքրամասնություններ: Հանգույցի արդյունավետությունը և կայունությունը ապահովելու նպատակով՝ «Կանաչ արահետ» ՀԿ-ի հետ համատեղ, ԵՄ-ի աջակցությամբ, կիրականացվի տարածքի վերանորոգումը, ինչպես նաև շահառուների համար դասընթացների ու այլ միջոցառումների կազմակերպումը: Ծրագրի ընդհանուր տևողությունը երեք տարի է, ՀԱԲ-ի ստեղծման համար կտրամադրվի 10 000 ԱՄՆ դոլար:

ՀԱԱՀ-Ի, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ԵՊՀ) ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖՐԴՐԻԽ-ԷԲԵՐՏ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (FES) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2020 թ. դեկտեմբերին մեկնարկել է ՀԱԱՀ-ի և ԵՊՀ-ի միջև համագործակցությունը՝ ՀԱԱՀ-ի «Կայուն գյուղատնտեսություն» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակում: Նախաձեռնության նպատակն է ակտիվացնել միջհամալսարանական և միջդիսցիպլինար փոխգործակցությունը՝ հատկապես գյուղական սոցիոլոգիայի և ագրոսոցիոլոգիայի ոլորտներում երկկողմանի հետաքրքրություններ ներկայացնող ուսումնակրթական, գիտական և խորհրդատվական բնույթի համատեղ ծրագրերի իրականացման միջոցով: Այս նպատակով՝ գերմանական Ֆրդրիխ-Էբերտ հիմնադրամի (FES)-ի աջակցությամբ կիրականացվի «Հայաստանում գյուղականության ճգնաժամը – գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների սոցիալական պաշտպանության հնարավորություններ» թեմայով համատեղ հետազոտական ծրագիրը: Ներգրավված գիտնականները և ուսանողները կուսումնասիրեն ՀՀ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների սոցիալական պաշտպանության մեխանիզմները, ինչպես նաև արժանապատիվ կենսակերպին, սոցիալական հավասարությանը և աշխատանքային իրավունքների իրացմանն առնչվող մարտահրավերները: Արդյունքում՝ կառաջարկեն գյուղատնտեսությամբ զբաղվողների սոցիալական ռիսկերը և դրանց հետևանքները (հատկապես միգրացիան) մեղմելու տարբեր ուղիներ ու սոցիալական պաշտպանության մեխանիզմներ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 14 450 000 դրամ: Ծրագիրը կտևի մինչև 2021 թ. սեպտեմբեր:

ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Չնայած 2020 թ. հիմնականում անցավ արտակարգ իրավիճակի պայմաններում, Ագրարային համալսարանում հնարավոր եղավ պահպանել ուսումնաօժանդակ ենթակառույցների ստեղծման ու վերակառուցման տեմպը: Համալսարանն ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի փոխակերպելու տեսլականին հասնելու ճանապարհին բուն համալսարանում և ուսումնափորձնական տնտեսություններում իրականացվող շինվերակառուցողական աշխատանքները շարունակվել են:

Վերանորոգվել են 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ մասնաշենքերի լսարանները, աշխատասենյակները, ճեմասրահներն ու աստիճանավանդակները, վարժարանի ուսուցչական և լաբորատոր տարածքները, Անատոմիայի, ֆիզիոլոգիայի և մորֆոլոգիայի ամբիոնի նոր տարածքը՝ կից լսարաններով, սանհանգույցները լրակառուցվել են թեքահարթակներով: Միհր Մելքոնյանի անվան լսարանը հիմնանորոգվել և կահավորվել է իր զավակների կողմից:

Անվտանգության նկատառումներով ներդրվել է ՀԱԱՀ քոլեջի հրդեհաշիջման և ջրամատակարարման համակարգ, կատարվել է ավտոտնակների տանիքների փոխարինում և ծխարանածածկի կառուցում: 6-րդ մասնաշենքի կոյուղաջրերի «չհեռացման» բազմամյա խնդիրը լուծվել է կոյուղու համակարգ նախագծելու և կառուցելու շնորհիվ:

Բալահովիտի ՈՒՓՏ-ում կառուցվել է կանաչ կերի արտադրամաս, որի հետագա աշխատանքին աջակցելու համար պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱԿԲԱ հիմնադրամի հետ:

Շինվերանորոգման աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 2236 քառ. մ, ծախսվել է ավելի քան 70 մլն դրամ գումար:

ՀԱԱՀ-ի և Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի գործակցային շրջանակում ՀԱԱՀ-ում շահագործման հանձնվեց Ջրային և հողային ռեսուրսների կառավարման հետազոտական կենտրոնը, որի կահավորման և սարքավորումներով հագեցման համար տրամադրվել է 35 700 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

ՀԱԱՀ տարածքում շահագործման հանձնվեց ֆարմբոտ ռոբոտային համակարգով նորարարական ուսումնաարտադրական ջերմատունը: Այն կլինի ՀԱԱՀ ուսանողների արդյունավետ փորձուսուցում անցկացնելու հիանալի վայր: Ջերմատանն օգտագործվելու է «խելացի» կառավարման համակարգ:

Կառուցված լաբորատորիաներին ավելացան Abionet նախագծի շրջանակում ստեղծված սննդի անվտանգության և օրգանական գյուղատնտեսության լաբորատորիաները: Վերջիններիս կահավորման և զինման համար Վիեննայի BOKU համալսարանի հետ համատեղ իրականացվող Օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրի և Էրազմուս+ ծրագրի աջակցությամբ ձեռք բերվեցին մոտ 45 մլն դրամի սարքավորումներ:

Ամբողջությամբ վերակառուցվել և սարքավորումներով հագեցվել է Ագրոթեք ինկուբատորի աշխատանքային տարածքը: Այն արդեն իր դռներն է բացել ագրոտեխնոլոգիական մարտահրավերներին դիմակայելու պատրաստ թիմերի առջև:

Բարերարների ներդրումներով «բաց տարածք» ոճով վերանորոգվել և այժմ կահավորման ընթացքում է նախկին մամուլի սենյակը, որը կծառայի համալսարանի ուսանողությանը և դասախոսական կազմին իրականցնելու բազմապիսի

քննարկումներ, շնորհանդեսներ, սեմինարներ և այլ միջոցառումներ: Նմանատիպ մեկ այլ սենյակի վերանորոգման և կահույքի ձեռքբերման գործում զգալի աջակցություն է ցուցաբերել Արդշինբանկ ՓԲԸ-ն: Վերջինիս հետ համատեղ ջանքերով համալսարանը կունենա ևս մեկ կահավորված ընթերցասրահ, որը կծառայի կրթության որակի բարձրացմանը և գիտելիքահեն միջավայրի բարելավմանը:
Գերմանական «Ֆոլկսվագեն» հիմնադրամի ֆինանսավորմամբ համալսարանում կիրագործվի «Մեթանի ձևավորումը սուլֆիդ և նիտրատ պարունակող մնացորդային միջավայրերում» (AZ93573) դրամաշնորհային ծրագիրը 2020-23 թթ. ընթացքում: Ծրագրի իրականացման համար կտրամադրվի ավելի քան 100 000 եվրո գումար: Ծրագրի շրջանակում համալսարանում կստեղծվի Բնապահպանական կեսաքիմիայի լաբորատորիա:
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ համալսարանի մասնագետների աջակցությամբ մշակվում է գինու ոլորտում դուալ մասնագիտական կրթական ուսուցման ծրագիր: Նախագիծն իրականացվելու է մինչև 2021 թ. հուլիսի վերջ, տրամադրվող գումարը շուրջ 17 մլն դրամ է:
ՀԱԱՀ-ի և Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների (FAST) հիմնադրամի համատեղ գործունեության արդյունքում ՀԱԱՀ-ում կյանքի կկոչվի ևս մեկ նորարարություն՝ կապված մագիստրոսական կրթության և հետազոտական աշխատանքների բարելավման հետ. համալսարանում նախատեսվում է ուսուցանել Գիտության հետազոտման մեթոդաբանություն և գիտության առևտրայնացում մոդուլը: Վեց ամիս տևողությամբ ծրագրի ընթացքում Սննդամթերքի անվտանգություն, Ագրոբիզնես և ֆինանսներ կրթական ծրագրերի մագիստրանտները կծանոթանան հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը, գրականության մշակման առանձնահատկություններին, հետազոտության արդյունքների ներկայացման եղանակներին և ձևերին: Դասընթացը մշակվում է և անցկացվելու է FAST հիմնադրամի կողմից՝ Բրիտանական խորհրդից ֆինանսավորվող Creative Spark ծրագրի շրջանակում: Ծրագրի գործընկերը Միացյալ Թագավորության Ասթոնի համալսարանն է:
FAST հիմնադրամի և ՀԱԱՀ-ի գործակցության շրջանակում նաև ՀԱԱՀ-ի շուրջ 46 աշխատակիցներ և ուսանողներ անվճար հիմունքներով կմասնակցեն Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպվող անգլերենի առցանց դասընթացներին, որոնց հաջող ավարտից հետո նրանք կստանան հավաստագիր:
Շարունակվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ գործող «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության և ՀԱԱՀ ակտիվ համագործակցությունը: Այս համագործակցությամբ նախատեսվում է ստեղծել Կաթնամթերքի վարպետաց դպրոց Բալահովիտ ՈՒՓՏ-ում և առցանց ագրոխորհրդատվական հարթակ՝ հատուկ հավելվածով: Ագրոխորհրդատվական հարթակի պիլոտային նախագիծը կիրականացվի անասնապահության ոլորտի համար, իսկ նախագծի գաղափարի կենսունակությունը հաջողությամբ փորձարկելուց հետո հարթակում կներառվեն այլ ուղղություններով ագրոխորհրդատվության հնարավորություններ:
«Մարդը Կարիքի Մեջ (People in Need)» ԲՀԿ հայաստանյան ներկայացուցչության, «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ի և ՀԱԱՀ «Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի

անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի ստորագրած հուշագրի շրջանակում նախատեսվում է մասնաճյուղում ստեղծել կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիայի ուսումնափորձարարական լաբորատորիա, որի նպատակն է արտադրական պրակտիկաների առավել արդյունավետ կազմակերպումը և կաթի վերամշակման ոլորտներում մասնագիտական կրթության զարգացումը:
ՀԱԱՀ-ի, ԵՄ կողմից ֆինանսավորվող և Ավստրիական զարգացման գործակալության կողմից համաֆինանսավորվող Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն (EU-GAIA) նախագծի միջև ստորագված հուշագրի շրջանակում, մասնավորապես, արդյունավետ համատեղ գործողություններ են նախատեսված՝ Ագրոնոմիական ու Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետների մի շարք ամբիոնների գործուն մասնակցությամբ: Դրանք ներառելու են գործունեության լայն շրջանակ՝ նորագույն տեխնոլոգիաների (այդ թվում՝ անօդաչու թռչող գյուղատնտեսական սարքի) ներդրումից մինչև փորձացուցադրական դաշտեր Ակունքի տնտեսությունում և Ճշգրիտ գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի ներդրում ՀԱԱՀ-ում:

ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Բալահովիտ» ուսումնափորձնական տնտեսության հիմնական նպատակն ուսանողների համար որպես գիտական, ուսումնական և գործնական-արտադրական բազա ծառայելն է:
«Բալահովիտ» ՈՒՓՏ-ն Ելիջա հանդամասում ներկայումս ունի 1077 հա հողատարածք, որի 400 հա տարածքի վրա 2020 թ. կատարվել են խոտհնձի և խոտհավաքի աշխատանքներ, կուտակվել է 633504 կգ խոտ:
2020 թ. հունվարի 1-ի դրությամբ «Բալահովիտ» ՈՒՓՏ-ի կաթնանասնապահական ֆերմայի խոշոր եղջերավոր կենդանիների և մատղաշի գլխաքանակը կազմել է 388 գլուխ, 31.12.2020 թ. դրությամբ՝ 336 գլուխ, գլխաքանակի նվազման պատճառը տնտեսության օպտիմալացման նպատակով խոտանված կենդանիների վաճառքն է: Կովկասյան գորշ ցեղատեսակը կփոխարինվի եվրոպական բարձրկաթնատու ցեղատեսակով, իսկ կիսաքանդ անասնաշենքն ապամոնտաժվելու է՝ նոր «խելացի» անասնաշենքերի կառուցման նպատակով: 2020-ին կառուցվել է հիդրոպոնիկ կանաչ կերի արտադրամաս: Զուգահեռաբար կառուցվելու է համակցված կերատեսակների, կենդանիների կենսագործունեության արդյունքներից ստացվող պարարտանյութի և վառելանյութի արտադրամասեր: Որպես արդյունք «Բալահովիտ» ՈՒՓՏ-ում կունենանք անթափոն արտադրություն:
Վաճառվել է 138 գլուխ մանր եղջերավոր կենդանի, ստացվել է 530 կգ ոչխարի և 80 կգ գառի բուրդ:
2020 թվին արտադրվել է 107615 կգ կաթ, որից 94104 կգ իրացվել է:
«Բալահովիտ» ՈՒՓՏ-ում ուսումնական, արտադրական, նախադիպլոմային փորձուսուցումներ պետք է անցնեին ՀԱԱՀ-ի բոլոր ֆակուլտետների բակալավրիատի, մագիստրատուրայի, նաև քոլեջի և հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողները: Տնտեսության տարածքում նախատեսվել է պոլիգոն, որտեղ ագրարային ճարտարագիտության տարբեր մասնագիտությունների ուսանողները պետք է սովորեն գյուղ-

տեխնիկայի աշխատանքի նրբությունները: Սակայն COVID-19 համավարակով պայմանավորված՝ վերոնշյալ գործընթացները չեն իրականացել:

ՈՍԿԵՀԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2020 թ. ընթացքում «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում մշակվել է 4 հա նորատունկ (տնկված 2017 թվականին) և 8 հա բերքատու (տնկված 2015 թվականին) խաղողի այգիները: 8 հա բերքատու խաղողի այգուց հավաքվել է 66120 կգ խաղող, որից 17725 կգ մթերվել է Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի կողմից, իսկ մնացած 48395 կգ վաճառվել է շուկայականից բարձր գներով (Հաղթանակ՝ 350 դր., Չարենցի՝ 160 դր., Կանգուն՝ 250 դր.):
2020 թ. «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում մշակվել է նաև 3,8 հա նախկին արևային ջերմոցների տարածքում գտնվող ծիրանենու բերքատու, 1,5 հա ոչ լիարժեք այգին: Ստացված բերքը վաճառվել է:
2020 թ. ընթացքում Արգենտինայի դեսպանատան և AGBU-ի հետ համագործակցության շրջանակներում «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում հիմնվել է կաթիլային ոռոգման համակարգ՝ իր բոլոր ենթակառուցվածքներով: Համակարգի փորձարկման և ուսումնակրթական նպատակով մշակվել է 2 հա վարունգ: Ստացված բերքը վաճառվել է:
Համագործակցության պայմանագիր է կնքվել ՖՐՈՒՏԵՆԻԱ ծրագրի հետ, որի շրջանակում «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում կհիմնվի 1,5-2,0 հա պտղատու ինտենսիվ այգի՝ նորագույն սորտերով, որը նպատակ ունի հնարավորություն ընձեռել ուսանողներին և մասնավոր հատվածին ծանոթանալ պտղաբուծության համեմատաբար նոր տեխնոլոգիաներին: Այգու հիմնման աշխատանքները սկսվել են 2020 թվականի աշնանը:
2020 թվականի աշնանը «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում առաջին անգամ հիմնվել է 10 հա բարձրորակ սերմնացու ցորենի դաշտ: Վերջինիս բերքահավաքը ակնկալվում է 2021 թվականին:

ՈՍԿԵՀԱՏԻ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2020 թ.-ին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը մթերել է 55405 կգ խաղող, որից 17725 կգ-ը՝ սեփական գինու արտադրության համար: Կենտրոնը վճարովի գինեգործական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել ոլորտում սկսնակ «Վայն Ֆորմուլա» ՍՊԸ-ի հետ, որի համար մթերվել է 37680 կգ խաղող և պատրաստվել են գինիներ:
2020 թ. ընթացքում շարունակվել է 2019 թ. սեպտեմբերից սկսված «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության» (GIZ) հետ համագործակցության շրջանակում իրականացվող սիրիահայերի ինտեգրման ծրագիրը, որը կնպաստի ոլորտում նոր «խաղացողների» ավելացմանը և փոքր ու միջին գինեգործական բիզնեսի զարգացմանը: Բացի դրանից, ծրագրի ընթացքում մասնակիցները ստանում են տեսական և պրակտիկ արդի գիտելիքներ, ծրագրի 6 մասնակիցների համար պատրաստվել են 6 տարբեր տեսակի գինիներ:
2020 թ.-ին կենտրոնը շարունակել է սերտորեն համագործակցել «Ի ՎԻ ԷՆ» գինու ակադեմիայի հետ՝ տրամադրելով արտադրական տարածք և արտադրական պրակտիկաների իրականացման հնարավորություն:

2020 թ.-ին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնում իրականացվել են մի շարք գիտափորձեր: Վերոնշյալ գիտափորձերը արդյունք են կենտրոնի և «Խաղողագործության և գինեգործության» հիմնադրամի համագործակցության: Տվյալ պահին կենտրոնի մասնագետների ղեկավարությամբ ագրարային համալսարանի երկու մագիստրանտներ իրենց հետազոտությունները իրականացնում են կենտրոնում: Արված հետազոտությունների արդյունքները շուտով կտպագրվեն միջազգային գիտական պարբերականներում:
2020 թ.-ին շշալցվեցին և շուկա հանվեցին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի 2018 թվականին արտադրած «ՍԵՐՈՒՆԴ» կարմիր անապակ և «ՍԵՐՈՒՆԴ» հնացված կարմիր անապակ գինիները:

ԱԿՈՒՆՔ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ակունքի օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձարարական կենտրոնում շարունակվել են ակտիվ գյուղատնտեսական աշխատանքները, մասնավորապես հողատարածքի պարարտացում (գոմաղբի օգտագործմամբ) և հողի վար:
Ոռոգման գործընթացը բարելավելու նպատակով Ակունքի օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձարարական կենտրոնի տարածքում կառուցվել է 600 խ.մ. ծավալով ջրավազան:

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱԱՀ Որակի գնահատման և ապահովման կենտրոնը որդեգրել է հետազոտահեն և փաստարկված գործելաոճը: Այսպես, որոշումների կայացման և ռազմավարական նպատակներին հասնելու համար կենտրոնը 2020 թվին նախաձեռնել և իրականացրել է մի շարք հետազոտություններ.

- Ուսանողների կողմից դասընթացի և դասախոսների գնահատում
- «Հեռավար կրթության նկատմամբ վերաբերմունք և փորձ» ուսանողների շրջանում, որակական և քանակական հետազոտություններ:
- «Հեռավար կրթության նկատմամբ վերաբերմունք և փորձ» դասախոսների շրջանում, որակական և քանակական հետազոտություններ
- ՊԴ կազմի կարիքների վերհանում, քանակական հետազոտություն
- ՊԴ կազմի գործունեության գնահատում, քանակական հետազոտություն

Վերջին երկու հետազոտությունների դաշտային աշխատանքներն ավարտվել են 2020 թ. դեկտեմբեր ամսին և տվյալներն այժմ գտնվում են մշակման փուլում:
Հեռավար կրթության նկատմամբ վերաբերմունքի և փորձի ուսումնասիրությունները դասախոսների և ուսանողների շրջանում ցույց տվեցին, որ՝

- ✓ Երկու խումբն էլ 60 % և ավելի դեպքերում բավարարված է հեռավար կրթության իր փորձից: Հիմնական դրական գործոններն են՝ ռեսուրսների խնայողություն (ժամանակային, ֆինանսական և այլն), վիզուալ նյութերի ցուցադրման հնարավորություններ:
- ✓ Սակայն երկու խմբերում էլ մոտ 40-50 % դեպքերում նախընտրում են կրթության կազմակերպման ոչ հեռավար կամ հիբրիդային տարբերակը:
- ✓ ՀԱԱՀ-ն իրենց մտերիմներին խորհուրդ տալու հավանականությունն ավելի բարձր է ուսանողների մոտ (NPS=16): Դասախոսների մոտ նույն ցուցանիշը

բացասական ինդեքս ունի (-2): Հիմնականում դժգոհությունները պայմանավորված են ցածր աշխատավարձերով և լաբորատոր ոչ բավարար պայմաններով:
Բոլոր հետազոտությունների համար կազմվել են ամփոփ հաշվետվություններ, որոնք հասանելի են ՀԱԱՀ պաշտոնական կայքէջի ՈԳԱ կենտրոնի հաշվետվության բաժնում:
Ընթացիկ տարվա ընթացքում շահագրգիռ խմբերի քննարկումների արդյունքում իրականացվել է նաև դասախոսությունների գնահատման (դասալսման) հարցաթերթիկի, առարկայական ծրագրերի և ասպիրանտական անհատական ուսումնական պլանների ձևաչափերի վերանայում և վերամշակում:
Կենտրոնը ֆակուլտետների հետ համատեղ իրականացրել է մագիստրոսական ծրագրերի վերանայում և խոշորացում, որի արդյունքում ՀԱԱՀ-ում նախկինում իրականացվող 44 մագիստրոսական կրթական ծրագրերի փոխարեն այսօր իրականացվում է 22 մագիստրոսական կրթական ծրագիր, իսկ բակալավրի 31 կրթական ծրագրերի փոխարեն՝ 20 կրթական ծրագիր:
2019-ին համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական այցից հետո, փորձագետների կողմից տրամադրված խորհրդատվությունների հիման վրա, կենտրոնը, ներգրավելով համալսարանի ստորաբաժանումներին ու ապահովելով մասնակցային սկզբունքը, մշակել և «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին է ներկայացրել թերությունների վերացման ՀԱԱՀ ծրագիրը:
Կենտրոնը 2020 թ. երրորդ եռամսյակից նախաձեռնել են հանդիպում-քննարկումներ, ինչպես նաև մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, կառավարման, կազմակերպման, ընթացիկ մոնիտորինգի և բարելավմանն ուղղված վարչական և ՊԴ կազմի վերապատրաստումներ, որոնք առավել լայնածավալ կիրականացվեն 2021 թ. ընթացքում:
Նոր հաստատված ՀԱԱՀ ռազմավարական պլանի գործունեության առանցքային ցուցանիշներով արդյունավետության գնահատման նպատակով վերլուծվել են 2019 թ. առանցքային ցուցանիշներով հավաքագրված տվյալները, 2020 թվականի փաստացի արդյունքը և 2021 թ. պլանավորվող արդյունքները:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական կազմակերպությունների ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործման, որոշ գիտական աշխատանքների կրկնության բացառման, առկա գիտական սարքավորումների, շինությունների ծանրաբեռնված և արդյունավետ օգտագործման, միջազգային գիտական կառույցների հետ համագործակցության հնարավորությունների ընդլայնման նպատակով համալսարանի հոգաբարձուների խորհրդի 2020 թ. օգոստոսի 25-ի նիստի որոշմամբ որպես առանձին ստորաբաժանումներ գործող «Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի հետազոտական կենտրոնը» և «Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիան» միավորվել են «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղին և գործունեությունը շարունակել վերջինիս կազմում: Առկա գիտատեխնիկական ռեսուսների միացյալ օգտագործումը նախադրյալներ է ստեղծել գիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման, գործնական կիրառության և միջազգային գիտական ծրագրերին մասնակցության համար: Այսպիսով՝ ՀԱԱՀ գիտա-

հետազոտական աշխատանքները գլխավորապես կազմակերպվել են 3 գիտական կենտրոնների, 2 գիտահետազոտական ինստիտուտների և 5 հետազոտական կենտրոնների միջոցով: Մասնավորապես, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգով» իրականացվել է 12 գիտական ծրագիր, իսկ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում է ստացել 11 ծրագիր:

Համալսարանի գիտական կառույցների և ստորաբաժանումների՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 236,4 մլն դրամ: Գիտական կենտրոնների արտաբյուջետային մուտքերը կազմել են 56,8 մլն դրամ, որից 10,95 մլն դրամը ֆերմերների հետ համատեղ գիտահետազոտական գործունեությունից, իսկ 5,5 մլն դրամը ֆերմերային տնտեսություններին մատուցված խորհրդատվական ծառայություններից մուտքերն են:

ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման ընդունված կարգի համաձայն՝ առավել ընդլայնված տեմպերով է իրականացվել գործող մեխանիզմներին համապատասխան դասախոսների գիտական գործունեության խթանումը: 2020 թ. ընդունվել է 115 գիտական աշխատանք և 81 հեղինակներին վճարվել է 2,867 մլն դրամ լրավճար, ինչը մոտ 2,4 անգամ ավելին է, քան 2019 թ. 38 շահառուին 57 հոդվածի համար վճարված 1,223 մլն դրամը:

Վերանայվել է գիտական ծրագրերի ուղղվածությունը՝ նպատակ ունենալով արտադրության գործընթացում կիրառելի, խնդիրներին գիտական լուծումներ տալու հնարավորությունների օգտագործումը: Աշխուժացել է միջազգային գիտական ծրագրերին մասնակցության հայտերի ներկայացման գործընթացը, արդյունքում էականորեն ավելացել է շահած հայտերի և մեկնարկած գիտական ծրագրերի թիվը:

Հաշվի առնելով երկրի պարենային անվտանգության խնդիրների լուծման հրատապությունը, մասնավորապես ցորենի բարձր վերարտադրության (էլիտային) սերմերի պահանջարկի բարձրացումը՝ համալսարանի գիտական և ուսումնական փորձարարական տնտեսություններում հաշվետու տարվա աշնանը 106 հա-ի վրա կատարվել է աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմերով ցանք: Իրականացվում է նաև սերմերի հավաստագրման գործընթաց:

Հրապարակված գիտական հոդվածների և գիտաժողովների զեկույցների թիվը 143 է, որից 115-ը գիտական հոդված, իսկ 28-ը՝ գիտաժողովների զեկույցներ:

Շարունակվել են Ագրարային համալսարանի «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական ամսագրի որակի բարելավման աշխատանքները, ներդրվում է հոդվածների ներկայացման և հրատարակման գործընթացի թափանցիկության ապահովման ծրագրային համակարգ:

Գիտական գործունեության համառոտ նկարագիրը ներկայացված է ստորև.

Հ/h	Գիտական կազմակերպությունների և ստորաբաժանումների անվանումը	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը, հազ. դրամ	Հաստիքային միավորումներ	Կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը	Հրատարակված հոդվածների թիվը	Կոնֆերանսներին մասնակցություն
1	2	3	4	5	6	7
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ						
1	**«ԱԳՐՈԿԵՆՍԱ-ՏԵԽՆՈԼՈ-ԳԻԱՅԻ»**	**24764.4**	**15.5**	Գիտական կենտրոնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները. **1. Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացում** Կարտոֆիլի հեռանկարային 4 սորտերի համար մշակվել են թերմոթերապիայի, բույսերի վիրուսազերծման, ռեգեներացման, միկրոբազմացման, միկրոպալարների մակածման, ջերմատան և աերոպոնիկ պայմաններում մինիպալարների ստացման տեխնոլոգիաներ: Խաղողի՝ 10, մոռի՝ 2, հաղարջի՝ 1, էուստոմայի (Lisianthus)՝ 5, մեխակի՝ 2 սորտերի համար մշակվել են ռեգեներացման և միկրոբազմացման տեխնոլոգիաներ: Ոչ ավանդական, կարևոր նշանակություն ունեցող գյուղ. մշակաբույսերի փորձանոթային բույսերի համար մշակվել են ադապտացիայի տեխնոլոգիաներ: Աէրոպոնիկ համակարգում բարելավվել են բույսերի (կարտոֆիլ, խաղող) սննդառության տեխնոլոգիաները: Ցորենի տեղական և արտասահմանյան մի շարք սորտերի համար սկսվել են in vitro եղանակով աբիոտիկ գործոնների	**10**	4

				նկատմամբ դիմացկանության որոշման աշխատանքներ: Իրականացվել են մի շարք արժեքավոր գյուղատնտեսական, դեկորատիվ, ծաղկային և դեղատու բույսերի միկրոբազմացման աշխատանքներ: **2. Մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների ազգային գենբանկ** Գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների տարբեր տեսակների շուրջ 100 նմուշ դրվել է Ex situ երկարատև պահպանության: Կատարվել է փաստաթղթավորում, տվյալները մուտքագրվել են համակարգիչ՝ ICARDA-ի ձևաչափով: Վերարտադրվել է ցորենի տեղական 2 հինավուրց սորտ: ՀՀ տարբեր մարզերում (Վայոց ձոր, Կոտայք, Տավուշ, Լոռի) իրականացվել են գիտարշավներ, մասնավորապես ուսումնասիրել են բուսականության բազմազանությունը, տեսակների տարածման արէալները և դրանց համակեցությունները: Իրականացվել են բույսերից նմուշառումներ, հավաքվել են մի շարք բույսերից սերմեր, հետագա բազմացման և գենբանկում պահպանման նպատակով: Ռուսաստանի Դաշնության Բիոքիմիական ֆիզիկայի ինստիտուտի մասնագետների հետ համատեղ շարունակվել են մելանինի և դրոժների ազդեցության ուսումնասիրությունները in vitro բույսերի աճի և զարգացման օրինաչափությունների վրա: Ձեռք բերված արդյունքները մշակվել են և պատրաստ են հրատարակման: ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հետ համատեղ շարունակվել են խաղողի վիրուսների ուսումնասիրման աշխատանքները: Շարունակվել են նաև նեմատոդների դեմ կենսաբանական		

				պատրաստուկի փորձարկումները ֆերմերային տնտեսություն-ներում՝ ջերմատան պայմաններում: ՄԱԿ-ի ՊԳԿ–ի աջացությամբ մշակվել է Գործողությունների ստանդարտ ընթացակարգեր՝ խաղողի in vitro բազմացման համար. ներմուծում, ռեգեներացիա և վիրուսազերծ բույսերի միկրոբազմացում թեմայով:		
1.1		**6474.8**	**4.75**	***ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*** **1. Արշավախմբային ուսումնասիրություններ**: Պահպանվող սերմային նմուշների հավաքածուն հարստացնելու, ինչպես նաև մշակաբույսերի վայրի ցեղակիցների տարածման արեալ-ներում մոնիտորինգի իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են գիտարշավային ուսումնասիրություններ Կոտայքի մարզում (Աբովյանի, Հրազ-դանի, Նաիրիի տարածարջաններ): Ճշտվել են վայրի բանջարային, արոմատիկ և դեղատու բույսերի աճելավայրերը, արձանագրվել են GPS-ի տվյալները, հավաքվել են սերմեր և բույսերի վեգետատիվ օրգաններ (սիբեխի, ավելուկի, վայրի գազարի)՝ դրանց կուլտուրակա-նացման նպատակով: Արշավախմբային ուսումնասիրությունների ընթացքում հա-վաքված սերմերը նպաստել են սերմային հավաքածուի հարստացմանը՝ 37 նմուշով: Երկարաժամկետ (-18 °C) պահպանության է դրվել 16 սերմային նմուշ: Պատրաստվել է 18 թերթ հերբարիում: Ներկայումս պահպանվող նմուշների ընդհանուր քանակը կազ-մում է շուրջ 5560 սերմային նմուշ: Կատարվել է նաև հերբա-րիումային ֆոնդի գույքագրում. կենտրոնում պահպանվում է 1124 թերթ հերբարիում:	**3**	-

				2. Սելեկցիոն աշխատանքներ: Հաշվետու տարվա գարնանը Երկրագործության գիտական կենտրոնի փորձահողամասում ցանվել են գարու վայրի տեսակներ: Պարբերաբար իրականացվել են ֆենոլոգիական դիտումներ և քաղհանի աշխատանքներ: Երկրագործության գիտական կենտրոնում բուծված հասկավոր հացաբույսերի (ցորենաշորա, ցորեն, գարի) ցանքերում կատարվել են ֆենոլոգիական դիտումներ: Լաբորատոր պայմաններում կատարվել են բերքի կառուցվածքային տարրերի անալիզներ: 2020 թ. հոկտեմբերին Երկրագործության գիտական կենտրոնի փորձահողամասում կատարվել է աշնանային ցանք. բազմացման նպատակով ցանվել են գարու (3), ցորենաշորայի (2), հաճարի (1) և սխտորի (4) հեռանկարային գծեր և սորտանմուշներ: Վերարտադրության նպատակով ցանվել է ցորենի 6 տեսակի նմուշ: Վերարտադրության արդյունքում նմուշները կդրվեն երկարաժամկետ պահպանության: **3. Գենետիկական հետազոտություններ:** Ex situ հավաքածուից առանձնացվել են որոշ նմուշներ և ուղարկվել Նորվեգիայի Արկտիկական համալսարան (Տրոմսո)՝ կենտրոնի աշխատակիցների հետ համատեղ գենետիկական հետազոտություններ կատարելու նպատակով: **4. Փաստաթղթավորում**: Շարունակվել է Բույսերի անձնագրային տվյալների մուտքագրումը տվյալների բազա: Առկա ex situ հավաքածուի ևս 41 նմուշների անձնագրային (նմուշի համարը, կարգաբանական տաքսոնը, հավաքման ժամկետը և այլն) և GPS-ի տվյալներ: **5. Գիտական համագործակցություն:** Շարունակվում է գիտական համագործակցությունը «Գյուղատնտեսության զարգաց-		

				ման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցություն բույսերի մոլեկուլյար կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառում» ծրագրի շրջանակներում:		
1.2		**6189.2**	**3**	**ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** Նպատակ էր դրված կենսաքիմիական և տեխնոլոգիական ուղղություններով համալիր փորձարարական հետազոտություններ իրականացնելով ուսումնասիրել հապալասենու (Vaccinium L.) կենսաբանորեն ակտիվ նյութերի (ելնելով բույսի կենսաբժշկական հատկություններից) պարունակությունը, ստանալ թուրմեր, որոնք որպես հումք կօգտագործվեն ալկոհոլային և ոչ ալկոհոլային ըմպելիքների ստացման համար: Ելնելով բույսի կենսաբժշկական հատկություններից, ծրագրի շրջանակներում խորը ուսումնասիրություններ են իրականացվել Հայաստանում տարածված վայրի հապալասենու (Vaccinium L.) երեք տեսակի՝ Հապալասենի կապույտ կամ ճահճային (Vaccinium uliginosum), Հապալասենի մրտենական (Vaccinium myrtillus) և Հապալասենի կարմիր կամ սովորական (Vaccinium vitisidaea), կենսաքիմիական բաղադրությունը: Ծրագրի ընթացքում in vitro պայմաններում ուսումնասիրության ելանյութի ապահովման նպատակով իրականացվել են հապալասենու (Vaccinium L.) բազմացման (միկրոկտրոնավորման մեթոդ) և պահպանման աշխատանքները	**2**	**2**
2	**«ՈՍԿԵՀԱՏԻ ԽԱՂՈՂԱԳԻՆԵ-ԳՈՐԾՈՒԹՅԱՆ»**	**37608,0**	**15 հիմնա-կան, 8 սեզո-նային**	Գիտական կենտրոնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները. **1. Խաղողագործություն** Խաղողի աբորիգեն որոշ սորտերի աճեցման և իրացման, ինչպես նաև գիտական կենտրոնի Նալբանդյանի գիտա-	**6**	**4**

				փորձարարական տնտեսությունում խաղողի ինտենսիվ կոլեկցիոն այգու հիմնադրման նպատակով իրականացվել է աբորիգեն մի շարք սորտերի (100-ից ավելի) կտրոնների մթերում, կիլչեցում և տնկարանի հիմնում: Յուրարմատ արմատակալների աճեցման և իրացման համար տնկվել է 4 սորտերի մոտ 20000 կիլչեցված կտրոն, իսկ կոլեկցիոն տնկանյութի աճեցման համար՝ մոտ 1000 կտրոն: Հանվել է 2018-2019 թթ. Մերձավանի ֆերմերային տնտեսություններում հիմնադրված խաղողի տնկարանը: Արմատակալների մի մասը վերատնկվել է Երկրագործության գիտական կենտրոնի գիտափորձարարական տնտեսությունում հիմնադրված տնկարանում՝ հետագայում խաղողի Ազգային կոլեկցիոն այգու համալրման նպատակով: Նոր կոլեկցիոն այգիներ հիմնադրելու նպատակով 100 սորտերի 500 արմատակալներ փոխանցվել են Արարատի մարզի Նարեկ համայնքի ֆերմերային տնտեսություններից մեկին, 11 սորտերի 90 արմատակալներ՝ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրին: Իջևանի գինու գործարանի տարածքում ֆիլոքսերադիմացկուն սորտի պատվաստակալների վրա իրականացվել են տեղական մոտ 30 աբորիգեն սորտերի (սեղանի և տեխնիկական) կանաչ պատվաստի աշխատանքներ, որի արդյունքում կունենանք խաղողի՝ պատվաստված փոքր կոլեկցիոն այգի: Խաղողի գենոֆոնդի հավաքագրման և կոլեկցիոն այգիների համալրման նպատակով գիտարշավային հետազոտություններ են իրականացվել ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում, ինչպես նաև Արցախի խաղողագործական որոշ գոտիներում: Ապրոբացիոն աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ սորտեր		

				և կլոններ: Հայտնաբերվել և նկարագրվել են նաև մի շարք վայրի ձևեր: Գենետիկական ուսումնասիրությունների համար բոլոր հայտնաբերված և նկարագրված սորտերից, կլոններից և վայրի ձևերից վերցվել են նմուշներ (փոքր տերևներ): **2. Պտղաբուծություն** ***Վեգետացիայի ընթացքում հիմնական պտղատեսակների նկատմամբ իրականացվել են ֆենոլոգիական դիտարկումներ:*** Նալբանդյանի գիտափորձարարական տնտեսությունում պտղատու մշակաբույսերի լիարժեք տնկարան հիմնելու նպատակով պտղատու մշակաբույսերի մայրուտում տնկելու համար «Tree project» կազմակերպությունում նախապատրաստվել է պտղատուների տարբեր սորտերի 500 տնկի: ***Նույն տնկարանի առաջին դաշտի համար հավաքվել են պտղատուների մոտ 40 կգ կորիզներ և սերմեր:*** ***Առավել աչքի ընկած սորտերից մթերվել են կտրոններ, և Արագածոտնի մարզի Օշական գյուղում դրանցով կատարվել են աչքապատվաստի աշխատանքներ:*** ՀՀ տարբեր տնտեսություններում հայտնաբերվել, տեղորոշվել, նկարագրվել են տարբեր պտղատու մշակաբույսերի սորտեր, որոնք հետաքրքիր և օգտակար են հետագա բազմացման համար: **3. Գինեգործություն** Պատրաստվել և ուսումնասիրվել են խաղողի քիչ տարածված տեղածին սորտերից փորձնական գինենյութեր: Նշված գինենյութերում կատարվել են էնոքիմիայում ընդունված ֆիզիկաքիմիական և համազգայարանային հետազոտություններ, ինչպես նաև օրգանական թթուների և ֆենոլային նյութերի որակական և քանակական կազմի ուսումնասիրու-		

				թյուններ: Հետագա ուսումնասիրության նպատակով Արցախում պատրաստվել են գինենյութեր խաղողի աբորիգեն սորտերից (Խնդողնի, Պնդենի, Բանանց): Հետազոտությունների ուսումնասիրության արդյունքում բարձրակարգ գինիների արտադրության համար որպես հումք Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններում առաջարկվել են Ոսկեհատ, Կանգուն, Արենի, Կախեթ, Հաղթանակ, Կարմրահյութ սորտերից բացի օգտագործել Ճիլար, Օրդուցի ճիլար, Թոզոտ և Կողբենի սորտերը: **4. Համագործակցություն** Երկրագործության գիտական կենտրոնում խաղողի պատվաստված ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի աճեցման համար խորհրդատվություն է տրամադրվել պատվաստացու և պատվաստակալ կտրոնների նախապատրաստման, պատվաստի, ստրատիֆիկացիայի և այլ աշխատանքների իրականացման ուղղությամբ: In vitro բազմացման նպատակով «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն»-ին են փոխանցվել որոշ դեֆիցիտային սորտերի և ֆիլոքսերադիմացկուն սորտ պատվաստակալների կտրոններ: Մասնակցություն է ապահովվել՝ COST CA17111 «INTEGRAPE 2020» կողմից կազմակերպած երկրորդ տարեկան գիտաժողովին, «Multi-omics տվյալների ինտեգրացիա գենոտիպա-ֆենոտիպային ասոցիացիայի համար», մարտի 3-5, 2020 թ. Սլովենիա, Լյուբլյանա: 2020 թ. հոկտեմբեր-նոյեմբերին գիտական կենտրոնի Նալբանդյանի փորձարարական տնտեսությունում Նաիրի 68 սորտի սուպերէլիտային սերմացուով իրականացվել է 32 հա աշնանացան ցորենի ցանք և էլիտային վերարտադրության		

				սերմերի մատակարարման պետական ծրագրին մասնակցության համար ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին ներկայացվել է համապատասխան հայտ:		
3	**Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ»**	**89417.0**	**49 հիմնական, 15 գործավարձային**	Գիտական կենտրոնում աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով. **Գիտական կենտրոնի Երասխահունի փորձամելիորատիվ կայանի մելիորացված աղուտ-ալկալի հողերի պայմաններում ուսումնասիրություններ են կատարվել աշնանացան ցորենի լայնաշար ցանքի արդյունավետության բացահայտման ուղղությամբ՝** 1. աշնանացան ցորենի Վասսա, Նաիրի-68 և Տրիո սորտերով, լայնաշար եղանակով (22,5 սմ) ցանված ցանքերում բերքահավաքից առաջ իրականացվել են ֆենոլոգիական դիտարկումներ, բույսերի թիվը և կենսաչափական տվյալները հետազոտելու համար, 2. դիտարկումներ են կատարվել փորձնական նպատակներով ցանված սոյայի ցանքերում: **2020 թ. օգոստոսի 24-ից 28-ը ՀՀ Սպիտակի Հողաէրոզիոն հենակետում և Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի ֆերմերային տնտեսություններում կատարվել են հետևյալ գիտահետազոտական աշխատանքները.** - «Չոր-Հանդ» տեղամասում (20 հա) կատարված հակաէրոզիոն համալիր ագրոտեխնիկական, անտառմելիորատիվ և մարգագետնամելիորատիվ փորձերում դրվել են հողափոսեր և վերցված հողանմուշներում իրականացվել են լաբորատոր հետազոտություններ, - հակաէրոզիոն համալիրում իրականացվել են ֆենոլոգիական դիտարկումներ, որոշվել է բուսականության տեսակային	**25**	**2**

				կազմը, - հողերի ագրոարտադրական հատկությունների վրա երկարատև մշակության ազդեցությունը պարզելու համար 3 հա տարածքից և Սպիտակ համայնքին կից վարելահողերից վերցվել են հողանմուշներ, - իրականացվել են դիտարկումներ և հողանմուշներ են վերցվել նաև Ղազանչի և Ջրաշեն համայնքներից, ուսումնասիրվել են համապատասխան հողանմուշների որակական ցուցանիշները՝ NPK, մեխանիկական և միկրոագրեգատային կազմը, հումուսը և այլն: Լաբորատոր հետազոտությունների արդյունքների վերջնական տվյալներին համապատասխան տրվել են եզրակացություններ և առաջարկություններ: Ուսումնասիրվել են արդի հողօգտագործման և կլիմայի համընդհանուր փոփոխության ազդեցությունները Արարատի մարզի նախալեռնային գոտու գոտիական հողերում: Հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով գիտական կենտրոնի աշխատակիցների կողմից իրականացվել են խորհրդատվություններ Արարատի, Արմավիրի, Լոռու մարզերի ինչպես նաև գիտական կենտրոն դիմած այլ մարզերի ֆերմերներին: Իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ ինչպես պայմանագրային հիմունքներով, այնպես էլ գիտական հետազոտությունների կատարման նպատակով՝ ջրային քաշվածքի քիմիական կազմի, հողերի փոխանակային կատիոնների և կարբոնատների պարունակության, հողային լուծույթի ռեակցիայի և ոռոգման ջրի քիմիական կազմի ուսումնասիրությունների ուղղությամբ: Գիտական կենտրոնում իրականացվել են հետազոտու-		

				թյուններ «Հայաստանում ցեմենտի և պղնձի արտադրությունների թափոնների օգտագործման հնարավորությունները Արարատյան հարթավայրի աղուտ-ալկալի հողերի քիմիական մելիորացման բնագավառում» թեմայով: **2020 թ. ընթացքում գիտական կենտրոնում, համաձայն ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության («FAO») և համալսարանի միջև կնքված պայմանագրի, կատարվել են հետևյալ աշխատանքները.** 1. Հողի տեսակների բաշխման հիման վրա ընտրվել են Հայաստանի Հանրապետության 511 համայնքների հողային պրոֆիլներ, որոնք հավասարաչափ բաշխվել են 10 մարզերի հողատարածքում: Հիմք ընդունելով նախորդ տարիներին կատարված հետազոտությունները, որոնք ամփոփված են հաշվետվությունների ձևով, իրականացվել է համապատասխան համայնքների հողերի պրոֆիլների թվայնացում: 2. Կատարվել են Հայաստանի հողագիտական քարտեզի թվայնացման աշխատանքներ: Քարտեզի թվայնացումը իրականացվել է 1:100 000 մասշտաբով, ESRJ ձևաչափով: Ընդհանուր առմամբ թվայնացվել են մոտ 5200 հողային տիպեր, որոնք ներկայացված են որպես GIS ձևաթղթի առանձին պոլիգոններ: Բացի այդ, առանձնացվել են մակերևութային ջրերի առանձնահատկությունները (լճեր/ջրամբարներ և գետեր) թվայնացվել են որպես առանձին ձևաթղթեր: Հաշվետու տարում կատարվել են 42 պայմանագրային աշխատանքներ, որից 38-ը ֆերմերային տնտեսությունների, 1-ը՝ գիտական կենտրոնի (նոոսֆերային հետազոտական կենտրոն) և 3-ը՝ ՓԲԸ-ների հետ պայմանագրերով: Ընդհանուր նմուշների թիվը կազմել է 366, իսկ անալիզները՝ 969: 2020 թ. ընթացքում գիտական կենտրոնի աշխատակիցները		

				գործուղվել են Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջան՝ դաշտային հետազոտություններ կատարելու համար: Իրականացվել են հետևյալ աշխատանքները. 1. Հրազդանի տարածաշրջանի Բջնի, Սոլակ, Քաղսի համայնքների, Հրազդանի ցեմենտի գործարանի, Մեղրաձորի ոսկու հանքավայրի հարակից տարածքներում հողերի էկոլոգիատոքսիկոլոգիական վիճակը, նմուշառվել են 50-ից ավել անհատական հողանմուշներ: 2. Հիմնական հողափոսերի հարակից տարածքներից ընտրվել են նաև բուսական նմուշներ, ըստ տեսակային կազմի՝ կատարվել են լաբորատոր հետազոտություններ, որի արդյունքների հիման վրա հրատարակվել է մեկ գիտական հոդված: Հաշվետու ժամանակահատվածում «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի ընտրության մրցույթին ներկայացվել են «Արտարմատային սնուցման (տերևային սնուցում) նպատակով կիրառելու համալիր պարարտանյութերի սինթեզի տեխնոլոգիա, սինթեզում և փորձարկում» և «Սիս» կենսահումուսի տնտեսաէկոլոգիական արդյունավետությունը Հայաստանի Հանրապետության բնահողային գոտիներում» թեմաները, որոնք հաղթող են ճանաչվել մրցույթում և երաշխավորվել են ֆինանսավորման: Ծրագրերի աշխատանքների կատարման ժամանակահատվածը սահմանվել է 01.12.2020 թ. մինչև 30.12.2022 թ.: Հետազոտական աշխատանքներ են իրականացվել գիտական կենտրոնի Երասխահունի փորձամելիորատիվ կայանում աղուտ-ալկալի մելիորացված հողային պայմաններում պտղատու մշակաբույսերի (ծիրանի և սալորի տարբեր սորտերի) և		

				աշնանացան ցորենի Վասսա, Նաիրի-68 և Տրիո սորտերի ինչպես նաև կերային մշակաբույսերի (առվույտ, սոյա) նոր պարարտանյութերով՝ Զուլալ, Կոմպլեքսոն, Սիս պարարտացման և սնուցման տարբեր պայմանների, նորմերի և ժամկետների կիրառման ուղությամբ: Իրականացվել են գիտաշխատողների և աշխատակիցների որակավորման բարձրացման դասընթացներ՝ օտար լեզու (անգլերեն), ինֆորմատիկա (Word, Excel, PowerPoint) և աշխարհատեղեկատվական համակարգեր (GIS) ծրագրերով: Գիտական կենտրոնը մասնակցել և հաղթող է ճանաչվել UNDP հայտարարած դրամաշնորհային մրցույթում և շահել 20000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամաշնորհ՝ գիտական կենտրոնում առկա հողերի գիտական թանգարանի վերանորոգման աշխատանքների կազմակերպման նպատակով: Հաշվետու տարում ամբողջապես զոնոտիկ 2020 թ. սեպտեմբերից գիտական կենտրոնի Երասխահունի փորձամելիորատիվ կայանի տնտեսությունում Նաիրի 68 սորտի սուպերէլիտային սերմացուով իրականացվել է 60 հա աշնանացան ցորենի ցանք և էլիտային վերարտադրության սերմերի մատակարարման պետական ծրագրին մասնակցության համար ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին ներկայացվել է համապատասխան հայտ:		
	ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ					
4	**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ**	**16649.6**	**12.5**	**<u>Դաշտավարության մեքենայացման բաժին</u>** Աշխատանքներն ուղղվել են հետևյալ ենթաթեմաների կատարմանը. **«Հացահատիկացան շարքացանների ունիվերսալացում ցանող ապարատի և շաղացանքի սերմթաղիչ հանգույցի մշակումով»** ենթաթեմա.	**8**	**-**

				Հիմնավորվել են հացահատիկի ցանքի տեխնոլոգիայում շաղացանքի կիրառման առավելությունները, այդ թվում ցանքի բարձր համաչափության ապահովումը: Առաջարկվել է հացահատիկի շաղացանքի տեխնոլոգիայում ցանքի նոր եղանակ: Արդյունքում ունենք շաղացանքի տեխնոլոգիայում առաջարկվող ցանքի եղանակի սխեման՝ առանձին գործողությունների հերթականությամբ, որոշ մասի տեսական հիմնավորմամբ, սերմթաղիչ խոփիկի տեխնոլոգիական սխեման և կառուցվածքը: Ինչպես նաև պասսիվ գործողության ցրիչ-բաշխիչի տեխնոլոգիական սխեման և փորձանմուշը, որը ենթակա է կատարելագործման: **«Բազմամյա տնկարկների հողամշակ բանող օրգանների կառավարման համակարգ»** ենթաթեմա. Մշակել է էլեկտրամեխանիկական ազդանշանային համակարգով աշխատող հողամշակ բանող օրգանների դիրքի կառավարման համակարգ, հիմնավորվել է դրա կառուցվածքա-տեխնոլոգիական և կինեմատիկական ցուցանիշները: Այս հանգույցի կիրառմամբ հնարավոր կլինի արգելքների (մասնավորապես ծառի բների) շրջանցման ընթացքում արգելքի և շոշափոցի կոնտակտային փոխազդեցության ուժերը նվազեցնել 100-120 Ն-ից (հիդրոմեխանիկական՝ անմիջական կոնտակտով) մինչև 10-15 Ն սահմաններում: Նշված տեխնիկական սահմանափակումը հատկապես կարևոր է խաղողի, երիտասարդ և ինտենսիվ այգիների մշակման ժամանակ: **«Կանաչ կերերի ու բանջարեղենի հիդրոպոնիկ արտադրամասի համակարգի մշակում և պարամետրերի հիմնավորում»** ենթաթեմա.		

				Մշակվել, նախագծվել, պատրաստվել և լաբորատոր պայման-ներում փորձարկվել ու օպտիմալացվել են նոր նախագծված, պահարանում հատիկների ծլեցմամբ և հարկաշարերում կանաչ կերերի աճեցման խոնավացման ու ոռոգման ավտոմատացված համակարգի կառուցվածքատեխնոլոգիա-կան պարամետրերի և շահագործման ռեժիմները: Բարե-լավվել են աճեցման բաժանմունքի հարկաշարերի կառուց-վածքները: Առաջին անգամ փորձ է արվել հանքային տարրե-րից պատրաստված թանկարժեք և էկոլոգիապես վնասակար սննդարար լուծույթը փոխարինել օրգանականով՝ անաերոբ եղանակով խմորված ու ֆերմենտացված ջրիկ գոմաղբով: **«Բուսական ծագման հումքի սայրով վիբրոկտրման գործ-ընթացի ուսումնասիրություն և ռեոլոգիական մոդելավո-րում»** ենթաթեմա. Ենթաթեմայի շրջանակներում տեսական հետազոտության են ենթարկվել ջրային միջավայրում վիբրոկտրման գործընթացի ուժային պատկերը, կտրման ուժի և տատանման հանգույցի ուժային պարամետրերի կախվածությունը վիբրոկտրման գործընթացը պայմանավորող հիմնական գործոններից: Պատրաստվել է լաբորատոր-փորձարարական ստենդ՝ ջրային միջավայրում վիբրոկտրման գործընթացի գիտափորձնական ուսումնասիրության համար: Փորձ է կատարվել մոդելավորել սայրով կտրման ուժային գործընթացը ըստ ռեոլոգիայում հայտնի Բինգամի մարմնի մոդելի լարվածադեֆորմացիոն վիճակի: Կատարված մոդելավորման փորձը հնարավորություն կտա ուժային գործընթացների տեսական հետազոտություն-ներում կատարել որոշակի ճշգրտումներ և հստակեցումներ՝ գործնական կիրառության հեռանկարով:	

				<u>Ավտոմոբիլային փոխադրումների բաժին</u> Աշխատանքներն ուղղվել են **«Կոմերցիոն ավտոմոբիլների վառելանյութի շահագործական ծախսի նորմավորման մեթոդիկայի կատարելագործումն ըստ փաստացի երթային ռեժիմների»** ենթաթեմայի կատարմանը: Կատարվել են ուսումնասիրություններ միջհամայնքային ճանապարհներին հաստատուն երթուղիներով ուղևորափոխադրումներ ապահովող ԳԱԶել ընտանիքի միկրոավտոբուսների գազամոտորային վառելանյութի շահագործական և տեսակարար ծախսի վերաբերյալ: Ըստ մշակված ընդհանուր մեթոդիկայի ուսումնասիրվել են Աբովյան-Գեղարդ-Աբովյան և Գառնի-Գեղարդ-Գառնի երթուղիներում միկրոավտոբուսի շարժման ռեժիմները: Ուսումնասիրությունների արդյունքում դուրս են բերվել միկրոավտոբուսի շարժման ռեժիմների տևողության տեսակարար արժեքները, դրանց որպես պատահական մեծությունների բաշխման օրինաչափությունները՝ իրենց բնութագրերով: Մշակվել են ԳԱԶել միկրոավտոբուսի վառելանյութի ծախսի ցուցանիշների նորմաները միջհամայնքային ճանապարհներին: 2020 թ. բաժինը հագեցվել է SX-100K ավտոմոբիլային հեղուկ վառելանյութի էքսպրես անալիզի սարքով:	**5**	-
5	**ՍՆՆԴԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ**			**<u>Կենդանական ծագման հումքի և մթերքների վերամշակման տեխնոլոգիաների բաժին</u>** 2020 թ. ուսումնասիրությունների արդյունքում՝ - թարմացվել է բաժնի պրոբիոտիկների բանկը, - ամփոփվել և քննարկվել են նախկին չմշակված փորձարարական նյութերը, - թարմացվել է գրականությունը դեղաբույսերի և դրանց միկրոբիոմի վերաբերյալ,	**2**	-

		16511.2	**12.5**	- պատրաստվել է հրատարակման ձեռնարկ սննդային հավելումների վերաբերյալ: Հետազոտությունների արդյունքում ընտրվել են 15 կատալազային և 2 պերօքսիդազային ակտիվությամբ շտամներ, որոնք կարող են օգտագործվել համապատասխան պրոբիոտիկաթերապիաների ժամանակ՝ ինչպես անասնաբուժական նպատակներով, այնպես էլ առողջապահության ոլորտում: Սննդի անվտանգության տեսանկյունից՝ գործընթացները շարունակական են, պահանջում են շտամների տեսակային գնահատում, ինչն էլ նախատեսվում է 2021 թ. ուսումնասիրություններում:		
				<u>Բուսական ծագման հումքի և մթերքների վերամշակման տեխնոլոգիաների բաժին</u> Գիտական աշխատանքներ են կատարվել երեք արդի հետազոտությունների կազմակերպման և իրականացման ուղղությամբ. 1. Թզից կիսապատրաստվածքների ստացումը և կիրառությունը թխվածքաբլիթի արտադրության մեջ: 2. Խնձորի պեկտինային էքստրակտի կիրառման հետազոտությունը: 3. Կեքսի նոր տեխնոլոգիայի մշակում տարեկանի ալյուրի կիրառմամբ: Այդ հետազոտություններում ներգրավված են նաև մագիստրանտներ: Հաշվետու ժամանակահատվածում վերմուտների ստացման համար 39+1 բուսատեսակների թուրմերից պատրաստվել է 13 փունջ, որոնց կազմման համար նախապայման է հանդիսացել ֆրանսիական, ամերիկյան ոճի, ինչպես նաև իտալական չոր հայտնի վերմուտների համահոտային բնութագրերին նմա-	**4**	3

				նեցումը: Խաղողի գինիներին ավելացվել են բուսական թուրմերի փնջեր, ինչպես նաև սախարոզ՝ շաքարայնությունը կարգավորելու նպատակով: Փորձարկումներն իրականացվել են համընդունված և Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտներով սահմանված կարգով և մեթոդիկայով՝ գործարանային լաբորատորիայում: Կատարված ուսումնասիրություններից կարող ենք եզրակացնել, որ վերմուտները համապատասխանում են դրանց համար գիտական գրականությամբ և արտասահմանում սահմանված պահանջներին: Կարևորագույն ցուցանիշներ են հանդիսանում էթիլ սպիրտի պարունակությունը, ընդհանուր թթվությունը և շաքարայնությունը, որոնց արժեքները լիովին տեղավորվում են չոր վերմուտներին բնորոշ միջակայքում: Ուսումնասիրվել են տարբեր յուղատու սերմերի քիմիական առանձնահատկությունները և դրանցից արժեքավոր յուղ և երկրորդային հումքատեսակներ ստանալու եղանակները:		
				<u>Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին</u> 2020 թ. ուսումնասիրությունների արդյունքում՝ • «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի հետ համատեղ գնահատվել է Հայաստանի 13 աղբուրների ջրերում (գարուն, 2020 թ.) ձկների հիվանդությունների առկայությունը: Ջրի մանրէաբանական անալիզը ցույց է տվել, որ հետազոտված ջրերում բացակայում են Aeromonas salmonicida, Flavobacterium columnare և Haemophilus piscium հիվանդածին բակտերիաները: Ցածր կոնցենտրացիայով՝ 10 ԳԱՄ/մլ, Pseudomonas spp.և Yersinia ruckeri հայտնաբերվել են Գավառագետի և	**9**	**2**

				Կարճաղբյուրի ջրերում: Գավառագետում գրանցվել է նաև Proteus spp., իսկ Կարճաղբյուրում՝ 10 ԳԱՄ/մլ կոնցենտրացիայով՝ Edwardsiella ictaluri: Պայմանական հիվանդածին բակտերիաների ամենացածր ցուցանիշ գրանցվել է Բախտակի ջրերում: Հետազոտվող ջրերում գրանցվել են նաև Salmonella spp., Proteus spp, Budvicia aquatica, Enterobacter spp, Rahnella aquatilis, Morganella spp., Edwardsiella ictaluri, E. Coli բակտերիաներ և ստաֆիլակոկեր: Ջրերում E. coli և պայմանական հիվանդածին բակտերիաների կոնցենտրացիան ընդհանուր առմամբ չէր գերազանցում ստանդարտ մակարդակը՝ 5 ·10^4 ԳԱՄ/մլ: • Ընտրվել են ձկների բակտերիալ հիվանդությունների հարուցիչների դեմ նոր հակամանրէային կաթնաթթվային պրոբիոտիկներ և նախապատրաստվել են հիմքեր բակտերիական ծագմամբ ինֆեկցիաների կանխարգելակման նպատակով նոր հակամանրէային պատրաստուկի մշակման համար: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից առաջարկված երկու ծրագրերի հայտեր հաղթող են ճանաչվել, և մեկնարկել են հետևյալ թեմաներով երկու միջազգային ծրագրերը՝ «Հյուսիսային Կովկասում զոոնոտիկ ինֆեկցիաների ատլասի նախապատրաստում» և «Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար»:		
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ						
6	**ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱ-ԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒ-ԹՅԱՆ**	**5477.8**	**3.5**	Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **«ՀՀ գյուղատնտեսության զարգացման կլաստերային քաղաքականության առաջադրումը և դրա կիրառման նախադրյալները»** գիտական թեման, մասնավորապես՝ • ուսումնասիրվել է կլաստերային զարգացման միջազ-	**8**	**1**

				գային փորձը, տրվել է կլաստերի դասական բնորոշումները, • վեր են հանվել ՀՀ առանձին տարածաշրջանների ագրարային ներուժը և ագրոպարենային կլաստերների ձևավորման հնարավորությունները, ինչպես նաև այն խնդիրները, որոնք առկա են ու հնարավոր է լուծել հատկապես կլաստերային մոտեցումների կիրառմամբ, • ուսումնասիրվել են Հայաստանում և արտերկրում օրենսդրական, իրավական հիմքեր, նորմատիվային ակտեր, որոնք առնչվում են ագրարային ոլորտում կլաստերների ստեղծմանն ու զարգացմանը: Մշակվել են «Ագրարային նորամուծական կլաստերի մասին» ՀՀ օրենքի և «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագրի» նախագծերը, • նախագծվել են ՀՀ տարածաշրջաններում պտուղ-բանջարեղենի և հացահատիկի արտադրության կլաստերների կառուցվածքային և կառավարման համակարգի մոդելներ, որոնք կարող են օգտագործվել ոլորտի զարգացման ծրագրային փաստաթղթերում, • մշակվել է միջպետական բնույթի կլաստերների մոդել, տրվել ՀՀ և ԵԱՏՄ այլ անդամ երկրների հիմնական գործառույթները, • ներկայացվել են ՀՀ ագրարային ոլորտում կլաստերային քաղաքականության իրականացման փուլային միջոցառումները:		
				Կենտրոնի կողմից կիրառական հետազոտություններ են իրականացվել **տավարաբուծության, ոչխարաբուծության և այծաբուծության** ոլորտներում: Հետազոտություններ են կա-	**9**	1

7	**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ, ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**	**6474.8**	**5.0**	տարվել նաև գենետիկական և կենսաքիմիական ոլորտներում: **Տավարաբուծությունում** աշխատանքները շարունակվել են տոհմային երինջների աճեցման ուղղությամբ, մասնավորապես «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թթ. տավարաբուծության զարգացման» ծրագրի շրջանակներում: Բալահովիտի ուսումնափորձարարական և Սյունիքի մարզի «Վամաքս» տնտեսություններում շարունակվել են նորագույն տեխնոլոգիայով բարձրակիթ կովերի գիտաարտադրական փորձերը: **Այծաբուծության** ուղղությամբ շարունակվել են Հայաստանում կաթնային ուղղությամբ տոհմային այծաբուծական տնտեսության զարգացման աշխատանքները: Կատարվել են այծերի գենետիկական և կենսաքիմիական հետաքրքիր համեմատական հետազոտություններ՝ բազմապտուղ այծերի արյան և պոլիմորֆ սպիտակուցների կազմը, բազմապտղությունը պայմանավորող գենետիական մարկերներ մշակելու և գենոտիպավորում անցկացնելու նպատակով:		
9	**ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ**	**4624.9**	**3.5**	Հետազոտություններն իրականացվել են ներքոհիշյալ ուղղություններով. 1. Ուսումնասիրել և պարզել Սոթքի ոսկու հանքավայրից և հարակից տարածքներից դուրս եկող Սոթք և Մասրիկ գետերի ավազանի էկոլոգիական համակարգերի (ջրային և հողային) վիճակը և մշակել անհրաժեշտ միջոցառումների համակարգ: 2. Մշակել նորագույն տեխնոլոգիաներ՝ Սևանի ավազանի պայմաններում սննդային ռեժիմի, հողի խոնավության կարգավորման միջոցով ոռոգելի երկրագործության պայ-	**8**	3

				մաններում աճեցվող գյուղատնտեսական մշակաբույսերից բարձրորակ բերք ապահովելու նպատակով, տնտեսված ջրի հոսքի միջոցով նպաստելով Սևանա լճի մակարդակի բարձրացմանը, լճում ապրող բուսական ու կենդանական տեսակների աճին ու զարգացմանը և ջրային էկոհամակարգի էկոլոգիական վիճակի բարելավմանը: Այս նպատակների իրականացման համար լուծվել են հետևյալ խնդիրները. ա) առաջին անգամ կատարվել են Սոթքի լեռնահանքային արդյունաբերության տարածքներում գտնվող Սոթք և Մասրիկ գետերի ջրերի և հարակից ագրոէկոհամակարգերի հողերի նմուշառումներ, լաբորատոր հետազոտություններով որոշվել է ջրերի էկոլոգիատոքսիկոլոգիական վիճակը, մշակվել են միջոցառումներ, որոնց իրականացումը կնպաստի այդ համակարգի հավասարակշռված գործունեության ապահով-մանը, բ) Սևանի ավազանի պայմաններում հաշվետու ժամանակա-շրջանում առաջին անգամ դաշտային փորձերով ուսումնասիրվել է կենսատեխնոլոգիական նորագույն մեթոդ-ներով ստացված օրգանական պարարտանյութերի (սուպեր կոմպոստ, կենսահումուս), աճի խթանիչների (ազատ ֆուլվաթթու, կենսահեղուկ) և բարձր կլանողական հատկու-թյուններով բնական հանքային հումքատեսակների (ցեոլիտ, բենտոնիտային կավ) չափաքանակների և կիրառման եղանակների տնտեսաէկոլոգիական արդյունավետությունը կարտոֆիլի տնկարկներում, գ) փորձարկվող տարբերակներում գնահատվել են ցեոլիտի և բենտոնիտի տարբեր հատիկաչափերի ու չափաքանակների ազդեցությամբ հողում խոնավության պահպանման և		

				կարտոֆիլի ոռոգման ռեժիմի կրած փոփոխությունները՝ ETg ոռոգման չափիչ սարքի և ցուցիչների տեղադրման և ստացված բերքի տվյալների համադրման եղանակով: Հետազոտական կենտրոնի կողմից 2020 թ. նոյեմբեր-դեկտեմբերին նախապատրաստվել և ՀՀ ԿԳՄՍՆ ԳՊԿ-ին է ներկայացվել ‹‹Կլիմայի փոփոխության պայմաններում ՀՀ Արիդ և Սեմիարիդ տարածաշրջանների բնական կերահանդակների խոցելիության գնահատում և դրանց կառավարման վերաբերյալ միջոցառումների մշակում›› թեմայով դրամաշնորհային ծրագրի հայտը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Վերջինիս հաստատման դրական ելքի դեպքում աշխատանքները կսկսվեն 2021 թ. վերջին եռամսյակից և կավարտվեն 2024 թ. սեպտեմբերին: Ներկայացվել և հաստատվել է ‹‹Անդրազգային համագործակցություն Եվրոպական ակադեմիական ինտեգրացիայի համար, քաղաքային կապույտ-կանաչ ենթակառուցվածքները Եվրոպայի Արևելքում և Արևմուտքում›› ծրագիրը, որի սկիզբը 2021 թ. հունվարն է, ավարտը՝ 2022 թ. հունիսը:		
10	**ԱՆԱՍԱՆԱԲՈՒ-ԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ-ԿԱՆ ՍԱՆԻ-ՏԱՐԱԿԱՆ ՓՈՐ-ՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**	**12949.8**	**8.75**	**Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել Հայաստանում գյուղատնտեսական կենդանիների մոտ տարածված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, բացահայտել դրանց առաջացման և տարածման պատճառները ու դրանց նկատմամբ մշակել բուժկանխարգելիչ միջոցառումներ:** **ենթաբաժին:** Ձկների գլյուգեոզ հիվանդության տարածվածությունը Հայաստանի լճակային տնտեսություններում, դրա առաջացման պատճառները և պայքարը: Հետազոտական կենտրոնի Մակաբուծաբանական լաբորատորիայում իրականացվել է ինչպես ակվարիումային, այնպես էլ ակվակուլտուրայում աճեցվող ու բնական պայմաններում	**5**	2

				ապրող ձկների հետազոտություն տարաբնույթ մակաբույծ-ներով վարակվածության նկատմամբ: Ուսումնասիրության արդյունքները համեմատելով նախկինում ստացված տվյալների հետ՝ կարելի է եզրակացնել, որ նկատվում է Հայաստանի Հանրապետության լճակային տնտեսություններում արհեստական պայմաններում բուծվող և բնական ջրավազաններում բնակվող ձկների մակաբույծների ֆաունայի շարունակական աղքատացում, ինչը, հավանաբար, հանդիսանում է անխնա ջրօգտագործման և տարբեր ծագման նյութերով ջրավազանների աղտոտման հետևանք: **2 ենթաբաժին:** Ջայլամների սալմոնելոզի տարածվածության համաճարակաբանական առանձնահատկությունների ուսում-նասիրությունը և բուժկանխարգելիչ միջոցառումների մշա-կումը: Հետազոտվել է ընդամենը 12 ջայլամ, որոնցից 5-ը մինչև 1 տարեկան, և 7-ը՝ 3 տարեկանից բարձր: Մինչև 1 տարեկան ջայլամների մոտ հայտնաբերվել են էյմերի-ոզի հարուցչի սաղմնապարկեր (օոցիստներ), իսկ 7 ջայլամ-ների մոտ՝ ախտածին որդերի ձվեր և թրթուրներ: Տնտեսության անասնաբույժին մատուցվել է համապատաս-խան խորհրդատվություն: Ջայլամների նման հետազոտություն Հայաստանում կատար-վում է առաջին անգամ: **3 ենթաբաժին**: Հայաստանի մանր ֆերմերային տնտեսու-թյուններում առաջնածին կովերի կաթնագեղձի հիվանդու-թյունները, դրանց տարբերակումը և կանխարգելումը: 2020 թ. ընթացքում կրծի հիվանդությունների առկայության նկատմամբ հետազոտվել են Կոտայքի, Արարատի և Շիրակի մարզերի անհատական գյուղացիական տնտեսությունների		

				առաջնածին կովերը, որոնց մոտ հայտնաբերվել են կլինիկական և սուբկլինիկական մաստիտներ (կաթնագեղձի բորբոքումներ): Հետազոտության արդյունքների հիման վրա տրվել է համապատասխան խորհրդատվություն: **4 ենթաբաժին**: Երևանի պատահական վայրերում վաճառվող կաթի և կաթնամթերքի սանիտարական գնահատականը: 2020 թ. ընթացքում անասնաբուժասանիտարական փորձաքննության են ենթարկվել Գեղարքունիքի, Կոտայքի և Արմավիրի մարզերի անհատական տնտեսությունների կովերից ստացված և վաճառքի համար նախատեսված կաթի նմուշները: Համավարակի պայմաններում հնարավոր է եղել հետազոտել 46 նմուշ: Բերված նմուշները հետազոտության են ենթարկվել ինչպես զգայորոշման, այնպես էլ լաբորատոր եղանակներով: Փորձաքննության արդյունքում կաթի նմուշներում թթվայնության ցուցանիշները տատանվել են 15-25 % սահմաններում, մանրէական աղտոտվածությունը (ռեդուկտազայի փորձ) համապատասխանում էին առաջին խմբի պահանջներին, խտությունը տատանվում էր 1,025–1,032 սահմաններում, կեղծումները բացակայում էին: Ստուգված կաթի նմուշների համի, հոտի թանձրության և մաքրության այլ շեղումներ չեն հայտնաբերվել:		
11	**ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱ-ՆՈՒԹՅԱՆ**	**9249.8**	**7.5**	2020 թ. նպատակային սինթեզները իրականացվել են ինչպես N, O, S պարունակող հինգանդամանի և վեցանդամանի հետերոցիկլերի, այնպես էլ դրանց չկոնդենսված բի-, տրի- և տետրացիկլիկ համակարգերի ածանցյալների շարքերում: Ուսումնասիրությունները կատարվել են հետևյալ հիմնական ուղղություններով.	**10**	**4**

				ա. Նախկինում ստացված N, S, O պարունակող բազմատոմ հետերոցիկլիկ միացությունների ֆունկցիոնալացում: բ. Երկու, երեք կամ չորս տարբեր հետերոցիկլեր պարունակող չկոնդենսված և կոնդենսված համակարգերի նոր ածանցյալ-ների նպատակային սինթեզներ՝ պեստիցիդային երկու հատ-կությունների համադրությամբ նոր պատրաստուկների հայտնաբերման ակնկալիքով: գ. Սինթետիկ եղանակների վերամշակում «կանաչ քիմիայի» և բնապահպանական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: դ. Սինթեզված միացությունների նախնական լաբորատոր-վեգետացիոն փորձարկումներ, դրանցից ընտրված առավել ակտիվ նյութերի հետագա խորը ուսումնասիրությունների և դաշտային փորձարկումների համար: Ներկայացվել է «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման» մրցույթի հայտ, որի արդյունքում ՀՀ ԳՊԿ կողմից տրամադրվել է 2300 հազ. դրամի դրամաշնորհ՝ սարքավորում գնելու համար: Վերջին տարիներին կենտրոնը զրկված է եղել սինթեզված միացությունների հերբիցիդային հատկությունների նախնա-կան և դաշտային փորձարկումներ կատարելու հնարավորու-թյունից, ինչը շատ բացասաբար է ազդում պատրաստուկների ներդրման գործընթացի վրա: Սակայն նախատեսվում է Կենտրոնը տեղափոխել ՀԱԱՀ-ի «Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, մելիորացիայի և ագրոքիմիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի տարածք, ինչը թույլ կտա իրա-կանացնել Կենտրոնում մշակված պեստիցիդների փորձար-կումները:		

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գիտական գրադարանի ֆոնդն առ 31.12.2020 թ. կազմում է **554.997** միավոր գրականություն, որից **197.604**-ը ուսումնական, **308.108**-ը՝ գիտական, **49.285**-ը՝ գեղարվեստական:
Հաշվետու ժամանակահատվածում ստացված գրականությունը կազմել է **1558** միավոր **(385 անուն):** 2019 թ. ստացվել է 6239 միավոր (2826 անուն) գրականություն:
Գրադարանի ընթերցողների թիվը 2020-ին կազմել է 2090 ընթերցող, որից 571-ը՝ համալսարանի աշխատակիցներ: KOHA գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը 2020 թ. կազմել է 2932, որից 2297-ը՝ տվյալ պահին փաստացի գրանցված: KOHA էլեկտրոնալին գրացուցակի կայքէջի օգտվողների թիվը՝ 28142:
Գրադարանի սպասարկման կետերում՝ ընթերցասրահներում, էլեկտրոնային ընթերցասրահներում և սպասարկման բաժնում հաճախումների թիվը 2020 թ. կազմել է **5608,** որից 45 %-ը ընթերցասրահներում անցկացված դասերի ժամանակ գրանցված ուսանողներն են: 2019 թ. հաճախումների թիվը կազմել է 48445:
Գրադարանի library.anau.am կայքէջի օգտվողների թիվը 2020 թ. կազմել է 128509:
Սպասարկված գրականության քանակը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 2201 միավոր, սպասարկման բաժնում 851, իսկ ընթերցասրահներում՝ 1350 միավոր: 2019 թ. համապատասխանաբար կազմել է 13310, 4250 և 9060 միավոր:
2020 թ. ՀԱԱՀ-ի աշխատակիցների գիտական հոդվածների համար նշանակվել է 115 դասիչ, իսկ 2019-ին՝ 122:
KOHA էլեկտրոնային գրացուցակի ստեղծման նպատակով 2020 թ. մուտքագրվել են 4658 միավոր (1908 անուն) գրականության տվյալներ, 584 գիտական հոդվածների նկարագրություններ և էլեկտրոնային տարբերակներ:
Գրադարանում շարունակվում է գրքերի թվայնացման գործընթացը, 2020 թ. թվայնացվել է 10 անուն գիրք (2880 թերթ):
Գրադարակներում վերադասավորված գրականության քանակը 2020 թ. կազմել է 137151 միավոր՝ 2019 թ. 18211 միավորի դիմաց: Այդ թվում՝ Koha ծրագրով կատարված մուտքագրման աշխատանքներից հետո 2020 թ. 4658 միավոր՝ 2019 թ. 7964 միավորի դիմաց:
ՀԱԱՀ գրադարանը 2020 թ. ակտավորել և գրադարանային գրքամատյաններից հանել է 8999 միավոր գրականություն: Տվյալ գրականությունը հանվել է նաև KOHA էլեկտրոնային գրացուցակի բազայից:
Սեպտեմբերի 25-ին ՀԱԱՀ ընթերցասրահում տեղի ունեցավ Ա.Պ. Հովհաննիսյանի և Պ.Յու. Գասպարյանի հեղինակած «Տրանսպորտային միջոցների անվտանգություն» գրքի շնորհանդեսը, որը ավտոմոբիլների նորմատիվային կանոնակարգմանը և անվտանգությանը ներկայացվող պահանջների ստանդարտացման մասին է և կարող է ծառայել նաև որպես դասագիրք:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

SS կենտրոնի կարևորագույն առաքելություններից է համալսարանի կրթական տեխնոլոգիաների մշտական զարգացմանն ուղղված գործունեության իրականացումը: Այդ նպատակով հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակ

Դեռևս նախորդ տարի ուսումնական գործընթացն առավել դինամիկ, հետաքրքիր ու ինտերակտիվ դարձնելու և դասաժամերն արդյունավետ օգտագործելու համար համալսարանում զանգվածային կիրառություն ստացավ Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակը, որը թույլ է տալիս կազմակերպել նաև հեռավար ուսուցում: Հաշվետու տարում համակարգի օգտատերերի ընդհանուր թիվը հասել է 6044-ի, գրանցվել են նաև հեռակա ուսուցման համակարգի ուսանողները: Համավարակի ընթացքում ամբողջությամբ անցում կատարվեց հեռավար ուսուցման, որը ներառում է թե՛ դասընթացներն ու էլեկտրոնային նյութերը, թե՛ հանձնարարություններն ու քննարկումները, ինչպես նաև մի շարք այլ բաղադրիչներ: Կիրառվում են օնլայն կազմակերպվող հարցումները. moodle էլ. ուսուցման հարթակում սկսել են շահագործվել quiz և forum գործիքները:

Այսինքն՝ հարթակը հնարավորություն է տալիս դասախոսին օպերատիվ և առցանց եղանակով շփվել ուսանողների հետ, հանձնարարություններ տալ և ղեկավարել ուսուցման ամբողջ գործընթացը, հետևել յուրաքանչյուր ուսանողի աշխատանքին: Հարթակում առկա դասընթացներից 95,6 %-ը ամբողջական բովանդակությամբ են:

Հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Համագործակցելով ամբիոնների հետ՝ ուսումնական պլաններին համապատասխան դուրս է բերվել այն առարկաների ցանկը, որոնք առկա չեն հարթակում, դրանք ստեղծվել են և կցվել համապատասխան դասախոսներին:
- Դեկանատներից ստացվող ցուցակների համաձայն՝ այն ուսանողների տվյալները, որոնք գրանցված չեն հարթակում (նոր ընդունված, վերականգնված և այլն), գրանցվել են, նրանց տրամադրվել են մուտքաբառեր և գաղտնաբառեր:
- Պարբերաբար ստուգվել են, թե յուրաքանչյուր դասախոս քանի թեմա է ներբեռնել հարթակ և արդյոք դրանք կցվել են ուսանողներին:
- Հարթակում առկա 2-րդ կիսամյակի առարկաները լրացվել են, և ստացել ենք համակարգի կտրվածքով 98 % ամբողջական բովանդակություն:
- Ստեղծվել և լրացվել են քոլեջում դասավանդվող առարկաները:
- Թարմացվել են եղած ուղեցույցները, ինչպես նաև պատրաստվել են նորերը՝ հարցաշարերի և ֆորումների կազմման համար:
- Դասախոսներին մատուցվել է խորհրդատվություն՝ հարցաշարերի, ֆորումների կազմման և օգտագործման համար, ինչպես նաև նրանց աշխատանքի ընթացքում ծագող բոլոր հարցերին տրվել են պատասխաններ:
- Moodle էլ. ուսուցման հարթակին ինտեգրվել է նաև zoom.us հարթակը, որը հնարավորություն է տալիս դասախոսին նախապես, դասացուցակին համապատասխան, ներկայացնել դասերին միանալու համար անհրաժեշտ հղումը, ID-ն և գաղտանաբառը, իսկ ուսանողին՝ մի հարթակից անմիջապես անցում կատարել մյուս հարթակ:

- Գրանցվել են հեռակա ուսուցման դեպարտամենտի տվյալ ժամանակաշրջանի կանչերի ուսանողները (գործընթացն ընթանում է բարդություններով՝ տեղեկատվության ոչ ամբողջական լինելու պատճառով)
- 2-րդ կիսամյակի սկզբում կազմակերպվել է Moodle հարթակի ուսուցում-դասընթաց՝ բոլոր ֆակուլտետների առաջին կուրսերի ուսանողների համար (ընդհանուր թվով՝ չորս հանդիպում):

Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակը թվերով (2020 թ.)

Անվանում	չ/մ	Ցուցանիշ
Հաշվետու տարում համակարգում առկա օգտատերերի թիվը	օգտատեր	6044
որից՝ 2020 թվականին ավելացրած ուանողների հաշիվներ	հատ	2776
ամբողջական բովանդակությամբ դասընթաց	տոկոս	95,6
2020 թվականին ստեղծված նոր առարկաների հարթակ որից՝ քոլեջ 1-ին կիսամյակ 2-րդ կիսամյակ	հատ	3044 385 1902 757
Փոփոխված և հեռացված հարթակների թիվը հաշվետու տարում	հատ	299
Ուսուցում և վերապատրաստում ստացած շահառուների թիվը	մարդ	209

Հաշվետու ժամանակաշրջանում SS կենտրոնը պարբերաբար կազմակերպել է գիտելիքների ստուգման էլեկտրոնային թեստավորման, Moodle և eBuh համակարգերի վերապատրաստման առցանց և ավանդական եղանակներով դասընթացներ, որոնց ընթացքում վերապատրաստվել է մոտ 250 աշխատակից (այդ թվում՝ պրոֆեսորա-դասախոսական կազմը):

Գիտելիքների ստուգման թեստային համակարգ

Դեռևս 2019 թվականին մեկնարկած քննությունների անցկացման թեստային համակարգը 2020 թվականին նոր շունչ ստացավ ամբողջությամբ վերանորոգված ու կահավորված 4 սենյակների (թվով 96 համակարգիչներով համալրված) և նոր ծրագրատեխնիկական համակարգերի ստեղծման ու կատարելագործման շնորհիվ:

Այս առումով SS գիտելիքի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- թեստավորման ծրագրի շահագործում, կառավարում զարգացում,
- թեստերի կազմման կարգի ու ձևի մշակման ուղեցույցների պատրաստում
- թեստերի հավաքագրում, ստուգում և մուտքագրման աշխատանքների իրականացում,
- թեստային քննությունների անցկացում և վերջնական տեղեկատվության ուղարկում համապատասխան դեկանատներ:

Հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները

1. Առաջին կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակների համար նախատեսված առարկաների թեստերից մուտքագրվել է 12-ը:
2. Երկրորդ կուրսերի 1-ին կիսամյակի համար նախատեսված 36 առարկաների թեստերից մուտքագրվել է 25-ը: Մնացած 11 առարկաների թեստերը մուտքագրման փուլում են:

- 2020 թ-ին նախատեսված՝

1. Բակալավրի հեռակա կրթական ծրագրի վեց առարկայական քննություններին մասնակցել է ավելի քան 450 ուսանող:
2. Բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման առարկայական քննություն-ներին մասնակցել է ավելի քան 680 ուսանող (ներառված են նաև վերահանձնումները):
3. Թեստային համակարգում ավելացվել են նոր մասնագիտություններ:

2021 թվականին նախատեսվում է մուտքագրել 3-րդ կուրսերի համար նախատեսված առարկաների թեստային հարցաշարերը:

zoom.us հարթակ

Համավարակով պայմանավորված՝ ուսումնական գործընթացի ամբողջական կառավարման, դասերի անցկացման և առհասարակ բուհի գործունեության բնականոն ընթացքի ապահովման համար Moodle և ebuh համակարգերին զուգահեռ համալսարանում դասընթացների ավանդական եղանակով ուսուցման դադարեցման առաջին իսկ օրերից որոշում կայացվեց ու սկսեց լայնորեն կիրառվել zoom.us հարթակը: Առաջիններից էինք, որ հարթակի ճիշտ շահագործման համար կազմվեց 3 տեսաուղեցույց, որոնք տարածում գտան սոցիալական ցանցերում՝ հավաքելով հազարավոր դիտումներ, և օգտագործվեցին ոչ միայն ՀԱԱՀ դասախոսների և ուսանողների, այլ նաև մյուս բուհերի ու շահառուների կողմից:

Հարթակը թույլ տվեց, դասացուցակին համապատասխան, կազմակերպել յուրա-քանչյուր օրվա դասերը, իսկ մնացած բաժիններին՝ իրականացնել դասերի կազմա-կերպման և անցկացման վերահսկողություն:

Այս հարթակի միջոցով կազմակերպվել են նաև դիպլոմային աշխատանքների, մա-գիստրոսական թեզերի առցանց պաշտպանությունները և պետական ավարտական քննությունները, ինչպես նաև կիսամյակային ստուգարքներն ու քննությունները: Այդ նպատակով ձեռք են բերվել zoom.us հարթակի business տարբերակի 20, այնուհետև 30 լիցենզավորված հաշիվներ, որոնք առավել լայն հնարավորություններ են ընձեռել ուսումնական գործընթացի հեռավար կազմակերպման ու վերահսկման համար: Լիցենզավորված հաշիվների ճիշտ օգտագործման, քննությունների ձախողումներից խուսափելու համար յուրաքանչյուր օր կազմակերպվել է գրաֆիկների ստուգում և համապատասխանեցում.

- դեկանատներից և ուսումնական մասից վերցվել են քննությունների, ստուգարք-ների և պաշտպանությունների գրաֆիկները,
- յուրաքանչյուր օր կապ է հաստատվել հաջորդ օրվա գրաֆիկով նախատեսված քննություն կամ պաշտպանություն անցկացնող դասախոսի կամ կազմակերպչի հետ, նրան հարթակում տրվել է լիցենզավորված հաշվի կարգավիճակ,
- zoom.us հարթակում պլանավորվել է հաջորդ օրվա քննությունը և/կամ պաշտպանությունը, որի արդյունքում տվյալ դասախոսը համակարգից ստացել է պլանավորված քննության/պաշտպանության հղումը, ID-ն և գաղտնաբառը,

- ստացված տվյալները տեղադրվել են anau.am կայքի համապատասխան բաժիններում,
- zoom հարթակում ստեղծվել է 374 հաշիվ համալսարանի դասախոսների և վարչական աշխատողների համար,
- SS կենտրոնի կողմից կազմակերպվել է ստուգարքների, դիպլոմային աշխատանքների պաշտպանությունների, կիսամյակային և պետական քննությունների 700-ից ավելի տեսակապ և դրանց արխիվացման գործընթացները:

Այս ամենին զուգահեռ՝ յուրաքանչյուր օր կատարվել է քննությունների և/կամ պաշտպանությունների ստուգում և տեխնիկական աջակցություն:

Գրադարանային գործի KOHA և library.anau.am հարթակներ

Համավարակով պայմանավորված և կարևորելով հեռավար եղանակով մասնագիտական գրականության հասանելիության հարցը՝ հաշվետու տարում SS կենտրոնի կողմից իրականացվեց koha գրադարանային ավտոմատացված համակարգի ծրագրային թարմացումը, ինչպես նաև տեղադրվեց առանձնացված սերվերի վրա: Այս միջոցառումները հնարավորություն տվեցին ապահովել առավել արագ ու արդյունավետ թրաֆիկ, ինչպես նաև գրադարանավարներին ավելի մեծ գործիքակազմեր՝ գործընթացի կառավարման համար: Library.anau.am կայքում բաց հասանելիությամբ տեղադրված 1000-ից ավելի մասնագիտական գրքերը, մեթոդական ուղեցույցները և այլ գրականությունը հնարավորություն տվեցին ապահովել հեռավար կրթության անընդհատությունը:

Այցելուների քանակը

http://koha.anau.am/	28,196
http://library.anau.am/	131,381

SS ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

anau.am

Համալսարանի կայքում ամբողջ տարի արխիվացվել են նախորդ ուստարվա փաստաթղթերը (գիտական խորհրդի, ռեկտորատի և այլն), պարբերաբար տեղադրվում են նորերը: Կայքում փոխվել է ամբիոնների և դեկանատների նյութերի ձևաչափը, հավաքագրվել, խմբագրվել և կայքում է տեղադրվել ստացված համապատասխան տեղեկատվությունը: Կայքում փոփոխություն է կատարվել ընդհանուր առմամբ 391 էջում:

Մայիս-օգոստոս ամիսներին համալսարանի կայքում ստեղծվել է Առցանց կրթություն բաժինը, որտեղ ամեն օր կազմվել և տեղադրվել են առցանց քննությունների, ավարտական և դիպլոմային աշխատանքների հղումները: Բոլոր մասնագիտությունների համար ստեղծված հղումները փոխանցվել են նաև դասախոսներին: Ստեղծվել է նաև Առցանց ընդունելության, քննությունների վերահանձնումների բաժին, զուգահեռաբար արխիվացվել է տվյալ պահին անհրաժեշտ տեղեկատվությունը:

Համավարակով պայմանավորված՝ կայքում ավելացվել են մի շարք նոր բաժիններ ու գործիքակազմեր՝ ուսանողներին, դիմորդներին և այլ շահառուներին տեղեկատվություն տրամադրելլոու ու հավաքագրելու համար: Այստեղ ստեղծվեց առցանց կրթության կազմակերպման բաժին, որը թույլ է տալիս՝

- ընդունելության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում դիմորդներին,
- մագիստրատուրայի դիմորդների ընդունելության կազմակերպում,
- դիպլոմային աշխատանքների պաշտպանությունների, պետական քննությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողներին,
- կիսամյակային քննությունների և ստուգարքների օրերի, ժամերի, ինչպես նաև առցանց եղանակով դրանց միանալու վերաբերյալ տեղեկատվության տրամադրում առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողներին,
- էլեկտրոնային եղանակով դիմում/գրություն ներկայացնելու պայմանների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և մի շարք այլ հնարավորություններ:

Ստորև ներկայացված աղյուսակներում (աղ. 1 և 2) ներկայացված են 2020 թվականին համալսարանի կայքէջերի այցելուների թիվը, աճը նախորդ տարվա համեմատ, դիտումների քանակն ըստ երկրների:

Այցելուների թիվը

Կայք	Այցելուների թիվը
https://www.anau.am/	152,999
http://persons.anau.am/	131,381

2020 թվականին այցելուների թիվն աճել է 2,5 %-ով, իսկ նոր այցելուների թիվը՝ 5,4 %-ով: Աղյուսակ 2-ում ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի պաշտոնական կայքէջի հաճախումներն ըստ երկրների:

Այցելություններն ըստ երկրների

Հ/հ	Երկիրը		Այցելությունների քանակը
1		Հայաստան	133,428
2		ԱՄՆ	6,649
3		Ռուսաստան	4,413
4		Վրաստան	888
5		Գերմանիա	795
6		Ուկրաինա	495
7		Ֆրանսիա	481
8		Չինաստան	351
9		Այլ	654

Համալսարանի կայքի այցելուների թվի վերաբերյալ տվյալները վերցվել են Google Analytics վեբ կայքերի վերլուծությամբ զբաղվող համակարգից:

persons.anau.am

Տարվա ընթացքում շարունակվել են persons.anau.am կայքի թարմացման աշխատանքները: Հավաքագրվել, մշակվել, խմբագրվել և կայքում ավելացվել է 74 CV: Աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

1C Հաշվապահական ծրագիր

Համալսարանի հաշվապահության հետ համատեղ իրականացվել է հաշվապահական ծրագրի կարիքների բացահայտում, կազմակերպվել են սերվերի, ծրագրային փաթեթի, լիցենզիաների գնման գործընթացները: Դրան հաջորդել են Սերվերի ծրագրային բոլոր կարգաբերումների աշխատանքները, բոլոր մասնաճյուղերի և մյուս օգտատերերի համակարգիչներում «օգտատեր-սերվեր» ծրագրերի ներդրման աշխատանքները:

Flexap աշխատակիցների հաճախումների կառավարման համակարգ:

Ներդրվել է սերվերային ծրագիրը, անցկացվել է ցանցային համակարգը և ՄՌԿ բաժնի հետ համատեղ կազմակերպվում են աշխատակիցների մուտքագրման գործընթացները:

Թվային արխիվի ձևավորման գործընթաց

Այս տարի ևս իրականացվել են բազմատեսակ տեղեկատվության (տեսանկարահանումների, ֆոտոնկարահանումների, քննությունների առցանց անցկացման, փաստաթղթերի և այլն) արխիվացման գործընթացներ: Ֆինանսական և իրավաբանական փաստաթղթերի արխիվացման և կառավարման համար ներդրված է https://files.anau.am/ համակարգը:

Համալսարանի կարիքների համար հաշվետու տարում ձեռք են բերվել օպերացիոն համակարգերի լիցենզիաներ, zoom հարթակի բաժանորդագրություններ, հոսթինգային ծառայություն, SSL Wildcard anau.am դոմեինի համար՝ մեկ տարի ժամկետով:

https://hr.anau.am

Տեխնիկական պատճառներով և համավարակով պայմանավորված՝ կիսատ են մնացել ՄՌԿ բաժնի համար ստեղծված ծրագրային ապահովման ավարտման գործընթացները: Պլանավորվում է 2021 թվականին ավարտին հասցնել այս համակարգի ամբողջական ներդրման գործընթացը:

ՆՈՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՎ ՆԵՐԴՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

https://admission.anau.am/

Ուսանողների ընդունելության հայտերի լրացման ավտոմատացման համակարգ

Համավարակով պայմանավորված՝ ընդունելության գործընթացն իրականացնելու համար ապրիլ ամսից առաջադրանք դրվեց և արդեն հունիս ամսին պատրաստ էր դիմորդների առցանց գրանցման և հայտերի ու անհրաժեշտ փաստաթղթերի ուղարկման ավտոմատացման համակարգը: Համակարգը հոյակապ գործիք դարձավ ընդունող հանձնաժողովի աշխատանքներն արդյունավետ և օպերատիվ կառավարելու ու փաստաթղթավորումը թափանցիկ կազմակերպելու համար:

https://elearning.anau.am/

Համալսարանը ՀՀԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչության մարմնի հետ համատեղ կազմակերպել է սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման դասընթացներ, որի աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով Moodle հարթակում ստեղծվել և վարվել է առանձին

հարթակ: Ստեղծվել է 31 հարթակ, իրականացվել է այդ հարթակներում նյութերի ներբեռնում, ավելացվել են դասախոսների՝ մոտ 15 ինքնակենսագրական տվյալներ: Հարթակում ստեղծվել են նաև 124 մասնակիցների հաշիվներ:
2020 թվականին SS գիտելիքի բաժինը Համաշխարհային բանկի համար տրամադրել է Moodle էլեկտրոնային հարթակ, որից օգտվող մասնակիցների համար բացվել են հարթակի նոր հաշիվներ՝ թվով 16 օգտագործողների համար:

https://journal.anau.am գիտական հոդվածների ընդունման և կառավարման ավտոմատացված համակարգ
Հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին ստեղծվել է journal.anau.am հարթակը, որի միջոցով կատարվելու է համալսարանի պարբերականի հոդվածների ստացումը, ստուգումը, գրախոսների կարծիքների ստացումը, հրապարակման թույլտվությունը և մի շարք այլ կառավարման գործառույթներ: Հարթակը նախատեսված է հրատարակչական-խմբագրական բաժնի աշխատակիցների համար, որոնց հետ անցկացվել է 3 դասընթաց և վեր են հանվել ներդրման գործընթացի առաջարկությունները: Հարթակը կնպաստի աշխատանքի առավել թափացիկությանը և արդյունավետությանը:

https://examticket.anau.am/
Նոյեմբեր ամսին ծրագրավորվել և ներդրվել է համակարգչային թեստային տարբերակով անցկացվող քննություններին ուսանողների մուտքը ավտոմատ կառավարող համակարգ: Համակարգը թույլ է տալիս ստեղծել տվյալ օրվա կամ նախօրոք պատրաստել քննությունների ցուցակը՝ ըստ ժամերի և քննասենյակների: Համակարգի միջոցով հնարավոր է նաև ակտիվացնել կամ պասիվացնել քննասենյակներում գտնվող համակարգիչներից ցանկացածը: Համակարգը ծրագրավորած սկզբունքով բաշխում է ուսանողներին ըստ սենյակների՝ բացառելով նույն տարբերակի և նույն առարկայի ուսանողների կողք-կողքի նստելը: Համակարգը նախատեսված է զարգացնել 2021 թվականին՝ ավելացնելով նոր գործառույթներ:

https://memorial.anau.am համալսարանի մահացած ու զոհված ուսանողների, շրջանավարտների, դասախոսների հիշատակարան
Կայքը ստեղծվել է Արցախյան երրորդ պատերազմից հետո՝ դեկտեմբեր ամսին: ՀԱԱՀ «Հիշատակարան» կայքի նպատակն է ներկայացնել (ունենալ յուրահատուկ բազա) համալսարանի մահացած ու զոհված ուսանողների, շրջանավարտների, դասախոս-ների կենսագրական տվյալներն ու անցած ուղին: Կայքում բոլորը կարող ենք տեղադրել հիշողություններ, ընթերցողի լայն շրջանակին անհայտ պատմություններ մեր ընկերների մասին՝ այդ կերպ վառ պահելով նրանց հիշատակը: Կայքը նաև յուրահատուկ հարգանքի տուրք ու երախտագիտության դրսևորում է նրանց հիշատակին: Կայքում արդեն կան 26 հիշատակի և կենսագրական նյութեր, ինչպես նաև 25 հուշ: Կազմակերպվել է կայքի շնորհանդեսը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ebuh համակարգ)
2020 թվականին շարունակվել են ebuh համակարգի՝ դեկանատների աշխատակիցների և ամբիոնների աշխատակազմերի, այդ թվում՝ դասախոսների վերապատրաստման գործընթացները: Դեկանատների աշխատակիցների (այդ թվում

նաև հեռակա ուսուցման) և ամբիոնների աշխատակիցների համար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ավելի քան 90 աշխատակիցներ):
Ֆակուլտետների աշխատակիցների հետ քննարկումների և պարբերաբար անցկացվող հարցումների և թեստավորման արդյունքում հայտնաբերվել են մի շարք թերություններ, որոնք շտկվել են և համապատասխանեցվել համալսարանում գործող նոր պահանջներին, ինչպես նաև բաժնի աշխատակիցների կողմից զուգահեռ մշակվում և ներդրվում են բուհի կառավարման գործընթացին առնչվող նոր մոդուլներ: Բացի փաստացի դասընթացներից, կատարվել են բազմաթիվ խորհրդատվություններ ամբիոնների աշխատակիցների համար, այդ թվում նաև հեռավար կապի միջոցներով: Փաստացի դասընթացներից զատ՝ պարբերաբար կատարվել է տարբեր ենթամոդուլների ցուցադրում և ներդրում: Կատարվել է շրջայց բոլոր դեկանատներ, վերհանվել են առաջացած խնդիրները, իրականացվել դրանց լուծման աշխատանքներ, իսկ խորքային առաջարկները գտնվում են մշակման փուլում:
2020 թվականին, համավարակով պայմանավորված, ինչպես նաև հեռավար աշխատանքին անցնելու ընթացքում մշակվել են նոր մոդուլներ, մասնավորապես՝

1. Քննությունների անցկացում
1.1. տոմսերի մուտքագրում և խմբագրում (pdf տարբերակ)
1.2. պատահական տոմսի գեներացում (ուսանողն իրավունք ունի փոխելու տոմսը՝ ստացած գնահատականից միավորի նվազմամբ)
1.3. քննությունների և վերահանձնումների անցկացում
2. Ավարտական պետական քննություն
2.1. տոմսերի մուտքագրում (pdf տարբերակ)
2.2. հանձնաժողովների ձևավորում
2.3. գնահատականների մուտքագրում և միջին գնահատականի ստացում
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն
3.1. հանձնաժողովների ձևավորում
3.2. ամբիոնների աշխատակիցները ավարտական աշխատանքները (թեզերը), ղեկավարների կարծիքները, գրախոսականները և շնորհանդեսները բեռնում են համակարգ (պաշտպանության ժամանակ դիտելու համար)
3.3. դեկանատների աշխատակիցները ձևավորում են տվյալ օրվա պաշտպանության ցուցակը և ստեղծում տեղեկագիրը
3.4. ամփոփիչ արձանագրության գեներացման համար տվյալների մուտքագրում
3.5. գնահատականների մուտքագրում և միջին գնահատականի ստացում
3.6. ամփոփիչ տեղեկագրի գեներացում
3.7. ամփոփիչ արձանագրությունների գեներացում

Նոր մշակված մոդուլների կիրառման համար ներգրավվել են ուսումնական վարչության, դեկանատների և ամբիոնների աշխատակիցները:
Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոդուլի ստեղծումը հնարավորություն է տվել ունենալ ավարտական աշխատանքների միասնական բազա և անհրաժեշտության դեպքում օգտագործել այն, ինչպես նաև պաշտպանությունների ժամանակ բացել և ուսումնասիրել տվյալ ուսանողի աշխատանքը: Պաշտպանությունների ժամանակ համակարգ են մուտքագրվում նաև քննական հանձնաժողովի գնահատականները, ավտոմատ հաշվարկվում է դրանց միջինացված ցուցանիշը և

հաստատվում: Այս և մյուս բոլոր գնահատականները հետագայում օգտագործվելու են դիպլոմի հավելվածում (միջուկում) ավտոմատ կերպով (անհրաժեշտություն չի լինելու դրանք ևս մեկ անգամ մուտքագրել): Համակարգի միջոցով կազմվում են նաև պաշտպանությունից հետո անհրաժեշտ արձանագրությունները:

2020 թ. ապրիլ ամսին ebuh համակարգում ներդրվել է մագիստրոսական կրթական աստիճանի առկա և հեռակա համակարգերը: Մագիստրոսական կրթական աստիճանի ներդրման համար համակարգում մուտքագրվել է ավելի քան 450 առարկա, որոնք օգտագործվել են ավելի քան 80 ուսումնական պլանների մուտքագրման համար:

2020 թ. մայիս ամսին ebuh համակարգ ներդրվել են բակալավրի կրթական աստիճանի հեռակա ուսուցման 5-րդ և 6-րդ կուրսերի համապատասխան գործիքակազմերը (2019 թ. պլանով սովորողներ), իսկ ամռանը կատարվել են մնացած կուրսերի ներդրման հետ կապված նախապատրաստական աշխատանքները: Աշնանը մեկնարկել են 1-4-րդ կուրսերի առցանց քննությունները և վերահանձնումները: Դրանց կազմակերպման համար մուտքագրվել է 79 ուսումնական պլան (2019 թ. հաստատվածները միայն 1-2-րդ կուրսերն են):

Ebuh համակարգի ներդրման արդյունքում ստացվել են հետևյալ արդյունքները.

- 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի համար ուսանողների հաշվառման թղթային գործընթացը վերացել է, անցում է կատարվել ebuh ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգին,
- ավտոմատացված եղանակով ստացվել են ուսանողների հաշվառման տվյալները՝ բացակայության արդյունքները, ամսական բացակայությունների թիվը, ավտոմատացված եղանակով ստացվել են տոկոսային բացակայությունները և այլն,
- իրականացվել են վարձավճարների հետ կապված բոլոր աշխատանքները,
- ավտոմատացված եղանակով ստեղծվել են բոլոր տեղեկագրերը (մոտ 2500 հատ). վերահանձնման տեղեկագրերը գեներացվում են ավտոմատ եղանակով, տեղեկագրերը հասանելի են թե՛ դեկանատներում, թե՛ ուսումնական վարչությունում, թե՛ լիազորված մյուս ստորաբաժանումներում,
- ավտոմատացված եղանակով ստեղծվել է 69 անհատական տեղեկագիր,
- ավտոմատացված եղանակով ստացվել են քննաշրջանի արդյունքները,
- ավտոմատացված եղանակով ստացվել են տարեկան գնահատականների մատյանները,
- ավտոմատացված եղանակով ստացվել են քննաշրջանի արդյունքները, տարեկան գնահատականների մատյանները, թեստավորվել են հաշվետվությունների 34 և 10 ձևերը,
- փորձարկվել է ուսանողների շրջափոխման գործընթացը, որը, բացառությամբ սխալ կամ թերի մուտքագրված ուսանողների տվյալների, համընկել է թղթային տարբերակների հետ,
- ավտոմատացված եղանակով, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի օրինակով, ստացվել են դիպլոմի հավելվածները (միջուկները),
- մշակվել է ամբիոնների ծանրաբեռնվածության նոր տարբերակ,
- մշակվել է տեղեկագրերի pdf ֆորմատով արտահանման համակարգը:

Այդ նպատակով սեղմ ժամկետում համակարգ են ներբեռնվել բոլոր ուսումնական պլանները, ուղղվել են առարկայական ծրագրերը, ինչպես նաև բազմագործոնային բաղադրիչները, նաև մագիստրանտների տվյալները:

Ընդհանուր առմամբ առցանց անցկացվել են 2500-ից ավելի ստուգարքներ և քննություններ, 4 ձևավորված խմբերի համար պետական քննություններ, 125 ձևավորված խմբերի համար դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններ:

Կատարվել են նաև 2020-2021 ուստարվա նախապատրաստական աշխատանքներ.

- կատարվել են 2019 թ. և 2020 թ. հաստատված ուսումնական պլանների երկրորդ տարվա մուտքագրման աշխատանքները (թվով 37 հատ),
- ֆակուլտետների աշխատակիցների հետ միասին կատարվել են մագիստրոսական կրթական աստիճանի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանների մուտքագրման աշխատանքները (թվով 28 հատ),
- մուտքագրվել են նախնական բոլոր տվյալները, որոնց հիման վրա իրականացվել են ավտոմատացված եղանակով ամբիոնի ծանրաբեռնվածության ստացման և դասացուցակների մուտքագրման աշխատանքները:
- բակալավրի կրթական աստիճանի հեռակա ուսուցման լիարժեք ներդրման հետ կապված նախնական աշխատանքներ,
- տեղեկագրերի էլեկտրոնային տարբերակի տպման հնարավորություն, որը գրեթե կվերացնի տեղեկագրերի ակտավորման գործընթացը:

Ուսումնական գործընթացների ավտոմատացման բաժնի աշխատակիցները շարունակում են ebuh ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի ներդրման և զարգացման աշխատանքները: Ամբողջությամբ ավարտված են նախատեսված հիմնական մոդուլների ծրագրավորման աշխատանքները: Դասընթացների ժամանակ ստացվել են բազմաթիվ առաջարկություններ համակարգի բարելավման ուղղությամբ, այժմ կատարվում են դրանց իրականացման աշխատանքները:

Քանի որ կատարված աշխատանքների մի մասը կազմակերպվել է հեռավար, իրականացվել է նաև պահանջվող տվյալների ընթացիկ ստուգում և հսկողություն.

- տոմսերի առկայության ապահովում ներկայացված պահանջներին համապատասխան,
- տեղեկագրի և բազմագործոնային բաղադրիչների ստուգում,
- քննությունների ճիշտ կազմակերպման նպատակով դասախոսների համար առցանց ուսուցման և խորհրդատվության կազմակերպում,
- քննության ժամանակ դասախոսներին աջակցություն:

Ծագող խնդիրներն ու դժվարությունները հաղթահարելիս մեծ դեր են ունեցել նաև ստեղծված ուղեցույցները: Ebuh համակարգից օգտվելու համար ևս կազմվել են բազմաթիվ ուղեցույցներ և ուղարկվել համալսարանի շահառու ստորաբաժանումներին:

Թվարկված աշխատանքներին զուգահեռ բաժնի կողմից ուսումնասիրվում և պլանավորվում են այլ ծրագրային համալրումներ, ուսումնական գործընթացն առավել թափանցիկ, օպերատիվ, արդյունավետ և արդի համակարգերով վերազինելու համար:

ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

SS համակարգերի սպասարկման բաժնի գործունեությունն ուղղված է համալսարանում համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկմանն ու

ծրագրային ապահովմանը, տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործման ապահովմանը, համալսարանական համակարգչային լսարանների տեխնիկական, ծրագրային համակարգերի անխափան աշխատանքին և շահագործմանը, համալսարանում առկա պատճենահանող-տպիչ սարքերի անխափան ու անթերի աշխատանքի, համակարգչային տեխնիկայի վերանորոգմանը, ստորաբաժանումներում ինտերնետ կապի ապահովմանը և այլն:

2020 թ. բաժնի կողմից կատարված հիմնական աշխատանքների ցանկը

Հ/հ	Աշխատանքի բնույթը	Քանակը
1	Համակարգիչների ֆորմատ և պրոֆիլակտիկա	265
2	Ցանցին միացված համակարգիչներ	133
3	Ցանցային բաժանարարների և WiFi երթուղիչների մոնտաժում	18
4	Տպիչների վերանորոգում	8
5	Քարտրիջների լիցքավորում և վերանորոգում	131
6	Հեռախոսահամարների տեղափոխում և նոր համարների տրամադրում	10

Նոր վերանորոգված թեստային կենտրոնում կատարվել են ցանցի մոնտաժման և կահավորման աշխատանքներ:
Նոր սերվերային սենյակում մոնտաժվել են ցանցային լարեր և սարքեր, որից հետո սերվերները տեղափոխվել և տեղադրվել են այդ սենյակում: Կատարվել է սերվերների կարգաբերում: Տեղադրվել է Active Directory համակարգը, որը թույլ է տալիս կենտրոնացված կառավարել օգտատերերի իրավասությունները, մշակվել է օգտատերերի մուտքանունների և գաղտնաբառերի ստեղծման, տրամադրման ընթացակարգը, մշակվել է օգտատերերի խմբային քաղաքականությունը: Կարգաբերվել է համալսարանի հրեպատը (firewall), ստեղծվել են VPN հաշիվներ SS կենտրոնի և հաշվապահության աշխատակիցների հեռավար աշխատանքն ապահովելու համար:

Նոր կահավորված լսարանների և լաբորատորիաների ցանկ

Հ/հ	Աշխատանքի անվանում	Ստորաբաժանում	Լսարանի համարը	Համակարգիչների քանակը
1	Համակարգչային և պրոյեկտորով լսարանի կահավորում	Տվյալագիտության ամբիոն Թեստային կենտրոն	2-322/1	36 համակարգիչ 1 պրոյեկտոր 36 սեղան և աթոռ
			2-322/2	20 համակարգիչ 1 պրոյեկտոր 20 սեղան և աթոռ
			2-322/3	20 համակարգիչ 1 պրոյեկտոր 20 սեղան և աթոռ
			2-322/4	20 համակարգիչ

				1 պրոյեկտոր 20 սեղան և աթոռ
2	Հեռուստացույցների տեղադրում	Թեստային կենտրոն	2-322	2
3	Պրոյեկտորով լսարանի կահավորում	Կենսաբանություն և կենսատեխնոլոգիաների ամբիոն	1-304	1
			1-306	1
4	Համակարգչային և պրոյեկտորով լսարանի կահավորում	Ջրային և հողային ռեսուրսների կառավարման կենտրոն	2-213	5 համակարգիչ 1 պրոյեկտոր
5	Պրոյեկտորով լսարանի կահավորում	Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	5-316	1
6	Պրոյեկտորով լսարանի կահավորում	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն, սննդամթերքի անվտանգություն և հիգիենայի ամբիոն	5-325	1
7	Ցանցի մոնտաժում և համակարգիչների տեղադրում	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին	1-310	4
8	Համակարգիչների և հեռուստացույցի տեղադրում	ImpactAIM ANAU AgriTech Accelerator ծրագրի սենյակ	1-421	2 համակարգիչ 1 հեռուստացույց
9	Համակարգչային լսարանի կահավորում	ՀԱԱՀ վարժարան	5-17	10 համակարգիչ

Վերանորոգված համակարգչային և պրոյեկտորներով լսարանների ցանկ

Հ/h	Աշխատանքի անվանումը	Ստորաբաժանման անվանումը	Լսարանի համարը	Համակարգիչ-ների քանակը
1	Վերանորոգված համակարգչային լսարաններ	Տվյալագիտության ամբիոն	2-413	10
			2-412	8
		Ֆինանսահաշվային ամբիոն	1-437ա	18
		Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոն	2-317	16
		2-րդ մասնաշենքի ընթերցասրահ	2-425	8

		2-րդ մասնաշենքի ընթերցասրահ	2-443	16
		«Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագիր	1-346	17
		Կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի ամբիոն	2-513	8
			2-537	7
		ՏՏ կենտրոն	1Ա1	10
			1Ա2	17
2	Վերանորոգված պրոյեկտորով լսարաններ	Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոն	1-420	1
			1-417	1
			1-212	1
		Գիտխորհրդի նիստերի դահլիճ	1-329	1
		Բուսաբուծության և հողագիտության ամբիոն	1-216	1
			1-217	1
		Ագրոնոմիական ֆակուլտետ	1-208	1
		Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոն	1-245	1
			1-248	1
			1-254	1
		Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոն	1-220	1
		Կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի ամբիոն	2-536	1
			2-508	1
		Կենսագործունեության անվտանգության ամբիոն	514	1
		Տվյալագիտության ամբիոն	2-405	1
		Հայոց և օտար լեզուների ամբիոն	2-402	1
		Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոն	2-320	1
		Բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոն	2-310	1
		Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոն	2-202	1
			2-206	1
		Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոն	2-209	1

Կահավորվել են Մարդկային ռեսուրսների կառավարման, Մարքեթինգի և զարգացման բաժինների, Ուսումնական գործընթացի կառավարման վարչության, Գյուղատնտեսական կենդանիների մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի ամբիոնի նոր վերանորոգված սենյակները:

Համալսարանի 1-ին, 2-րդ և 5-րդ մասնաշենքերում տեղադրվել են աշխատակիցների հաճախումների կառավարման սարքեր, կատարվել է դրանց ցանցային լարերի և տուփախողովակների մոնտաժում:
Համավարակով պայմանավորված՝ դասախոսները, ուսանողները և վարչական անձնակազմն ապահովվել են անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով և ծրագրային ապահովումներով, տրամադրվել է խորհրդատվական և տեխնիկական ծառայություններ:
Առցանց քննությունները կազմակերպելու համար կատարվել են հետևյալ աշխատանքները.

- համալսարանում կահավորել է 4 լսարարան՝ zoom հարթակի միջոցով, դիպլոմային պաշտպանությունների և պետական քննությունների անցկացման համար,
- դեկանատներից և ուսումնական վարչությունից վերցվել են քննությունների, ստուգարքների և դիպլոմային աշխատանքների պաշտպանությունների գրաֆիկները,
- յուրաքանչյուր օր կապ է հաստատվել հաջորդ օրվա գրաֆիկով նախատեսված քննություն կամ պաշտպանություն անցկացնող դասախոսի կամ կազմակերպչի հետ, նրան հարթակում տրվել է լիցենզավորված հաշվի կարգավիճակ,
- zoom.us հարթակում պլանավորվել է հաջորդ օրվա քննությունը և պաշտպանությունը, որի արդյունքում տվյալ դասախոսը համակարգից ստացել է պլանավորված քննության կամ պաշտպանության հղումը, ID-ն և գաղտնաբառը,
- zoom հարթակում ստեղծվել է 374 հաշիվ համալսարանի դասախոսների և վարչական աշխատողների համար,
- կազմակերպվել է ստուգարքների, դիպլոմային աշխատանքների պաշտպանությունների, կիսամյակային և պետական քննությունների 700-ից ավել կոնֆերանս:

Հաշվապահության նոր սերվերի տեղադրումից հետո հաշվապահությունում նոր ցանցի մոնտաժումը հնարավորություն տվեց հաշվապահությանն օգտվել և հին, և նոր սերվերներից:
ՀԱԱՀ վարժարանում և 5-րդ մասնաշենքի 1-ին հարկում նոր վերանորոգված սենյակներում մոնտաժվել է հեռախոսային և ինտերնետային ցանց:
Սիսիանի մասնաճյուղում կահավորվել է նոր համակարգչային լսարան, տեղադրվել է պրոյեկտոր, պրոյեկտորի էկրան և 7 հատ համակարգիչ: Սենյակում մոնտաժվել է նոր ցանց և բոլոր համակարգիչները միացվել են համացանցին:
ՀԱԱՀ գյուղատնտեսական քոլեջում, VI մասնաշենքում և «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղում, Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տանը կատարվել է համակարգիչների տեխնիկական և ծրագրային սպասարկում, մոնտաժվել են ցանցային սարքեր և մալուխներ:
Բաժինն ուսումնասիրել և կազմել է համալսարանի համակարգչային տեխնիկայի պահանջարկը, գնման հայտերը, որից հետո կատարել համակարգչային տեխնիկայի պահեստավորման, բաշխման և տեղադրման աշխատանքները:

ԳՈՎԱԶԴ ԵՎ ԴԻԶԱՅՆ

- 2019-2020 ուստարվա բակալավրիատի առկա և քոլեջի ընդունելության կազմակերպման և ընդհանրապես մասնագիտական կողմնորոշման ու համալսարանի PR-ի համար SS կենտրոնի կողմից իրականացվել է գովազդային տեսահոլովակների և ձայնային հոլովակների պատրաստումն ու տարածումը, որը կազմակերպվել է սոցիալական ցանցերի, հեռուստաընկերությունների և ռադիոյի միջոցով: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում ATV, Armnews, Erkir Media հեռուստաալիքներով ՀԱԱՀ ընդունելության գովազդը եթեր է հեռարձակվել 48 անգամ՝ 48,48 րոպե տևողությամբ, իսկ Հայաստանի հանրային ռադիոյի FM 107.7 և AURORADIO FM 89.7 հաճախականությամբ՝ 51 անգամ՝ ընդհանուր 29,5 րոպե տևողությամբ:
- Կենտրոնի կողմից պատրաստվել են նաև ընդունելության վերաբերյալ գովազդային տեսահոլովակներ, բուկլետներ, դիմորդների մասնագիտական կողմնորոշման թերթիկներ, այցեքարտեր, ֆլայերներ և այլ նյութեր, կատարվել է տարատեսակ սերտիֆիկատների, շնորհակալագրերի դիզայնի մշակում և դրանց տպագրության կազմակերպում:
- Կենտրոնի միջամտությամբ ստեղծվել է 5 մասնագիտությունները ներկայացնող հոլովակ՝ ըստ ֆակուլտետների:
- 2020 թ. ընթացքում Facebook սոցիալական ցանցում Համալսարանի կայքէջում ստեղծվել և տարածվել են գովազդային արշավներ բակալավրի, մագիստրատուրայի և հեռակա ուսուցման ընդունելության համար:
- Հունիս–օգոստոս ամիսներին մշակվել են բոլոր մասնագիտությունները և ֆակուլտետները նկարագրող պաստառներ՝ թվով 39 հատ և տարածվել են Facebook սոցիալական ցանցում:
- Մայիս–օգոստոս ամիսներին ստեղծվել, YouTube-ում տեղադրվել և սոցիալական կայքերի միջոցով տարածվել են ուղեցույցներ՝ ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համագործակցությամբ կազմակերպված դասընթացի մասնակիցների համար Moodle էլ. ուսուցման հարթակից, ինչպես նաև համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար ZOOM հարթակից և ebuh համակարգից օգտվելու ուղեցույցներ (թվով 14-ը):
- Մայիս–հուլիս և սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Facebook-ում կազմակերպված գովազդային արշավների արդյունքում, այդ թվում՝ վճարովի, ավելացել է համալսարանի կայքէջի հավանումների թիվը, անհրաժեշտ տեղեկատվությունը հասցվել է թիրախային լսարանին, ապահովվել են այցելությունները համալսարանի կայքէջ: Տվյալներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակներում:

ՀԱԱՀ ֆեյսբուքյան պաշտոնական էջի հավանումների քանակը

31.12.2019 թ.	31.12.2020 թ.	Աճը նախորդ տարվա համեմատ
7910	11663	47 %

Համալսարանի 90-ամյակի համար ստեղծվել են տոպրակի և ծրարի, ինչպես նաև Facebook-ի շրջանակի դիզայններ, վերջինս չի տպվել: Մշակվել են սերտիֆիկատների և պատվոգրերի, համալսարանի ռազմավարական պլանի 2020-2024 թթ. դիզայնները: «Սերունդ» գինիների գովազդային վահանակը, բակալավրի և մագիստրատուրայի

ընդունելության վեբ բաններները՝ ըստ մասնագիտությունների, Սիսիանի մասնաճյուղի արտաքին ցուցանակը, 2 հատ տեխնոբաններ, ինչպես նաև տարեվերջյան համալսարանը գովազդող արտաքին բանների դիզայնները ևս մշակվել են կենտրոնի կողմից:

ՏՏ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ (ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ)

Ուսումնական գործընթացների կառավարման և կրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների դերի շարունակական բարձրացմանը զուգընթաց ՀԱԱՀ-ում օբյեկտիվ անհրաժեշտություն առաջացավ իրականացնել միջոցառումների մեծ համախումբ՝ ուղղված ՏՏ կառավարման ու Տեղեկատվական անվտանգության զարգացմանը: Այսօր ՀԱԱՀ-ում կրթության կազմակերպումը և կառավարումը իրականացվում են մի շարք տեղեկատվական համակարգերի միջոցով, ինչպիսիք են E-buh, moodle, Koha և այլն՝ ընդհանուր թվով 10-ից ավելի: Այս գործընթացների մեջ ուղղակի և անուղղակի ներգրավված են համալսարանի գրեթե բոլոր աշխատակիցները: Հետևաբար, Տեղեկատվական անվտանգությունը և տեղեկատվական գրագիտությունը վերաբերում են համալսարանում այս գործընթացներին մասնակցող բոլոր աշխատակիցներին, և իրականացվող միջոցառումները կազմակերպվելու են այդ աշխատակիցների մասնակցությամբ: Համալսարանում Տեղեկատվական անվտանգության խնդիրն առավել օբյեկտիվ բացահայտելու և հետագա քայլերի արդյունավետության համար 2020 թվականի օգոստոս ամսին կազմակերպվեց Աուդիտ՝ ուղղված ՏՏ և ՏԱ կառավարմանը:

Աուդիտորական աշխատանքները սկսվել են 10.07.2020 թ. (40 օր ժամանակահատվածով): Աուդիտորական ուսումնասիրությունների ընթացքում ՏՏԿ թիմն ունեցել է 4 հանդիպում, որից 2-ը առցանց zoom հարթակի միջոցով, 2-ը՝ համալսարանում, յուրաքանչյուրը մոտ 2 ժամ տևողությամբ: Քննարկումները և ստուգումներն ընթացել են բաց և թափանցիկ, իսկ համալսարանում առկա խնդիրների ու բացթողումների վերաբերյալ տրվել է ճշգրիտ բանավոր տեղեկատվություն, ինչի մասին արձանագրված է նաև Աուդիտորական հաշվետվությունում (որպես ուժեղ կողմ «Աուդիտի հետ ակտիվ և բաց համագործակցություն»): Հաշվետվությունը ստանալուն պես (ստացման ամսաթիվը՝ 16.10.2020 թ.) ՏՏԿ-ն ձևավորել է աշխատանքային խումբ՝ փաստաթղթում առկա կարծիքները և դիտարկումներն ուսումնասիրելու և դրանով պայմանավորված առաջիկա քայլերի հետ կապված աշխատանքային պլան ստեղծելու վերաբերյալ:

Աուդիտորական եզրակացության նախագծի վերաբերյալ ՏՏ կենտրոնը մանրամասն ներկայացրել է իր նկատառումները 11 էջանոց փաստաթղթով, որին հաջորդել է ևս 2 փաստաթղթերի կազմումը, որոնք իրենցից ներկայացնում են պլան-ժամանակացույց՝ ուղղված համալսարանում ՏԱ կառավարումն առավել արդյունավետ դարձնելուն:

Տեղեկատվական անվտանգությունը կարելի է իրականացնել ISO2701, CobIT ստանդարտներով, կամ որպես ելակետ կիրառելով միջազգային առաջավոր փորձը: Այս ստանդարտների ներդրումը պահանջում է բավական լուրջ աշխատանքային, ֆինանսական, տեխնիկական և այլ ռեսուրսներ: Այդ պատճառով ՏՏ կենտրոնը ձեռնամուխ է եղել ՀԱԱՀ-ում այդ ստանդարտների կամ դրանց որոշ ուղղությունների ներդրման իրատեսական մանրամասն ուսումնասիրման հնարավորությանը: Արդյունքում կունենանք առաջարկությունների աշխատանքային փաթեթ ներդրման համար առկա, պահանջվող ռեսուրսների և ներդրման հնարավորությունների վերաբերյալ:

Աուդիտորական հաշվետվության և մեր վերլուծությունների արդյունքում արդեն իսկ պատրաստվել են 2 փաստաթուղթ, որոնք իրենցից ներկայացնում են աշխատանքային պլան-ժամանակացույցեր, որոնցում հստակ նշված են ՏՏ և ՏԱ կառավարման կատարելագործման համար դիտարկված ուղղությունը, իրականացվելիք աշխատանքների համախումբը, ակնկալվող վերջնարդյունքները պատասխանատուներն և իրականացման ժամկետները:

ՏՏ և տեղեկատվական անվտանգության կառավարման կատարելագործման համար հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՏՏ կենտրոնի կողմից ստեղծվել են սերվերների անձնագրեր, որը իր մեջ պարունակում է սերվերի տեխնիկական բնութագիրը, կարգաբերումները և օպերացիոն համակարգը:
- Սերվերային սենյակում կատարվել է նոր ցանցի մոնտաժման և լարանցման աշխատանքներ, սերվերների տեխնիկական սպասարկում: Ստեղծվել է սերվերային հանգույցի տրամաբանական տոպոլոգիա:
- Մշակվել է սերվերային հանգույց մուտք գործելու և աշխատանքներ կատարելու կանոնակարգ-ընթացակարգի առաջարկ, որով պետք է որոշվի, թե ով, ում թույլտվությամբ և երբ կարող է մուտք գործել սերվերային հանգույց:
- Ներդրվել է Microsoft Active Director (AD) համակարգը, որը թույլ կտա իրականացնել համալսարանի օգտագործողների հաշիվների կենտրոնացված ղեկավարում, մշակվել է AD համակարգում օգտագործողների ստեղծման, տրամադրման, գաղտնաբառերի փոփոխման, օգտագործողների կասեցման կանոնակարգի առաջարկ:
- Մշակվել է նաև AD համակարգում օգտագործողների խմբային քաղաքականություններ, որոնք թույլ են տալիս օգտագործողների հաշիվները կառավարել ըստ խմբերի:
- Ստեղծվել է կայքերի տեղադրման և թարմացման աշխատանքների հերթականության և քայլերի հաջորդականության կանոնակարգ-ընթացակարգի առաջարկ:

ՀԱԱՀ ՏՏ կենտրոնի կողմից կատարվում է անվտանգության ապահովում, կառավարում, տեխնիկական սպասարկում, թարմացում և մոնիտորինգ ստորև նշված համակարգերի համար

Հ/հ	Համակարգի դոմեին/IP	Համակարգի նկարագրությունը
1	anau.am	ՀԱԱՀ պաշտոնական կայքէջ – wordpress համակարգ
2	ums.anau.am	Ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգ
3	library.anau.am	ՀԱԱՀ գրադարանի կայքէջ
4	koha.anau.am	ՀԱԱՀ գրադարանի էլեկտրոնային կառավարման համակարգ
5	mul2.anau.am	ՀԱԱՀ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ (Outsource)
6	elearning.anau.am	ՀԱԱՀ էլեկտրոնային ուսուցման հարթակ
7	old.anau.am	ՀԱԱՀ պաշտոնական կայքէջի հին տարբերակ–joomla համակարգ
8	webmail.anau.am	Պաշտոնական էլփոստի կառավարման համակարգ

9	student.anau.am	Ուսանողի անհատական ինտերֆեյս՝ ums.anau.am համակարգից սնվող (ավարտական փուլում է գտնվում)
10	persons.anau.am	Շրջանավարտների, դասախոսների և երախտավորների շտեմարան
11	files.anau.am docs.anau.am	Ֆայլերի կառավարման համակարգեր
12	agritalk.anau.am	Ջերմատան ավտոմատացված կառավարման ծրագրային ապահովում
13	wine.anau.am	Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի կայքէջ
14	laratest.anau.am	Բուհական գործընթացների և մարդկային ռեսուրսների կառավարման ավտոմատացման համակարգ ERP (գտնվում է ստեղծման փուլում) Laravel Framework, Voyager admin Package
15	career.anau.am	Շրջանավարտների և գործատուների տվյալների շտեմարան և կայքէջ (անջատված է)
16	tedx.anau.am	Tedex anau հարթակ
17	cpanel.anau.am	Հոսթինգների ղեկավարման համակարգ
18		Հեռախոսակայանի կառավարման ծրագրային ապահովում
19		Քննությունների թեստային եղանակով անցկացման համակարգ
20		Ինտերնետի և լոկալ ցանցերի երթուղավորումը կառավարող համակարգեր
21	Flexap	Աշխատակիցների հաճախումների կառավարման և մուտքի վերահսկման համակարգ (Outsource)
22		Մասնաշենքերի տեսախցիկների ձայնագրման և վերահսկման համակարգեր
23		Հաշվապահության սերվերային ու ցանցային համակարգեր (Outsource)
24		Microsoft Active Directory համակարգ
25	memorial.anau.am	ՀԱԱՀ հիշատակարան
26	journal.anau.am	Գիտական հոդվածների ընդունման և կառավարման ավտոմատացված համակարգ
27	examticket.anau.am	Քննություններին ուսանողների մուտքն ավտոմատ կառավարող համակարգ
28	admission.anau.am	Ուսանողների ընդունելության հայտերի լրացման ավտոմատացման համակարգ
29		Նոր 1C հաշվապահության համակարգ
30		VPN սերվեր

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում բաժնի կողմից կատարված աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

- Համակարգվել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի նախաձեռնությամբ և «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի աջակցությամբ սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման դասընթացը: Ծրագրին մասնակցել է 124 անասնաբույժ, հավաստագրվել են 67-ը:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ իրականացվել են «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման» երկրորդ միջոցառման շրջանակներում գյուղատնտեսական կոոպերատիվների նախագահների հավաստագրման նպատակով կազմակերպվող դասընթացները՝ 16 մասնակից:
- «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2019 թ. մայիսի 20-ից մինչև 2020 թ. ապրիլի 24-ը համակարգվել են ֆերմերների համար իրականացվող մեկշաբաթյա դասընթացները, որոնց մասնակցել է 175 ֆերմեր:
- Մասնագիտական կողմնորոշման նպատակով ՀԱԱՀ-ում շրջայցեր է կազմակերպվել Երևանի և ՀՀ մարզերի 12 դպրոցների ավելի քան 250 աշակերտների համար: Շրջայցերի ընթացքում աշակերտներին ներկայացվել են աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները և բուհի ընձեռած կրթական հնարավորությունները:
- Երևանի 3 դպրոցներում կազմակերպվել են ՀԱԱՀ մասնագիտական կողմնորոշման շրջայցեր:
- Կազմակերպվել է Հայաստան-Արցախ ZOOM կամուրջ «Գյուղատնտեսությունն այսօր» 4 վեբինարներից բաղկացած քննարկումների շարքը:
- Կազմակերպվել է «Ագրոխորհրդատվություն» վեբինարների շարք ՀԱԱՀ դասախոսական կազմի հետ:
- Կազմակերպվել են հանդիպումներ «Start with Coke 2020», «Ամերիա Սերունդ 2020» ծրագրերի ներկայացուցիչների հետ, ովքեր ուսանողներին ներկայացրել են ծրագրերը և իրենց ընկերություններում առկա թափուր աշխատատեղերը, մասնագիտական աճի հնարավորությունները և կարիերայի զարգացման հեռանկարները:
- «ՄԿՈՒ զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակներում Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Սիսիանի մասնաճյուղի դասախոսների համար բաց դասերի կազմակերպում՝ 8 մասնակից:
- ՀԱԱՀ-ի «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, մելիորացիայի և ագրոքիմիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի աշխատակիցների վերապատրաստում՝ 7 մասնակից:

- Իրականացվել է ՀԱԱՀ 2017-2019 թթ. ավելի քան 1500 շրջանավարտների շրջանում հարցման արդյունքների վերլուծություն: Վերջինիս ամփոփ տվյալները ներկայացված են գծապատկերում:



Գծ. *Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվի տեսակարար կշիռն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, %:*

- Թարմացվել է շրջանավարտների տվյալների բազան:
- Իրականացվել է Exit survey (2019-2020) ուստարվա շրջանավարտների հետադարձ կապի հարցում. բակալավր՝ 356, մագիստրանտ՝ 160:
- Ուսանողների և շրջանավարտների շրջանում ինֆորմացիայի տարածման անմիջական ու արագ կապի ստեղծման համար Facebook սոցիալական հարթակում ներդրված էլեկտրոնային հարթակին 2020 թ. դեկտեմբերի դրությամբ հետևում է 3618 անձ, իսկ հարթակի միջոցով տարածված հայտարարությունները հասանելի են 11 949 արտաքին շահառուների:

2020 թ. ընթացքում հարթակում հրապարակվել է տեղեկատվություն դասընթաց-սեմինարների, հանդիպումների և այլ հնարավորությունների, ինչպես նաև 1000-ից ավելի թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

- Գործընկեր կազմակերպությունների խնդրանքով աշխատանքի թափուր տեղերի վերաբերյալ հայտարարություններ են տեղադրվել և ուղարկվել շրջանավարտների անձնական էլ. հասցեներին: Արդյունքում ավելի քան 20 ուսանող ընդունվել է աշխատանքի:
- ՀԱԱՀ 22 երիտասարդ հետազոտողներ երկշաբաթյա վերապատրաստում են անցել Ղազախստանի ազգային ագրարային համալսարանի կողմից կազմակերպված Միջազգային ամառային դպրոց 2020-ի շրջանակում:
- ՀԱԱՀ 10 ուսանող մասնակցել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի, «Հայ կանայք

հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի և Չիլիի համալսարանի էներգետիկայի կենտրոնի կողմից կազմակերպված «Երիտասարդ մասնագետների խրախուսում՝ գյուղատնտեսական սննդի արժեքային շղթաների էլեկտրիֆիկացման և կայուն բիզնես մոդելների ստեղծման համար» 16-շաբաթյա դասընթացին:

- Coca Cola Hellenic Bottling Company ընկերության նախաձեռնած «Երիտասարդների զարգացում» ծրագրին մասնացել է ՀԱԱՀ 20 ուսանող:

Պրակտիկաների պլանավորում և անցկացում

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել են ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առկա ու հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի, Ա. Քոչինյանի անվան քոլեջի ուսանողների պրակտիկաները: 2020 թ. հունվար-մարտ ամիսներին բոլոր ֆակուլտետներից տարբեր արտադրական կազմակերպություններ պրակտիկայի են գործուղվել 113 մագիստրանտ, 770 ուսանող:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ 2020 թ. մարտից-հուլիս ընկած ժամանակահատվածում բոլոր պրակտիկաները համարվել են կայացած՝ ռեկտորատի նիստի 03.06.2020 թ. որոշմամբ (արձանագրություն թիվ 8):

2020 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել և անցկացվել են՝

- Առկա ուսուցման 13 մասնագիտությունների բոլոր ուսանողների նախաավարտական և 3 մասնագիտությունների՝ արտադրական պրակտիկաները:
- Հեռակա ուսուցման պրակտիկաները նշված ժամանակահատվածում համարվել են կայացած. ուսանողները ներգրավվել են պատերազմական դրությամբ պայմանավորված կամավորական աշխատանքներին:
- Մագիստրատուրայի առկա ուսուցման 11 մասնագիտությունների բոլոր մագիստրանտներն անցկացրել են իրենց գիտաարտադրական պրակտիկաները:
- Քոլեջի 4 մասնագիտությունների բոլոր ուսանողներն անցկացրել են նախատեսված արտադրական պրակտիկաները:

Պրակտիկաների անցկացման ժամանակացույցում տեղի են ունեցել որոշ շեղումներ՝ պայմանավորված համավարակի և պատերազմական դրության բարդություններով, սակայն 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում նախատեսված բոլոր պրակտիկաներն անցկացվել են պատշաճ մակարդակով: Պրակտիկաների ավարտից հետո ուսանողները ներկայացրել են հաշվետվություններ, որոնց պաշտպանություններն անցկացվել են ZOOM հարթակում՝ նախապես ներկայացված ժամանակացույցով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի և տարբեր արտադրական կազմակերպությունների միջև կնքվել է 15 հուշագիր, հետագա համագործակցության շրջանակում բանակցություններ են տարվել մի շարք արտադրական կազմակերպությունների հետ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 5 հուշագրեր և պայմանագրեր հետևյալ հաստատությունների հետ.

- Կրթական հաստատություն Բելառուսի պետական ագրոտեխնիկական համալսարան (Բելառուս),
- Նիկոլաևի պետական ագրարային համալսարան (Ուկրաինա),
- Օմսկի պետական ագրարային համալսարան (ՌԴ),
- CASCADE Membership statement,
- LOGO (Գերմանիա),
- Մոսկվայի տեխնոլոգիայի և կառավարման պետական համալսարան (ՌԴ):

ՀԱԱՀ-ն մասնակցում է Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի գյուղատնտեսական համալսարանների ասոցիացիայի (CASCADE) աշխատանքներին, որոնց շրջանակում պարբերաբար իրականացվում են հանդիպումներ և քննարկումներ: Այս տարի ՀԱԱՀ-ի Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի 4 ուսանող հաջողությամբ մասնակցել է CASCADE-ի կողմից կազմակերպված միջազգային տնտեսագիտական առցանց դպրոցին, որտեղ դասավանդվող 16 առարկաներից մեկը՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները էկոնոմիկայում և մենեջմենթում», մշակվեց և ներկայացվեց ՀԱԱՀ ջանքերով:

ԷՐԱԶՄՈՒՍ+ՀԳ1

2020 թ. Էրազմուս+-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 38 պայմանագիր, որոնցից 25-ը՝ նախորդ տարվանից, իսկ 13-ը՝ նոր: Ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է 32 համալսարանների հետ, ինչն աննախադեպ թիվ է: Հատկանշական է, որ ՀԱԱՀ-ի վաղեմի գործընկեր համալսարանների հետ կապը չի խզվում, բայց միաժամանակ ավելանում են նաև նոր գործընկեր-բուհեր (Շաբացի կիրառական գիտությունների ակադեմիա, Վալլադոլիդի համալսարան, Մալագայի համալսարան, Աթենքի գյուղատնտեսական համալսարան, Վալենսիայի պոլիտեխ-նիկական համալսարան):

Էրազմուս+ շարժունության տվյալներ

	Հաստատություն	Արտագնա	
		աշխատա-կից	ուսա-նող
1	Կլուժ Նապոկայի գյուղ. գիտ. և անաս. բժշկ. համալսարան, Ռումինիա		4
2	Թրոմսոյի համալսարան (Նորվեգիայի արկտիկական համալսարան), Նորվեգիա	1	2
3	Ալմերիայի համալսարան, Իսպանիա		3
4	Պիրեուսի համալսարան, Հունաստան		1
5	Պանթեոնի համալսարան, Հունաստան		1
6	Գայզենհայմի համալսարան, Գերմանիա	1	
	Ընդամենը	**2**	**11**





2020 թ. գործուղումների ոչ բարձր թիվը պայմանավորված է COVID-19 համավարակով, որի հետևանքով հետաձգվեցին աշխատակիցների և ուսանողների նախօրոք պլանավորված գործուղումները, չեղարկվեցին նախօրոք հայտարարված մրցույթները, հետաձգվեցին նաև ՀԱԱՀ ժամանումները: Էրազմուս+ՀԳ1-ի այն ծրագրերը, որոնց ավարտը նախատեսված էր 2020 թ. հուլիսը, երկարաձգվեցին մինչև 2021-ի ամառ:

ԷՐԱԶՄՈՒՍ+ՀԳ2 ԾՐԱԳՐԵՐ

Այս տարի ՀԱԱՀ-ն ունի 2 նոր Էրազմուս+ՀԳ2 ծրագրեր, որոնց աշխատանքները պետք է սկսվեն առաջիկայում: Դրանցից մեկն ուղղված է ակադեմիական մակարդակում օտար լեզվի, իսկ մյուսը՝ ճարտարագիտական ոլորտում կարողությունների զարգացմանը:

«Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում» (TOPAS) ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում 1 աշխատանքային հանդիպում է իրականացվել ԵՊՀ-ում: Հանդիպման ընթացքում քննարկվել է ծրագրի կատարողականը, մշակվել են հետագա քայլերը և այլ ծրագրային հարցեր: Ծրագրի շրջանակներում բենչմարքինգի միջոցով վերանայվեցին և արդիականացվեցին նոր՝ Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանն ու վերջնարդյունքները: Վերջնականացվեցին նաև MOOC-ի աշխատանքները, որոնք հասանելի են արդեն ուսանողներին և դասախոսներին: Ներկայումս աշխատանքներ են տարվում ձեռնարկի ամբողջականացման համար: TOPAS-ի ժամկետը երկարացվել է մինչև 2021 թ. հուլիսի 31-ը:

«Կենսաարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում գերազանցության հայկական ցանց» (AbioNet) ծրագրի շրջանակներում իրականացվել են հեռավար հանդիպումներ: Վերջնականացվեցին սննդամթերքի անվտանգության մագիստրոսական ուսումնական պլանն ու վերջնարդյունքները, մոդուլային ծրագրերը: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել լաբորատոր գույք՝ սննդամթերքի անվտանգության և որակի վերահսկման ուղղությամբ նոր լաբորատորիայի ստեղծման համար: 2020 թ. ապրիլին Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից անցկացվեց ABioNet ծրագրի մոնիտորինգ, որի արդյունքները դրական էին ՀԱԱՀ-ում կատարվող գործընթացների տեսանկյունից: Ծրագրի ժամկետը երկարացվել է մինչև 2021 թ. հոկտեմբերի 15-ը:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին: 2020 թվականին ՀԱԱՀ 1 աշխատակից մասնակցել է «Սննդի քիմիա և կիրառություններ» խորագրով միջազգային 22-րդ միջազգային գիտաժողովին (ԱՄԷ):

COVID-19 համավարակի տարածումով պայմանավորված՝ բազմաթիվ գիտաժողովներ և համաժողովներ կազմակերպվել են առցանց եղանակով.

- CASCADE կոնսորցիումի 10-ամյակին նվիրված առաջին միջազգային գիտական-գործնական գիտաժողով, որին մասնակցեց ՀԱԱՀ 1 աշխատակից;
- Ղազախստանի ազգային ագրարարային հետազոտական համալսարանի հիմնադրման 90-ամյակի շրջանակներում կազմակերպված միջազգային ագրոտեխնոլոգիական 5-րդ գագաթնաժողով, որին մասնակցեց ՀԱԱՀ 1 աշխատակից:
- Մոսկվայի Տեխնոլոգիաների և կառավարման պետական համալսարանի կողմից կազմակերպված միջազգային գիտագործնական գիտաժողով «Սննդային կենսատեխնոլոգիաներ. արդյունաբերություն 4.0-ի համար կադրերի պատրաստման նորարարական լուծումներ» խորագրով, որին մասնակցեց ՀԱԱՀ 1 աշխատակից:

Միջազգային շաբաթներ: 2020 թ. ՄԿԴ 4 և ՀԱԱՀ այլ ստորաբաժանումների ավելի քան 10 աշխատակիցներ պետք է մասնակցեին ՀԱԱՀ համագործակցող համալ-

սարանների կողմից կազմակերպվող միջազգային շաբաթներին: Սակայն COVID-19 համավարակի պատճառով բոլոր ծրագրերը հետաձգվեցին և դրանք տեղի կունենան անմիջապես իրավիճակի կարգավորումից հետո:

Վերապատրաստումներ: 2020 թվականին այլ ծրագրերով վերապատրաստման է մեկնել ՀԱԱՀ 4 աշխատակից.

- Մոսկվայի պետական համալսարանի Պարենային անվտանգության Եվրասիական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստում, որին մասնակցել է ՀԱԱՀ 2 աշխատակից:
- Ֆինանսների նախարարության և ԱՄԳ կողմից կազմակերպված "Gender Budjeting" թեմայով վերապատրաստում (Ավստրիա):
- The FAO-GSP Global Soil Saliinity Map (GSS map) ծրագրի ուսուցման դասընթաց (Թուրքիա):

Առցնաց վերապատրաստումներ.

- American Council-ի կողմից կազմակերպված բուհերի միջազգայնացմանն ուղղված վերապատրաստում, որին մասնակցել է ՀԱԱՀ 3 աշխատակից:
- Մոսկվայի պետական համալսարանի Պարենային անվտանգության եվրասիական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստում, Ձմեռային դպրոց. դեպքերի ուսումնասիրությունը՝ ուսումնական գործընթացի արդյունավետ գործիք, որին մասնակցել է ՀԱԱՀ 3 աշխատակից:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2020 թ. ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների ու հանդիպումների, որոնց գերակշիռ մասը՝ հեռավար եղանակով (պայմանավորված COVID-19 համավարակով):

Գործուղումներ (ուսանողներ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Էրազմուս+ ՀԳ1	11	46
«Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագիր	11	46
Praxx	2	8
Ընդամենը	**24**	**100**

Գործուղումներ (դասախոսներ և վարչական անձնակազմ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Էրազմուս+ ՀԳ1	2	20
Erasmus+ KA2 (ոչ համալսարանական ծրագրով)	1	10
Այլ	7	70
Ընդամենը	10	100

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԴ-ն նախորդ տարիների նման առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավոր բոլոր տեղեկությունները ՄԿԴ-ի կողմից տարածվում են սոցցանցերով և ՀԱԱՀ պաշտոնական կայքով:

Այս տարի առաջին անգամ ՄԿԴ-ի նախաձեռնությամբ ՀԱԱՀ-ն, որպես գլխավոր դիմումատու և համակարգող, կազմեց և ներկայացրեց 2 Էրազմուս+ ՀԳ2 CBHE ծրագիր: 2020 թ. մայիս-հունիս ամիսներին ՄԿԴ աշխատակիցների կողմից պատրաստվեց մեր համալսարանին համապատասխանող միջազգային դրամաշնորհային ծրագրերի բազա, մշակվեցին 5-6 տարաբնույթ նախագծի առաջարկներ (ուղղությունները՝ անասնաբուժություն, soft skills, կլիմայի փոփոխություն, կենդանիների էթոլոգիա, հեռավար ուսուցում) և աշխատանքներ տարվեցին արտերկրյա գործընկերներ գտնելու ուղղությամբ: Վերոհիշյալ ծրագրային առաջարկները պատրաստվել են տարաբնույթ դրամաշնորհային ֆոնդերի դիմելու համար. OIE, Visegrad+, Volkswagen Foundation, Norad, EIT Food և այլն: Ցավոք, հաշվի առնելով ամբողջ աշխարհում առկա համաճարակային իրավիճակն ու համալսարանների մեծ մասի՝ օնլայն հարթակ անցնելու հանգամանքը, միջազգային համալսարանները փոքր-ինչ պասիվ են նոր ծրագրերին մասնակցելու տեսանկյունից: Բացի այդ, շատ ծրագրերում Հայաստանը, որպես մասնակից երկիր, բացակայում է կամ հանվել է կազմված ցանկից: Օրինակ՝ NUFFIC-ի աշնանային մրցույթին ՀՀ-ն ընդհանրապես բացակայում է մասնակցելու իրավունք ունեցող երկրների ցանկից:

Այս տարի ՄԿԴ-ն էապես ընդլայնեց տարատեսակ դրամաշնորհային ծրագրերին դիմելու գործընթացը: Մասնավորապես, ՄԿԴ-ն կազմել է համապատասխան ծրագրային առաջարկ-փաթեթներ և դիմել է հետևյալ ծրագրերին.

- 2-ը՝ Էրազմուս+ CBHE՝ ՀԱԱՀ համակարգմամբ,
- Visegrad+,
- EIT Food ծրագիրը շահել ենք, սակայն ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության պատճառով ստիպված մերժեցինք միջոցառման կազմակերպումը,
- COIL ծրագիրը հաստատվել է և այժմ աշխատանքներ են տարվում գործընկեր ամերիկյան բուհ գտնելու ուղղությամբ, ընդ որում՝ ՀՀ-ից պետք է ընտրվեր 3 ծրագիր, և դրանցից մեկը ՄԿԴ-ի ներկայացրածն էր:

Այս տարի ևս դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվել է միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ տեղեկատվություն. տեղադրված 119 նյութերից 15-ը եղել են Էրազմուս+-ի մրցույթների հայտարարություններ, 13-ը՝ շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

Շարժունության յուրաքանչյուր մասնակից վերադարձից հետո լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրվող առցանց հարցաշարը, որով ՄԿԴ-ն վերհանում է շարժունության գործընթացի թույլ և ուժեղ կողմերը, վերլուծում արդյունքներն ու մշակում թույլ կողմերի վերացման ծրագրեր:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիտորինգն ու դրա արդյունքները՝ ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Ուսանողների և աշխատակիցների շրջանում բարձրացնել օտար լեզվի իմացության մակարդակը: Օրինակ՝ շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ:
2. Դասախոսների շրջանում ուժեղացնել միջազգային ծրագրեր կամ ծրագրային առաջարկներ գրելու կարողությունները: Դա անհրաժեշտ է այն տեսանկյունից, որ նեղ մասնագիտական ծրագրերին դիմելու դեպքում կարողանան կազմել և ներկայացնել ծրագրային փաթեթներ:
3. Ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա և տեղեկատվական նյութեր: Արտերկրից մարդիկ ցանկություն են հայտնում սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան:

S	W
• Միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածում • ՄԿԴ աշխատակցիների ակտիվ գործունեություն	• Օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների ոչ բավարար քանակ • Համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի, վարձավճարների բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • Ոչ բավարար սեփական միջոցներ տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար • Ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում
O	**T**
• Ագրարային ոլորտի միակ բուհը ՀՀ-ում • Ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից	• Ուսանողների թվի նվազում • Որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • Ֆորս-մաժորային իրավիճակներ (COVID-19) • Պատերազմի հետևանքով Հայաստանի՝ որպես անվտանգ երկիր կարգավիճակի թուլացում

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ուսանողական խորհուրդը 2020 թ. ընթացքում ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման, ուսանողներին ֆինանսական օգնությունների տրամադրման և անվանական կրթաթոշակների նշանակման գործընթացին, իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- Հունվարին Ագրարային համալսարանի ՈւՀԱ թիմը Սոչիում (ՌԴ) մասնակցեց ՈւՀԱ թիմերի «КиВиН-2020» 31-րդ միջազգային փառատոնին:
- Փետրվարին կազմակերպվեց Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ուսանողների արտադրանքի ցուցահանդեսը:
- Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ մարտ-հունիս ժամանակահատվածում բազմաթիվ ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, հանդիպումներ մշակույթի, սպորտի, գիտության և արտադրության ճանաչված գործիչների հետ կազմակերպվել են առցանց հարթակներում:
- Ապրիլին Flickr հարթակում ստեղծվեց ՀԱԱՀ ուսանողական խորհրդի պատկերասրահը:
- Սեպտեմբերի 28-նոյեմբերի 9 ընկած ժամանակահատվածում, պատերազմա-կան դրության պայմաններում կազմակերպվել են սննդի և առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների հավաքներ, որոնք ուղարկվել են առաջնագիծ կամ բաշխվել Արցախից Հայաստան տեղափոխված կարիքավոր ընտանիքներին:
- Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել են թղթի թափոնի հավաքներ, որի վաճառքից գոյացած ամբողջ գումարը փոխանցվել է ՀՀ պաշտպանության հիմնադրամին:
- Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է զինվորական քողարկող ցանցերի գործում:
- Հաշվետու տարում ՀԱԱՀ ուսանողական խորհրդի մի շարք անդամներ մասնակցել են ինչպես կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված, այնպես էլ Արցախյան պատերազմի ժամանակ իրականացվող զանազան կամավորական աշխատանքների:
- Շարունակվել և ստեղծվել է համագործակցություն ՀՀ պետական և ոչ պետական բուհերի, Արցախի բուհերի ուսանողական կառույցների, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների հետ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համաձայն ՀԱԱՀ-ի հաստատված հաստիքացուցակի՝ 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանի և դրա մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական աշխատակիցների թիվը 1167 է, որից՝

1	Վանաձորի մասնաճյուղ	56
2	Սիսիանի մասնաճյուղ	52
3	Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ	22
4	Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղ	4

5	Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ	3
6	Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղ	34

Համալսարանի հիմնական փաստացի աշխատակիցների թիվը 996 է:
Տարվա ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրեր են կնքվել 306 անձի հետ, սեզոնային աշխատանքներ կատարելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքվել 65, շինվերանորոգման աշխատանքներ կատարելու համար՝ 8 անձի հետ:
Ստորև ներկայացված աղյուսակում խմբավորված է փաստացի աշխատակիցների թիվն ըստ գործունեության ոլորտների:

Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Հիմնական փաստացի աշխատողների թիվը
Վարչական	**107**
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ	**422**
422 դասախոսից 71-ը ներքին համատեղությամբ աշխատակիցներ են	
Ժամավճարային դասախոսներ	**17**
Դեկանատների, ամբիոնների և լաբորատորիաների ուսումնաօժանդակ անձնակազմ	**115**
Ուսումնական գործընթացի կառավարման վարչություն	**18**
Քոլեջ	**9**
Հենակետային վարժարան	**33**
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	**22**
Գիտության դեպարտամենտ՝ իր ստորաբաժանումներով	**4**
Գրադարան	**23**
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	**12**
Ագրոբիզնեսի դեպարտամենտ	**6**
Ագրոբիզնեսի դեպարտամենտի ժամավճարային դասախոսներ	**13**
Տնտեսական վարչություն	**134**
«Բալահովիտ» ՈՒՓՏ **«Ոսկեհատ» ՈՒՓՏ**	**23** **8**
Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տուն	**6**
«Ակունք» օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական կենտրոն	**2**

2020 թ. աշխատանքի է ընդունվել **439 մարդ**, որից **25-ը՝** երիտասարդ դասախոս, ազատվել՝ **513** մարդ:

Աշխատողների թիվը, աշխատատեղերի շարժը 2020 թ.

Աշխատողների թիվը տարեսկզբի դրությամբ	1241
Ընդունվել են աշխատանքի հաշվետու տարում	439

Ազատվել են աշխատողներ հաշվետու տարում, որից՝	513
• աշխատողի նախաձեռնությամբ	82
• այլ պատճառներով	426
• կրճատված	2
Կրճատվածներից վերականգնված	0
Աշխատողների թիվը տարեվերջի դրությամբ, որից՝	1167
• մինչև 35 տարեկան	85
• 35-55 տարեկան	221
• 55-ից բարձր	230
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որից՝	493
• դրսի համատեղությամբ	83
• ներսի համատեղությամբ	71
• չպաշտպանած	190
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներ (վարչատնտեսական)	11
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներ (ուսումնական)	39

ՀԱԱՀ **50** աշխատակից (նախկին և ներկա) պարգևատրվել է համալսարանական պատվոգրերով, **5** աշխատակից՝ շնորհակալագրով:

Համալսարանի վարկանիշավորման կարևոր ցուցանիշներից մեկն ուսանող-դասախոս հարաբերակցությունն է, որը հաշվարկվում է Common Data Set (CDS) Initiative-ի առաջարկած բանաձևով, U.S. News & World Report-ի պահանջն է բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ համալսարանների վարկանիշային ցուցակում ընդգրկվելու համար.

$$ՈԽ/Դ = [SF + SP/3] / [FFI + (FFN + FPI)/3],$$

որտեղ SF-ն առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվն է, SP-ն՝ հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվը, FFI-ն՝ դասախոսների թիվը, FFN-ը՝ համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը, FPI-ն՝ ժամավճարով աշխատող դասախոսների թիվը:

Այսպիսով՝ ՀԱԱՀ ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2020 թվականին, ներառյալ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը, կազմել է՝

$$ՈԽ/Դ = [2360 + 3370/3] / [350 + (143 + 30)/3] = 8,5:$$

Հարաբերակցությունը նույնն է երեք մասնաճյուղերը ներառելու դեպքում՝

$$ՈԽ/Դ = [2581 + 3858/3] / [370 + (143 + 104)/3] = 8,5:$$

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀԱԱՀ ֆինանսատնտեսական գործունեության 01.01.2020թ - 31.12.2020թ ամփոփ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների մնացորդը առ 01.01.2020թ. 887, 850 (հազ. դրամ)

N	Հոդվածի անվանումը	2020թ. հաստատված	2020թ. փոփոխված նախագիծ	2020 ՓԱՍՏԱՑԻ
	ՄՈՒՏՔԵՐ			
1	**Եկամուտներ պետական բյուջեից ստացված ֆինանսավորումից**	700,000	700,000	721482
2	**Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայություններից**	1,100,000	1,100,000	907063
3	**Այլ եկամուտ**	**320,000.0**	**320,000.0**	**354257**
3.1	*Դրամաշնորհային պայմանագրերից եկամուտներ*	150,000	150,000	169787
3.2	*Այլ աշխատանքներից եկամուտներ*	140,000	140,000	135715
3.3	*Պասիվ եկամուտներ (ներառյալ ԿԳՆ/ԱՆ սուբսիդավորում)*	30,000	30,000	48755
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	**2,120,000.0**	**2,120,000.0**	**1,982,802.0**
	ԵԼՔԵՐ			
1	**Աշխատավարձ `ե/հարկը ներառյալ**	**1,800,000**	**1,800,000**	**1,812,520**
2	**Կրթաթոշակ**	**35,000**	**35,000**	**40,658**
3	**Գրասենյակային, տնտեսական և կոմունալ**	**127,700**	**127,700**	**117,878**
3.1	***Գրասենյակային***	**8,200**	**8,200**	**8,369**
3.1.1	*էլեկտրոնային համակարգերի սպասարկում, mulberry*	1200	1200	1152
3.1.2	*Գրասենյակային այլ ծախսեր*	7000	7000	7217
3.2	***Տնտեսական ծախսեր***	**23,500**	**23,500**	**26,711**
3.2.1	*Վառելիքի ձեռքբերում*	13000	13000	13000
3.2.2	*Դեղորայքի ձեռքբերում*	1000	1000	573
3.2.3	*Տնտեսական ապրանքներ և նյութեր*	9500	9500	13138
3.3	***Կոմունալ***	**96,000**	**96,000**	**82,798**
3.3.1	*Գազ*	31000	31000	30462
3.3.2	*էլ. էներգիա*	48000	48000	36461
3.3.3	*Ջուր*	15000	12800	12898
3.3.3	*Աղբահանություն, դեռատիզացիա*	1000	3200	2827
3.3.4	*Կոյուղաջրերի և խողովակների մաքրում*	1000	1000	150
4	**Տպագրական աշխատանքներ, դիպլոմներ**		**5,000**	**4,129**
5	**Գրական. ձեռքբերում, բաժանորդագրություններ**	**1,000**	**1,000**	**1,880**
6	**Էլեկտրոնային կառավարման համակարգերի ձեռքբերում**	**14,000**	**14,000**	**8,744**
6.1	*Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրում*	7500	7500	6844
6.2	*ՄՈԿ էլ. կառավարման համակարգի ներդրում*	3000	3000	
6.3	*Հաճախումների կառավարման համակարգ*	1500	1500	
6.4	*Տեսահսկման համակարգ*	2000	2000	1900
7	**Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում**	**13,900**	**13,900**	**12,082**

7.1	*Գնումների իրականացման խորհրդատվական ծառայություններ*	5400	5400	4909
7.2	*Ֆինանսական կառավարման խորհրդատվություն*	1500	1000	1000
7.3	*Արտաքին աուդիտ*	3000	3000	2688
7.4	*Բուհի հավատարմագրում*	3000	3000	1985
7.5	*Այլ ծառայություններ*	1000	1500	1500
8	**Գործուղման և ներկայացուցչական**	**18,000**	**10,000**	**2,263**
8.1	*Գործուղման ծախսեր*	10000	5000	450
8.2	*Ուղևորափոխադրումների ծառայություն*	3000		
8.3	*Ներկայացուցչական ծախսեր*	5000	5000	1813
9	**Փոստային և կապի ծառայություններ**	**9,000**	**9,000**	**5,616**
10	**Բանկային ծառայության ծախսեր, ապահովագրության ծախսեր**	**1,000**	**1,000**	**528**
10.1	*Բանկի ծառայություն*	300	300	111
10.2	*ԱՊՊԱ , տեխզննություն և այլն*	700	700	417
11	**Կապիալ և ընթացիկ վերանորոգման ծախսեր**	**90,000**	**90,000**	**69,969**
12	**Գույքի և սարքավորումների ձեռքբերում, այդ թվում լաբորատոր**	**35,000**	**35,000**	**69,810**
13	**Համակարգչային տեխնիկա**	**10,000**	**10,000**	**10,369**
14	**Ներդրում ՈՒՓՏ (Բալահովիտ, Ոսկեհատ, Ակունք, Ապարանի քոլեջ)**	**40,000**	**40,000**	**39,909**
15	**Համաֆինանսավորման ծախսեր՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար**	**40,000**	**40,000**	**25,291**
16	**Սոցիալական և զարգացման ծրագրեր ուսանողների համար**	**5,000**	**5,000**	**1,390**
17	**Գովազդային ծախսեր, հոսթինգ**	**1,000**	**3,000**	**2,151**
18	**Միջազգ. կոնֆ. ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցություն**	**2,000**	**2,000**	
19	**Վճարումներ, պետական բյուջե (շահութահարկ՝ կանխավճար, ԱԱՀ, տուրքեր և այլն)**	**60,000**	**60,000**	**92,564**
20	**Այլ ծախսեր**	**10,000**	**10,000**	**14,312**
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	**2,312,600**	**2,311,600**	**2,332,064**

Դրամական միջոցների մնացորդը առ 01.01.2021թ. 538,488 հազ դրամ

2 գիտահետազոտական ինստիտուտների և 5 հետազոտական կենտրոնների ֆինանսական միջոցների մուտքեր և ելքեր

01.01.2020-31.12.2020թ

դրամ

Մուտք	148,363,935
Ենթակառուցվածք	99,133,000
Հավելավճար	12,384,935
Թեմա	36,846,000
Ելք	148,363,306
Աշխատավարձ	
Ենթակառուցվածք	70,269,245
Հավելավճար	12,384,935
Թեմա	28,115,468
Հիմնական միջոցներ	8,302,528
Տնտես, կոմունալ, նյութեր	27,670,130
Գործուղում	1,621,000

«Հ. Պետրոսյանի անվ. հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի 2020թ. ֆինանսական մուտքեր և ելքեր

01.01.2020-31.12.2020թ

հազ. դրամ

N	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաստատված տարեկան նախահաշիվ 01.08.2020	31.12.2020թ
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	**2986.5**	**2986.5**
	ԸՆԴԱՄԵՆԸ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՄՈՒՏՔԵՐ	**159557.7**	**177509.0**
1	**Պետ. բյուջեից մուտքեր, որից**	**109017.0**	**123065.1**
2	Գիտ. և գիտատեխ. գործ. բազային ֆինանս. ենթակառուցվածքի պահպ.և զարգաց. ծրագիր	89417.0	89417.0
3	Գիտ. և գիտատեխ. գործ. պայմանագ. թեմաների իրականացում	11600.0	25413.0
4	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրում	8000.0	6235.1
5	Այլ բյուջետային մուտքեր	0.0	2000.0
6	**Արտաբյուջեից մուտքեր, որից**	**50540.7**	**54443.9**
7	Արտադրական գործունեությունից մուտքեր	20000.0	22574.9
8	Համաֆինանսավորում	0.0	6000.0
9	Ֆինանս. ժամանակով. աջակցության վերադարձ	0.0	0.0
10	Միջազգային ֆինանսավորմամբ ծրագրեր	10540.7	9633.7
11	Խորհրդատվական գործունեությունից մուտքեր	0.0	5475.0
12	Այլ արտաբյուջետային մուտքեր	20000.0	10760.3
	ԸՆԴԱՄԵՆԸ ՍՊԱՍՎԵԼԻՔ ԵԼՔԵՐ	**160457.7**	**153399.7**
13	**Աշխատավարձ, ներառյալ հարկերը**	105086.8	104847.9
14	**Հիմնական միջոցների ձեռք բերում, որից**	7561.8	3929.0
15	Համակարգչային տեխնիկա	0.0	823.0
16	Սարքեր և սարքավորումներ, լաբորատորիաների վերազինում	3061.8	3106.0
17	Գույքի ձեռքբերում	4500.0	0.0
			0.0
18	**Նյութերի ձեռքբերում, որից**	8308.0	7818.1
19	քիմ. ռեակտիվներ	1500.0	0.0
20	պարարտանյութեր	1000.0	0.0
21	սերմեր	0.0	0.0
22	այլ նյութեր	5808.0	7818.1
23	**Գիտական միջոցառումների կազմակերպում, աշխատակիցների վերապատրաստում**	2000.0	1500.0
24	**Գրասենյակային եւ տնտեսական ծախսեր**	706.6	193.0
25	**Գործուղում եւ ծառայող. Շրջագայություններ**	1709.5	1459.6
26	**Տրանսպորտի պահպան. եւ վառելիքի գծով ծախսեր**	4500.0	3663.5
27	**Քաղ. Իրավական պայմանագրեր, գյուղ տեխնիկայի վարձակալություն**	5800.0	4000.0
28	**Կոմունալ վճարներ, որից**	14985.0	11615.8
29	Կապի գծով	560.0	462.1
30	Գազ	2500.0	1694.1
31	Էլ. էներգիա	11600.0	9228.6
32	Ջրի գծով վճարումներ	250.0	150.0
33	Այլ կոմունալ վճարումներ	75.0	81.1
34	**Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով ծախսեր**	500.0	0.0
35	**Կապիտալ վերանորոգման աշխատանքներ**	0.0	0.0
36	**Հարկերի, տուրքերի եւ այլ վճարների գծով**	8500.0	8449.0
37	**Այլ ելքեր (նախորդ տարվա պարտքի մարում)**	800.0	5923.8
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	**2086.5**	**27095.9**

Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղի
2020թ. ֆինանսական մուտքեր և ելքեր
01.01.2020-31.12.2020թ

հազ. դրամ

	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի փոփոխված. նախահաշիվ	Հաշվետու ժամանակաշրջանի փաստացի
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	**1504.1**	**1504.1**
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	**36976.2**	**35490.5**
1	**Պետ. բյուջեից մուտքեր, որից**	**36976.2**	**35490.5**
2	Գիտ. և գիտատեխ. գործ. պայմանագ. թեմաների իրականացում	4800.0	4800.0
3	Գիտ. և գիտատեխ. գործ. բազային ֆինանս. ենթակառուցվածքի պահպ.և զարգաց. ծրագիր	30776.2	29044.5
4	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրում	1400.0	1400.0
5	Ախտահանիչ նյութերի փոխանցում	0.0	35.0
6	նյութերի փոխանցում ինստիտուտից	0.0	211.0
7	**Արտաբյուջեից մուտքեր, որից**	**0.0**	**0.0**
8	Արտադրական գործունեությունից մուտքեր	0.0	0.0
9	Նվիրատվություն / նվիրաբերություն	0.0	0.0
10	Այլ արտաբյուջետային մուտքեր	0.0	0.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	**37611.9**	**36396.4**
11	**Աշխատավարձ, ներառյալ հարկերը**	30776.2	31316.0
12	**Հիմնական միջոցների ձեռք բերում, որից**	822.0	822.0
13	Համակարգչային տեխնիկա	0.0	519
14	Սարքերի և սարքավորումների ձեռքբերում	0.0	0.0
15	Այլ գույքի ձեռքբերում	0.0	303
16	**Նյութերի ձեռքբերում**	1795.7	211.0
17	**Գրասենյակային և տնտեսական գծով**	63.0	18.1
18	**Գործուղում և ծառայող. շրջագայություններ**	350.0	347.5
19	**Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով**	490.0	330.4
20	**Կոմունալ վճարներ, որից**	1280.0	1320.6
21	Կապի գծով	135.0	147.0
22	Գազի, էլ.էներգիայի գծով վճարումներ	1100.0	1171.2
23	Ջրի գծով վճարումներ	45.0	2.4
24	Այլ կոմունալ վճարումներ	0.0	0.0
25	**Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով**	0.0	0.0
26	**Կապիտալ վերանորոգման աշխատանքներ**	0.0	0.0
27	**Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով**	35.0	30.8
28	**Այլ ելքեր / ՀԱԱՀ-ին պարտքի մարում/**	2000.0	2000.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	**868.4**	**598.2**

«Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղի 2020թ. ֆինանսական մուտքեր և ելքեր 01.01.2020-31.12.2020թ

հազ. դրամ

N	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի նախահաշիվ	Հաշվետու ժամանակաշրջանի փաստացի
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	**177.6**	**177.6**
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	**48808.0**	**52238.9**
1	**Պետ. բյուջեից մուտքեր, որից**	**38808.0**	**30506.0**
2	Գիտ. և գիտատեխ. գործ. պայմանագ. թեմաների իրականացում	0.0	0.0
3	Գիտ. և գիտատեխ. գործ. բազային ֆինանս. ենթակառուցվածքի պահպ.և զարգաց. ծրագիր	37608.0	29351.0
4	Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրում	1200.0	1155.0
5	Այլ բյուջետային մուտքեր	0.0	0.0
6	**Արտաբյուջեից մուտքեր**	**10000.0**	**21732.9**
7	**Արտադրական գործունեությունից մուտքեր**	**10000.0**	**7878.7**
8	Ֆին. ժամանակավոր աջակցություն	**0.0**	**13851.2**
9	Այլ եկամուտ	0.0	3.0
10	Այլ արտաբյուջետային մուտքեր	0.0	0.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	**47658.0**	**51460.4**
11	**Աշխատավարձ, ներառյալ հարկերը**	33338.0	33913.0
12	**Հիմնական միջոցների ձեռք բերում, որից**	4000.0	203.7
13	Համակարգչային տեխնիկա	500.0	0.0
14	Սարքերի և սարքավորումների ձեռքբերում	2000.0	75.0
15	Տրանսպորտային միջոցների ձեռքբերում	0.0	0.0
16	Ուսումնական գույքի ձեռքբերում	0.0	0.0
17	Այլ գույքի ձեռքբերում	1500.0	128.7
18	**Նյութերի ձեռքբերում, որից**	3000.0	895.2
19	քիմ. ռեակտիվներ	0.0	0.0
20	պարարտանյութեր	500.0	690.0
21	թունաքիմիկատներ	500.0	0.0
22	Այլ նյութեր	2000.0	205.2
23	**Գրասենյակային և տնտեսական գծով**	100.0	0.0
24	**Գործուղում և ծառայող.**	2600.0	1030.0
25	**Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով**	720.0	720.0
26	**Կոմունալ վճարներ, որից**	1400.0	1508.8
27	Կապի գծով	200.0	72.0
28	Գազի, էլ.էներգիայի գծով վճարումներ	600.0	177.0
29	Ջրի գծով վճարումներ	500.0	1259.8
30	Այլ կոմունալ վճարումներ	100.0	0.0
31	**Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով**	0.0	0.0
32	**Կապիտալ վերանորոգման աշխատանքներ**	0.0	0.0
33	**Քաղ. Իրավական ցորենի**	0.0	3742.0
35	**Ֆինանսական աջակցության վերադարձ**	0.0	7878.7
36	**Հարկերի, տուրքերի վճարներ**	2500.0	1569.0
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	**1327.6**	**956.1**

ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղի
2020թ. ֆինանսական մուտքեր և ելքեր
01.01.2020-31.12.2020թ

հազ. դրամ

N	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Հաստատված տարեկան նախահաշիվ	Հաշվետու ժամանակաշրջանի փաստացի
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	**47296.4**	**47296.4**
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	**91703.6**	**81350.0**
1	**Պետ. բյուջեից մուտքեր, որից**	**0.0**	**1247.3**
2	Բարձրագույն մասնագիտ. կրթ. ուսանող. նպաստ. ձևով ուս.վարձի փոխհատուցում		350.0
3	Բարձրագույն մասնագիտական կրթ. ուսանող. կրթաթոշակի հատուցում	0.0	0.0
4	Միջին մասնագիտական կրթ. ուսանող. նպաստների փոխհատուցում	0.0	897.3
5	**Արտաբյուջեից մուտքեր, որից**	**91703.6**	**80102.7**
6	Ուսման վարձերի գծով	91603.6	79549.0
7	Այլ արտաբյուջետային մուտքեր	100.0	553.7
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	**102000.0**	**71628.4**
8	Աշխատավարձ, ներառյալ հարկերը	68000.0	54172.6
9	**Հիմնական միջոցների ձեռք բերում, որից**	**15700.0**	**549.2**
10	Սարքերի և սարքավորումների ձեռքբերում	7000.0	549.2
11	Ուսումնական գույքի (այդ թվում գրականության) ձեռքբերում	5700.0	0.0
12	Այլ գույքի ձեռքբերում	3000.0	
13	**Նյութերի ձեռքբերում, որից**	**800.0**	**269.6**
14	քիմ. ռեակտիվներ	350.0	0.0
15	այլ նյութեր	450.0	269.6
16	Գրասենյակային և տնտեսական գծով	650.0	650.0
17	Գործուղում և ծառայող. շրջագայություններ	1500.0	638.0
18	Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով	2600.0	1728.5
19	**Կոմունալ վճարներ, որից**	**3450.0**	**3191.8**
20	Կապի գծով	1300.0	1605.2
21	Գազի գծով վճարումներ	1200.0	722.4
22	էլ.էներգիայի գծով վճարումներ	800.0	778.8
23	Ջրի գծով վճարումներ	70.0	21.6
24	Այլ կոմունալ վճարումներ	80.0	63.8
25	Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով	4200.0	
26	Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով	300.0	6136.5
27	Քաղ.իրավական պայմանագրերով վճարումներ	1000.0	1128.0
28	**Այլ ելքեր**	**3800.0**	**3164.2**
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	**37000.0**	**57018.0**

ՀԱԱՀ-ի Սիսիանի մասնաճյուղի
2020թ. ֆինանսական մուտքեր և ելքեր
01.01.2020-31.12.2020թ

հազ. դրամ

N	Դրամական միջոցների հոդվածների անվանումը	Տարեկան նախահաշիվ	կատարողական 30.12.20
	Դրամական միջոցների մնացորդը 01.01.2020	**17,294.3**	**17,294.3**
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	**52,500.0**	**53,194.8**
1	**Պետ. բյուջեից մուտքեր, որից**	**13,500.0**	**21,290.8**
2	Բարձրագույն մասնագիտ. կրթ. ուսանող. նպաստ. ձևով ուս.վարձի փոխհատուցում	7,100.0	13,210.0
3	Միջին մասնագիտական կրթ. ուսանող. նպաստների փոխհատուցում	5,900.0	7,909.8
4	Բարձրագույն մասնագիտական կրթ. ուսանող. կրթաթոշակի հատուցում	-	
5	Միջին մասնագիտական կրթ. ուսանող. կրթաթոշակի հատուցում	500.0	171.0
6	Այլ բյուջետային մուտքեր	-	
7	**Արտաբյուջեից մուտքեր, որից**	**39,000.0**	**31,904.0**
8	Ուսման վարձերի գծով	39,000.0	31,019.2
9	Այլ արտաբյուջետային մուտքեր	-	885.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ	**55,105.1**	**51,275.8**
10	**Աշխատավարձ, ներառյալ հարկերը**	38,000.0	39,660.8
11	**Կրթաթոշակի վճարումներ**	500.0	171.0
12	**Հիմնական միջոցների ձեռք բերում, որից**	**950.0**	**1,485.5**
13	Համակարգչային տեխնիկա	300.0	557.1
14	Սարքերի և սարքավորումների ձեռքբերում	500.0	271.5
15	Ուսումնական գույքի (մարզագույք) ձեռքբերում	150.0	656.9
16	**Նյութերի ձեռքբերում, որից**	500.00	303.4
17	այլ նյութեր	500.0	303.4
18	**Գրասենյակային և տնտեսական գծով**	700.0	203.7
19	**Գործուղում և ծառայող. շրջագայություններ**	1,500.0	717.0
20	**Տրանսպորտի պահպան. և վառելիքի գծով**	2,000.0	1,180.8
21	**Կոմունալ վճարներ, որից**	1,650.0	1,217.4
22	Կապի գծով	250.0	156.0
23	Գազի գծով վճարումներ	650.0	520.7
24	Էլ.էներգիայի գծով վճարումներ	400.0	311.3
25	Ջրի գծով վճարումներ	250.0	89.0
26	Այլ կոմունալ վճարումներ	100.0	140.4
27	**Ենթակառուցվածքների ընթացիկ նորոգման ու պահպանման գծով**	5,000.0	3,334.3
28	**Հարկերի, տուրքերի և այլ վճարների գծով**	1,805.1	1,830.8
29	**Ուս. ֆոնդ. երիտաս. ծրագիր և ուս. խորհուրդ**	500.0	
30	**Քաղ.իրավական պայմանագրերով վճարումներ**	1,000.0	827.3
31	**Այլ ելքեր**	1,000.0	343.8
	Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	**14,689.2**	**19,213.3**